Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

206.5
С-51

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Վասապուրականի — Վանայ նահանգի գլխաւոր
եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց

ԱՀԽԱՏԱՍԻՐԵՑ
ԳԷՈՐԳ ՇԷՐԵՆՑ

Գինն է 40 կ.

ԹԻՖԼԻՍ
Типографія т-ва «Веренчевъ и Каменмахеръ
Михайловск. пр., № 82. Телеф. № 852.
1902
Տպարան «Վերենցեւ եւ Կամենմախէր»

206.5
Շ-51

23 ՅԵՐ 2009
206.5
Ս-51
1688

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Տեղագրութիւն Վասպուրականի—Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց ..

ԱՅԺԱՏԱՍԻՐԵՑ

ԳԷՈՐԳ ՇԷՐԵՆՑ

ԹԻՖԼԻՍ

Типографія Т-ва «Верёичевъ и Каменмахеръ» ✻ Տպարան ընկ. «Վերիչև և Կամենմախէր»

Михайловск. пр., № 81. Телеф. № 852.

1902

2938

13 JUL 2013

Ձ06-51 4899-41
Ձ-51 Պրակտիկայի հր.
ՍՍ-3643 6/VII-81

Հայկական ԽՍՀ Գլխ. Գրադարան
ՀԱՍՀ-ՍՍՌ
Մ. Գ. Մեսրոպի անվան

4899
41

ՄԵԾ. Պ. Խ. ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

Բարեջան երեցփոխան Թանդոյեան Մ. Աստուածածին եկեղեցւոյ:

ՏՓԽՒ

Գրքոյկիս տպագրութեան համար մանաւորապէս Ձեր արած օժանդակութեամբն՝ պարտաւորացրիք ինձ, հրապարակային շնորհակալութեամբ շնորհակալ լինել Ձեզ:

Դուք՝ որ օրինակելի գործովդ կրկին քաջալերեցիք ինձ, ցանկալի էր հետեւողներ ունենայիք՝ նպաստելու հայ գրագէտներին իրանց ընտրած գործն շարունակելու:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՁԵԶ ԵՒ ԲԱՐԵԱՑՍՊԱՐՏ

Գ. Շ.

ՅԻՇԵԼԻՔ

Իմ սիրելի հայրենակիցներին եւ ազգայիներին

Տխուր հանգամանքների տակ՝ վտարանդուած լինելով մեր սիրելի բնավայրից, ապաստանելով ի Կովկաս ռուսաց ամեն ողորմած Կայսրութեան ապահով հովանաւորութեանն, անշուշտ չիպիտի մոռանած լինիմք մեր «Սրբավայրերն», մեր նուիրական ուխտատեղիքը որոնք՝ արդարև մեր մանկութիւնից սկսեալ տուել են մեզ շատ ու շատ հոգեկան, մտաւոր ու բարոյական օգուտներ, յիշեցնելով մեզ՝ մեր անցեալ պապերի փառաւոր և յիշատակաց արժանի գործքերն։

Ի նկատի ունելով այս՝ վստահացած և ձեր համակրութեանն. որքան ներում են ինձ իմ թոյլ ուժերս, աշխատասիրում եմ, տեղագրելով այդ Սրբավայրերն, յուսալով որ՝ դուք սրտի հաճութեամբ պիտի ընդունէք այս իմ փոքր ծառայութիւնը և, թերթատէք անգամ մի, հոգւոյն թռիչքով, մտախոհ երևակայութեամբ պահ մի թռչել ձեզ այն ծանօթ վայրերն և ապրել յուսալով՝ մինչ Իսրայէլի փրկիչն Աստուած և մեզ տայ այն բարեպատեհ ժամանակ՝ ցնկրկին տեսութիւն այդ Սրբավայրերի։

Ներեցէք ինձ՝ որ այս աշխատութիւնս նուիրել եմ ձեզ արդէն յայտնի մի հոյակապ հաստատութեան «Ս Սանդխտեան» օրիորդաց ուսումնարանի յիշատակին. որն Վանայ քնքուշ սեռի դաստիարակութեան առաջին վա-

ռարանն է եղել և, նորա Սանուհի օրիորդ Աննա Մունետիկեանի քաղցր անուանն, որն աւարտելով այդ ուսումնարանում, մի տասնեակ տարիից աւելի բարոյական մշակ դարձաւ իւր սեռի քնքուշ դասակարգին։

Թէ այս իմ դոյդն աշխատութիւնը չհամակրուի էլ շատերից, թէ սրանում գտնուած շատ պակասութիւնները նկատուած լինին, ես դարձեալ ինձ մխիթարուած եմ համարում, որ այսպէս ասած սուղ միջոցներովս համարձակուել եմ մեր սիրեցեալ բնավայրի ս. տեղիքն, վանքն ու մենաստանն, մատուռն ու եկեղեցին. ապատն ու անապատն գրաւոր յիշեցնել ձեզ, և իմ 'ի վաղուց անտի ունեցածս փափագն կատարել և, 'ի լոյս հանել մեր աշխահի բազմաթիւ Սրբատեղիքն։

Արդարև՝ շատ և շատ են մեր ցաւերն և բազմակողմանի, անփոխարինելի մեր կորուստն, բայց և այնպէս շատ պիտի լինի և մեր համբերութիւնը, համբերել ու տոկալ, յուսալով ապրել յուսով սպասել և չ՝մոռանալ Բնավայրում թողուցած մեր արենակիցն ու ազգակիցն, հայրն ու մայր, քոյրն ու եղբայրը որոց հետ մէկտեղ ողբացինք ու լացինք, վտարանդեցանք մեզ վրայ հասած այն սև օրերում, վերահաս վտանգների դառն ժամանակներում։

Դ. Գ. Ը.

ԶՕՆ ՅԻՇԱՏԱԿԱՑ

Վանայ «Ս. Սանդխտեան» օրիորդաց ուսումնարանի եւ Նորա Սանուհի օր. Աննա ուսուցչուհւոյ Գ. Մունետիկեանցի որն ծնաւ ի Վան եւ հանգեաւ 'ի Տփխիս 'ի 22 դեկտ. 1896 ամի։

«Ս. Սանդխտեան» օրիորդաց ուսումնարանի գոյութիւնը Վանում սկսուել է 1870—71 թուականներին, մտածուած նախ՝ Կ. Պոլիս և ապա գործադրուած Վան, ներկայ Վեհափառի պատրիարքութեան օրով։ բաց ես սկսում եմ նախ հանգուցեալ օրիորդի կենսագրութիւնից մի քանի հարևանցի գծեր և ապա միւսի հաստատութիւնից։

Օրիորդ Աննա Գասպարեան Մունետիկեանց ծնուել ու ապրել է Վան քաղաքի այգեստանեայց հռչակաւոր Խաչ-փողոցի իրանց սեպհական տան. հինգերրորդ որդի Գասպարի։ Նոցա բուն տոհմական անունն է եղել Քէտօեանց, մի ճոխ և հարուստ գերտաստուն, դարոյս սկզբից դաղթուած անձաւացեաց գաւառի խոշապ աւանից, մի ինչ որ քուրտ ցեղապետի և նոցա մէջ մտած սպառնական վարմունքի պատճառաւ։ Գասպարը երիտասարդ հասակում մեռնելով, նորա այրին, Խանումը ենթարկւում է հինգ անչափահաս որբերի ծանր հոգադարութեան տակ, բայց որպէս կին ժրագլուխ՝ խիստ տնտեսութեամբ պահ-

պանում է դոցա. հոգում է նոցա թէ բարոյական և թէ նիւթական անհրաժեշտ պէտքերն։ Օրիորդի մանկական անունը Ղևոնդ է կանչուել և նրանից մեծին՝ Վարդան. մինչ 7—8 տարեկան հասակում հագնուած են եղել տղի շորերով և, որպէս ժիրաբրանեակներ մանկամարդ այրի մօրն, դուրս ներս են արել տան պէտքերն հոգալում և միևնոյն ժամանակ հետամուտ են եղել ուսանելու, թաղի հասակակից մանկանց հետ շարունակաբար դիմել են ս. Յակոբայ ծխ. դպրոց։

Չնայելով այն տխուր հանգամանքներին որին ենթարկուել էր այրի տ. Խանումը, հոգալով որբերի նիւթական պէտքերն, տեսնելով փոքրիկ Աննայի աչալրջութիւնն. մտածում է առաւելապէս նորա բարոյական կրթութեան համար. որին և օգնում է ժամանակը նոր յոյսով։

Բայց ուր սովորէր փոքրիկ Աննան, այրուոյն վերջի մխիթարանքն, բարեբաղդաբար 1870—71 թուականներին, Կ. Պոլսում, ներկայ Վեհափառի պատրիարքութեան օրերում և, Նորին Ս. Օծութեան Ս. ցանկութեան համաձայն, Վանում օրիորդաց ուսումնարան բանալու հարց ու խնդիրն իրականանում է օժանդակութեամբ Պոլիս գտնուող Վանեցի վաճառականաց մեծ. պ. պ. Վ. Պապիկեանի, Փէհրեզեանի Գ. Գափամաջեանի և նշան էֆ. Չիրուանեանի և այլոց. աւագ ուսուցիչ նշանակելով բազմաշխատ տէր Դիոնէսիոս աւ. քահանայ Արդամեցեանց, որին և գրում է Վեհափառ Հայրիկը հետևեալն որպէս յանձնարարական։

«Ձեզ կյանձնեմ «Ս. Սանդխտեան» օր. ուսումնարանի փափուկ պաշտօնն, թէև տակաւին խոպանացած և կորթացած մի երկիր է Վանը սակայն մեծ յոյս ունեմ ձեզ վրայ, որ ձեր խուսին ու ձևիչը պիտի պեղ է պիտի հերկէ ու մշակէ մեր հայրենիքի ապառաժոտ հողն և այլն...։»

Այդ միևնոյն թուականներում, վանում և կազմուելով

մասնաւոր հոգաբարձութիւնը կանոնաւորապէս և փառաւոր հանդիսիւ բացւում է «Ս Սանդխտեան օր. դպրոց, առաջին վառարան և կրթարան վասպուրականի քնքուշ սեռի ապագայ մայրերի բարւոք դաստիարակութեանն։

Բայց ինչպէս ամեն տեղ, նոյն և Վանում, այդ դեռ մթին ժամանակի իգական սեռի դաստիարակութեան հոգս նոր ինորոյ էր զարթնում և, ամեն ոք ծնողը նոր էր զգում իւր դստեր կրթութեան անհրաժեշտութիւնն համոզում և յօժարութիւն պէտք էր աւելի նախապաշարեալ ընտանեաց, հարց ու մարց առաջին քայլն անել փշոտ ճանապարհի վրայ. իւր երես կապած աղջիկն թողուլ ազատ, երթ և եկել, ուր—դպրոց, ուսումնարան, դուրս դալ, սթափուել տգիտութեան խաւար մթնոլորդից։

Իսկապէս շատ քիչ ծնողաց է յաջողվում դուրս դալ այն մթին զաղափարից, կարևորութիւն չ'տալ փտած համոզումների, ծուռ նկատողութիւնների, շտապել. օգուտ քաղել այդ առաջին յեղաշրջումից. համակերպել ժամանակի պահանջին և բաղդաւորացնել իւր աղջիկ զաւակն, նորա ապագանը դէթ բարոյական օժիտով մի։ Այնպէս որ բացման առաջին թուականին աշակերտուհիները մի աննշան թիւ են կազմում և այդ փոքրաթիւումն է լինում մի կարդ այն առաջին ուսանողուհիներից, իրանց յառաջդիմութեամբ անուանի օր. օր. ի Զալչեան (տիկին խ. էֆ. Խրիմեան) Մ. Պապիկեան .Ե. և Մ. Գրիգորեանները Ան. Պապիկեան և ի վերջոյ հանդուցեալ օր. Աննա Մունեատիկեան, որն ընկերանում է նոցա 1874—75 թ. ինքնաբերաբար մտնելով այդ լուսոյ վառարան. օրից օր գրաւելով թէ արժ. աւագ ուսուցիչ քահանայի, թէ հոգաբարձութեան և թէ ընկերուհեաց ջերմ համակրութիւն. ունենում է բարի անուն ու համբաւ։

Եւ որովհետև «Սանդխտեան» ուսումնարանը տակաւին չունէր իւր հաստատութեան պատկանեալ վայրն, նա առաջին անգամ բացուեց Մանուկեան Ստեփան աղայի տան. ապա Մսրկեանց (խաչ-փողոցի կենդրոնում). ապա Աջէմեանց և ապա Թէրզի Բազիկեանց տներում. մինչ նորա Վեհափառ հիմնադրի բազմաշխատ գործունէութեան շնորհիւն. ձեռնատու բարերարաց օգնութեամբ. մասնաւորապէս ազգիս մեծ բարերար հանուցեալ աղա Մկրտիչ Սանասարեանից նուիրուած մասնաւոր գումարովն ուսումնարանը 1882—83 թ. ունեցաւ իւր սեպհական տուն ու տեղ, յատուկ շէնք. Նորաշէնու թաղ Ամերիկեան գաղութների դրացութեան մօտ. այն բարձրահայեաց պարտեզի կենդրոնում կառուցուեցաւ ներկայ երկյարկանի «Ս. Սանդխտեան» օր. գպրոցը։

Ինչպէս առաջին հաստատութիւն Վասպուրականի քնքուշ սեռի դաստիարակութեան. »Սանդխտեան ուսումնարանը հանրային համակրանք վայելեց։ Տարեկան հարցաքննութիւնները աւելի փայլուն և արդիւնաւոր էին. հանդէսները պարգևաբաշխութիւնները լինում էին միշտ հրապարակական, որոց խոս և հանդիսատես ոչ միայն հայ երկսեռ բազմութիւնը, այլ և օտարազգիք, պաշտօնական անձինք, դեսպանները ցանկութիւն էին յայտնում ներկայ լինելու և լսելու Վանայ ապագայ մայրերի դրական մրցումներին, բանախօսութիւններին, երգերին և խօսուածքներին։ Ահա այդ հասակակից աշակերտուհիների թիւմն էր հանդուցեալ օր. Աննան, իւր ընկերուհեաց հետ, ի փոխարէն իւր ուսման, իւր առաքինի վարք ու բարքին հետ ստանում էր առաջին կարգի մրցանակներ, գրքեր և խաչ նշաններ գովական վկայագրով։

«Սանդխտեան ուսումնարանը թէև այդ թուականներին չունէր դասարանական ներկայ որոշ ուղղութիւնը.

բայց և այնպէս ունէր դասակարգեր և բաժանմունքներ. ունէր իւր բաւարար ուսումնական ծրագիրն։ Դասախօսվում էին հայերէն (Գրա. աշխարհարար) զոհացուցիչ կերպով. կրօնագիտութիւն աւելի ընդարձակն, թուաբանութիւն, պատմութիւն (ազգ. և ընդհանուր), գիտութեանց տարբերական մասերը, աշխարհագրութիւն. ձեռագործ, կար ու ձև և երգեցողութիւն. համարձակ կասենք՝ որ իւր Վէհ հիմնադրի փափագին համաձայն, ուսումնարանը պատրաստում էր ոչ այնքան մօգնի ուսանողուհիներ, որքան տնտեսագէտ, հլու ու հնազանդ, ապագայ մայրեր և դաստիարակչուհիները։ Առաջին և երկրորդ շրջանի ընթացաւարտները հրապարակական հարցաքննութիւնից վերջ. 1881—82 թ. ստանալով պատշաճի վկայական, մեկնեցան ուսումնարանից, սերտ կապ ունենալով այդ սրբավայրի հետ, որոց թիւմն էր և հանդուցեալ օր. Աննան։ Նոյն 1882 թ. ուսումնական տարւայ սկզբից նա նշանակուեցաւ ուսուցչուհի նախ՝ իւր սիրեցեալ մայր վարժարանում, ապա Նորաշէն եկեղեցւոյ օրիորդաց դպրոցում. որ տեղ առաջին անգամ պատեհութիւն ունեցայ ծանօթանալու նրան և նրա ընկերուհիներին։

Այնուհետև մեր յարգելի ուսումնաւարդ օրիորդները. թիւով տաս. անկասկած ուխտեցին կրթիչ դաստիարակներ լինել. նուիրուելով Բնավայրի իգական սեռի դաստիարակութեան սուրբ գործքին և նոցանից ոմանք՝ դեռ շարունակաբար վարժուհի մնալով, երկար տարիներով տքնել ու աշխատել են իգական սեռի դաստիարակութեան գործը յառաջ տանելու։

Այսպէս ուրեմն «Սանդխտեան ուսումնարանը իւր անդրանիկ սաներից տալով մեզ իւր առաջին երեխայրիքն, քիչ թէ շատ բարոյապէս զարգացած, ժրաջան օրիորդները-ուսուցչուհիք, Վանեցիքս այդ ու իրաւամբ պարծենում էինք որ՝ ինչպէս ասում են, մեր իղոմն օծում

էինք մեր գլուխը. առանց դրսից օգնութեան կանչելու. մեր տեղական, հաւաքական ուժովը կառավարում էինք մեր օրիորդական ամեն դպրոցները։ Եւ դա քիչ բան չէր Վանայ բազմահայ ժողովրդի համար, որոնք թէև 50 ական թուականից սկսեալ ժամանակի Մեծ Մարդու, Վարագայ Մեծ Վանահօր արծարծած բարոյակրթութեան քարոզների շնորհիւ, առել էին ուսման և դաստիարակութեան համ ու հոտ, բայց գա՛ միայն վերապահուած էր ժամանակի պատանիներին և երիտասարդութեան. իսկ իգական և մեր քնքուշ սեռը տակաւին մնում էր այն անձուկ շրջանակում. դեռ տգիտութեան խաւարում և դեռ ո՞չ ով մտածում էր նոցա, աղջիկների դաստիարակութեան հոդսը, ունենալ օրիորդաց կրթարան և արդիւնքը տեսնել մի տասնեակ ընթացաւարդ ուսուցչուհիներ, մասնակցելու իրանց եղբայրների կրթութեան և, 1882 թուականից սկսեալ տեղական ուսուցչական խումբը (բաղկացած 50—60 անդամներից) բաղդ ունեցաւ ընդունել և վարժուհի անդամներ. յարգելով և նկատի ունենալով նոցանից առաջարկուած հարցերն ու խնդիրները համահաւասար քուէ տալ։

«Սանդխտեանի նախկին սանուհիք ինքնայորդոր զգալով Վանայ իգական սեռի և ապագայ դաստիարակութեան անհրաժեշտութիւնն, ցանկանալով հանրային ինչ որ մի բարենպատակ գործ ստեղծել ու տեսնել աւելի համեստ շրջանում, յետ երկար ու բարակ չափ ու ձևի և խորհրդակցութեան, վերջապէս յաջողեցան 1890—91 թ. կազմել Վանայ այդեստան թաղում «Վանուհեաց» ընկերութիւն, որոց գլխաւոր նպատակն եղաւ կրթութիւն տարածելու ամեն խաւերի մէջ. հրապարակական դասախօսութիւններ և յորդորնել անե.լ մասնաւոր դասեր տալ կրօնից, բարոյականութիւնից, առանին տնտեսագիտու-

թիւնից և ամիս մի անգամ բանալ լսարան, հասոյթը յատկացնելով չքաւոր ուսանողներին։ Կատարուեցաւ այդ բարենպատակ գործը ունենալով բազմաթիւ անդամուհիներ և «Վանուհեաց» ընկերութիւնը կազմեց իւր պաշտօնական դիւանը Սանդխտեանի նախկին սան վարժուհիներից և օրիորդներից, ատենապետ ունենալով (համեստութեամբ յիշենք) տիկին Ի. Խրիմեան անենապետուհի ուսուցչուհի Եղ. Գրիգորեան. իսկ նախագահ՝ նոցա նախկին աւագ ուսուցիչ արժ. հայր Դեոնէսիոս քահանան։ Ինչպէս հաւ իւր ծագերով շատ յարմարութեամբ, անընդհատ գործելով չորս հինգ տարուայ ընթացքում, տալով Վանայ քնքուշ սեռին մտաւոր և բարոյական օրինակելի դասեր, նոր թարմ մտքեր, կրթիչ հրահանգներ մանկատածութեան, տնարարութեան և տնտեսական կառավարութեան մասին։

Ցանկալի էր մեզ տեսնել Վանայ առաջնակարգ դասակարգի կանանց և օրիորդաց հոծ բազմութիւն «Վանուհեաց» ընկերութեան ժողովասրահներում, որոնք ամենայն փափագանօք և ակնածութեամբ գիմում էին և լսում այդ դասախօսութիւնները, յորդորներ և հրանգները համեմած ազգային և ժողովրդական ընտրովի երգերով։ Ոչ մի նիստ չէր կայանում առանց մի հոգեորականի, հեղինակաւոր պաշտօնէի նախագահութեան, սկսեալ Վանայ առաջնորդ-տեղապահներից, աւագ քահանաներից, և հիւր վարդապետներից պիտի ներկայ լինէին այդ ամեն հրապարակական գումարումներին, որտեղից ամեն ոք գոհ սրգիւ էլ մեկնում էր։

«Վանուհեաց» ընկերութիւնը իւր գործունէութեան և դասախօսութիւններին մշտական մի կայան չունենալով, ազգային ամեն մի հաստատութիւնք և սրահները գահլիճները բաց էին նորա և հանդիսականների համար. բաւական էր որ նախապէս ստացուէր նորա դիւանի կամքն.

բայց գլխաւորապէս նոցա ժողովները գումարումներ և լսարանը կայանում էին Սանդխտեանի սրահում և «Գայիանեան» օրիորդաց ուսումնարանի դահլիճում, այս վերջինս գտնուելով Վեհափառ Հայրիկի տան մի որոշ մասում և նուիրուած լինելով թաղի աղջիկների դաստիարակութեան, աւելի մատչելի և յարմարութիւն ունէր, ուր անարգել ամեն ոք ցանկացողի համար հեշտ էր մտնել, տեսնել ու լսել կրթիչ հրահանգներ։ Բայց աւաղ ու ափսոս որ այդ մեծ հաստատութիւնը շրջապատի բոլոր մեծածախս շէնքերովն, 1896 ի հանրային կոտորածին հրոյ ճարակ դարձաւ քուրդ և թուրք խուժանից ինչպէս և Յայնկոյսների թաղն ամբողջ։

Ոչ մի աննպաստ դէպք չի պիտի կարողանային խոչընդոտ դառնալ մեր նորափթիթ սանուց օգտակար և համեստ ձեռնարկութեանն, եթէ հանրային այդ (1896) քստմնեցուցիչ արկածք, կոտորածն ու հրկիզութիւնք, *Թալան-Թուրան* վեր ի վայր չ՝վրդովէին մեր աշխարհի, մեր ոիրեցեալ բնավայրի խաղաղն ու հանգստութիւնը։ Ազգային ամեն տնտեսական, ուսումնարանական գործառնութեանց հետ դադարեցան և սոցա սկսած բարոյական գործ. զգալի կերպով վնասուեց և քնքնուշ սեռը. «Վանուհեաց» ընկերութեան այս ազգավնաս դադարումով դադարեցան, շատ գործող ձեռները։ Ստկայն մենք յուսով ենք, երբ դեռ կանգուն և կայուն է։ Սանդխտեան» ուսումնարանը, նորա հին և նոր սանուհիք պիտի շարունակեն իրանց քոյրերի սկսած այդ բարենպատակ գործը և վերականգնեն «Վանուհեաց» ընկերութեան ընդհատուած գործառնութիւն յօգուտ ծննդավայրի լուսաւորութեան։

Կարծես թէ Սանդխտեանի առաջին և երկրորդ շրջանի ընթացաւարդ սանուհիքը սկզբից իվեր նպատակ էին ընտրել, իրանց կուսական անբիծ վարուց հետ շաղկապել և բարոյական մի սուրբ և կրթիչ գործ, ուսուցչութիւն, նուիրուել ազգ. կրթութեան տարածման։ Նոցանից որպէս յայտնի ուսուցչուհիք, թուով տասն, ջերմ սիրով ուխտադրուած գեռ մնում են օրիորդ վարժուհիներ, չ՝նայելով այնմ՝ որ նոքա օժտուած են բնութեանտեսական ամեն յարմարութեամբ։ Դոցանից մինն էր և հանդուցեալ օր. Անոա Գասպարեան, որի համբաւն աւելի ժողովրդական էր դառնում, հրաւէր ընդունում էր այս և այն գպրոցական վարչութիւններից, զի իւր հեզ ու համեստ բնաւորութիւնն, եռանդոտ դասախօսութիւնն որն մանուկ ուսանողաց աւելի գրաւիչ էր։ 1884—85 թ. հանդուցեալը իւր պարապ ժամերն անցկացնում էր մասնաւոր դասերով իսկ 1886-ին նա հրաւիրուեցաւ Արարատ «Ս. Թարգմանչաց երկսեռ ուսումնարանին վարժուհի և շարունակեց անդ ամբողջ տասն տարի մինչ 1896 ի հանրային կոտորածին, միշտ եռանդով, միշտ բարի վարք ու բարքով։ Նա շատ պաշտօնակից ուսուցիչ և ուսուցչուհի ունեցաւ իւր հետ, տեսաւ ու անցուց շատ վարչութիւններ, բայց ինքը որպէս փորձառու և կրթիչ մայր, որպէս աշխատաւոր մշակ մնաց նոյն ուսումնարանում, ուր սովորում էին մօտաւորապէս 700—800 ի մօտ երկսեռ ուսանողք։

Վերջին տարիներում պաշտօնակցելով հանդուցելոյն հետ խոստովանում եմ որ իւր ակնածելի վարք ու բարքովն առաւելութիւն էր կազմում միւս պաշտօնակցաց վրայ, կշիռն ունէր իւր յայտնած մտքերը տասն և չորից աւելի պաշտօնակցաց վրայ, վայելում էր ամենի յարգն ու համարում և յարգվում էր։ Թողունք այն պարտաւորիչ դաոերը, առարկաները և ձեռագործ, 1894-ին նա իւր բնական ձիրք ու հանճարովն մտցրեց աղջկանց պարապմունքի մէջ նաև գորգագործութեան արհեստը, որն Վանայ համար դեռ առաջին փորձն էր. և յաջողվեց

լաւ կերպով։ Այս նոր արհեստին համար, չ՝մոռանանք յիշել որ նիւթը կարելոյն չափ մատակարարում էր պ, Ս. Տարբինեան։ Այս գորգագործութեան պարապմունքը տակաւին բացառիկ մի տարկայ լինելով, հազիւ թէ մի քանի հատ պատրաստուեցաւ 3—5 արշունի երկարութեամբ, շատ նուրբ և ճաշակաւոր, որոնցից մինը զնեց Վանայ նախորդ կուսակալ Բահրի փաշան ուղարկելով Կ. Պոլիս որպէս նմուշ Վանայ գործուածների, իսկ միւսները մնաց պ. Տարբինեանի մօտ։

Ճշմարիտն առած ծնողական գութ ու գորովով նա խնամում էր իրան յանձնուած մատաղ սերունդը, որպէս գորովագութ ծնող-հայրական մեծ խնամօք խնամում էր իւր փոքրիկ ընտանիք և եղբօր զաւակները։ Ողորմած էր դէպ որբն ու անանկն, միջնորդ էր անհրաժեշտների մէջ, այցելու մխիթարիչ էր ամեն վշտալի բարեկամաց համար, կատարելով նոցա շատ յանձնարարութիւնները։ Խնդրագրում էր այս և այն թաղական խորհրդաց, հապճեպս օգնութիւն հայցելով թշուառների և վերջինս թշուառ գաղթականների, որոնք վերջին ժամանակ գաղթեցին Վան։

Իւր հասակի ամենաթարմ ժամանակից ոկսեալ, չզիջանելով ծնողաց և բարեկամաց համոզումներին, նա անդրդուելի մնաց իւր ուխտից, փոխանակ մանելու ամուսնութեան լծին տակ, առաւելն էր ընտրել բարոյական լուծ քաշել իւր ընավայրի զաւակաց, աղջկանց դաստիարակութեան։ Նա սկզբից նուիրուած էր ուսանելու և ուսուցանելու։ Պատմում են որ հանդուցեալը դեռ ութ-տասն տարեկան հասակում, համոզում էր ընկերուհիներին, թողալ աշխարհ, գնալ ս. Խաչի Կուսանաց վանք-սար և այնտեղ եղնել, կուսակրօն դառնալ։ Այդ գաղափարը նրանում արգարանում էր այնու որ հանդուցեալը խիստ սիրում էր վանքերին այցելութիւն տալ, իսկ մերձակայ Վարագայ, ս. Գրիգորի և ս, Խաչի վանքերը նոցա համար ամենանուիրական ուխտատեղիքն էին, ուր անհրաժեշտ էր, միասին ընկերներով տարին երկու անգամ այցելել։

Տփխիս գալ, և մտնել ինչ որ մի ուսումնարան կամ արհեստանոց. զարգանալ ու տեսնել այն ամեն բարոյական առաւելութիւնները ու վայելքն, (ինչ որ ես արդէն պատմել էի) նոցա շատ վաղուց փափաքն էր և մտադրութիւն, սակայն աւաղ.... որ այդ կատարվում է մի շատ տխուր պարագայից տակ, մի դժբախտ և անձուկ ժամանակում։ Փախստական գաղթականների հետ տարադրվում է իւր սիրեցեալ ծննդավայրից և դա լինում է 1896-ի թուականից վերջ։

Վտանգի ամենասաստիկ ժամանակ ի միասին գուրս գալով ուսումնարանից, զգալով ապագայի ամեն ինչ թշուառութիւնք, ժողովեց իւր փոքր ընտանիքը ապաստանեցաւ ռուսաց հիւպատոսարան, ինչպէս ռուսահպատակ նոքա, և բազմաթիւ ընտանիք, ի բացակայութեան գօնսիլ պ, Վլադիմիր Մայեվսկու նոքա թարգման պ, Կ. Զիլինգիրեանից գտան ընդունելութիւն և ապահովութիւն. ի վերջոյ պ. Վ. Մայեվսկու պաշտպանութեան տակ (ինչպէս և շատերը) եկան Տփխիս, ուր որ էր օրիորդի եղբայր Մ. Մունեղիկեան։

1886 ի հոկտ. վերջերում հանդուցեալը և իւր ընտանիք բազմաթիւ Վանեցի գաղթականներով արդէն Թիֆլիզումն էին. բայց նա քիչ տեսաւ Կովկասի մայրաքաղաքիս ամեն պճրանքն, ու վայելք, խաւարից `ի լոյս առաջնորդուող անծանօթի պէս, չասաւ նա Թիֆլիզի համն ու հոտ. այն որ երևկայում էր նոր կեանք տեսնել և իւր ուսման ծարաւ նոր հագեցնել, չէր բնաւ մտաբերում որ մօտիկ դժբաղդութիւնն իւր ետևիցն է գալիս։ Որպէս կրակից ու սպանութիւններից ազատուածներ, նոր են զգում իրանց ցաւն ու վիշտ, վտարանդումն ընավայրից. անջատումն սիրելի քոյրերից և մտերիմներից, ընտանիքով ամբողջ հիւանդանում են. օրիորդի հիւանդութիւնն ծանր է լինում և մահաբեր. ի զուր են անցնում բժիշկ-

ների դեղն ու դարմանը, յետ 50 օրեայ տառապանաց. կնքում է իւր մահկանացու կեանք, վերջի բառն արդառանելով, Վան.... Վերջ է տալիս կուսական այն բազմաշխատ կեանքին 'ի 22 դեկտ. 1896 ամի։

Հանդիստ ու խաղաղութիւն քո խոնջեալ ոսկերացդ՝ ով իմ յարգելի բարեկամ և պաշտօնակից օրիորդ Աննա, հանդիստ ու երանութիւն քո գործունեայ, քո մաշուած ու կարօտացած, քո կուսական տնբիծ հոգոյդ ով աշխատասէր և բարոյականի մշակ։ Դու վաղաժամ միռար ու հեռացար մեզանից, Մեսուղիեան կայանն սիրեցիր գնալ. բայց քո յանկալի անունը, յիշատակայ արժանի գործերդ մեզ մօտ մնան անմոռաց, ոչ միայն մեզ մօտ, այլ Վասպուրականի համայն ուսուցչուհեաց. ուսանողաց աչերն անթաց և սրտերն անցաւ չ՝մնացին լսելով քո վաղահաս մահ։ Մտաբերելով քո օրինակելի վարք ու բարքն, համայնական մասնակցութեամբ կատարեցին հոգոյդ հանգիստն Արարք եկեղեցում, ուր այդ շատ անգամ էլ երգել էիր...։ Թէ մենք՝ վտարանդուածներս քո սգալի մահն ենք եղերգում, քո կենդանի և ազնիւ հոգինը թող անմռունչս ազօթէ ու բարեխօսէ Բարձրելոյն առջև փրկչին ըոլորեցունց, ամեն տարադրուածների, փախստական-գաղթականների համար և նոցա վերադարձին հայրենի հողն, տեսնել կրկին իրենց սիրեցեալ բնավայրն, վայելել արիւնով ներկուած հանդ ու հանդաստանի բերքն ու բարիք, որով միայն կարելի է սփոփել կրած վշաերից։

Ապա ամ և ընդունէ այս իմ դոյզն աշատութիւնը զոր քո ազնիւ և բարեբարոյ անուանն քո սիրեցեալ մայր վարժարան «Սանդխտեան» ուսումնարանին յիշատակայ Հօնէ քեզ միշտ բարեկամ և պաշտօնակից։

Գ. Գ. Շերենց

1688
98359
41

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց

ՎԱՆԱՅ *) ԲԵՐԴԱՔԱՂԱՔՈՒՄ ԵՂԱԾ ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

1 Ս. Սիօն եկեղեցի

Բերդաքաղաքի արևմուտեան ծայը, բերդի ստորոտում կառուցած է Ս. Սիօն եկեղեցին, շինուած բոլորովին հին ձևի եփածոյ աղիւսից և հիմն՝ կոփածոյ քարերից, յինուած տասներկու հաստաշրջանակ սիւնների

*) Ծանօթ. բերդաքաղաք ասելով պիտի հասկանամք Վանայ արևմտեան մասն՝ շրջապատուած կրկնակի պարիսպներով և աշտարակներով. որոյ հիւսիսային կողմը բնականին բարձրացած հուչակաւոր բերդը արևելքից արևմուտք 3/4 վերստաչափ տարածութեան պատում է քաղաք։

Բերդաքաղաքումն են կառավարչական և ազգային ամեն պաշտօնատեղիք, զօրանոց. կենտրոնական բանտ. բազմաթիւ վաճառատներ։ Դեռ մի դար յառաջ բերդաքաղաքում ապրել են մօտ երկու հազար տուն հայ բնակիչ. սակայն ներկայումս հազիւ նորա կէս մասն. չատերը այդեստան մասումն են հաստատուել։

Վան քաղաք և այդեստանը մեզ կենտրոն ունելով, շրջապատի Սրբավայրերը հեշտ կարող կ՝լինիք ըմբռնել ուր, որ կողմ և որ գաւառումն են։

Գան. Հայերենի գրադարան
Գոհ. Ոչ ոք, Ենթակոմիտեն
Հ. Մ. Ա Մ. Ս. ՍՈՒԱՍԻԱՆԻ ԱՌՎԱՆ

վրայ։ Ըստ հին ասացութեան՝ վերնածածք կամարները փուլեկած են տեղի ունեցած երկրաշարժից և սիւններից մի քանիսն էլ բոլորովին խորդակոծած։ Զէնքը ու յատակագիծն տարբերվում է հայկական հին և նոր ձևերի եկեղեցիներից. ոչ մի արձանագրութիւն չէ նշմարվում ոչ խորանների ճակատների վրայ, միայն արտաքին մուտքի դռան վերևումն ունի մի քանի տող նորից փորագրուած արաբական մի ինչ գրուածք, որն աւելի աղօթքի նմանութիւն ունի քան որևէ յիշատակարանի։ Ոմանք ենթադրում են որ՝ Ս. Սիօնը շինուած է յոյներից, նոցա՝ Վասպուրականին տիրելու ժամանակին տասներկու երը. դարում, բայց այդ մասին մեզ չէ պատահել մի յայտնի ապացոյց։

Այդ հին աւուրց հին Սրբավայրը ներկայումս անցել է տաճկաց ձեռք, որոյ բաղումն ունի մի խարխուլ մէդրէսէ (Աստուածաբանական դպրոց) և ընդարձակ աւազան, յորում բարեպաշտ միւսլիմները լողանում են։ Պատմողներից լսել ենք որ՝ դեռ մինչի դարոյս առաջին քառորդին, Ս. Սիօնին բազմաթիւ ուխտաւորք եղել են թէ քաղաքից թէ հեռու գիւղերից, բայց ներկայումս, ինչպէս երևում է հանգամանքից, արգելուած է։ Ս. Սիօնից հարիւ մի երկու քարընկէց՝ հեռաւորութեան, դէպ բերդի ստորոտն 1879—80 թ. պեղումներ գործելիս՝ յայտնուեցաւ դետնափոր մի մատուռ. որ տեղից դուրս բերուեցան սեղանի վէմ-քարն և մի քանի խաչքարեր, որոց արձանագրութիւնք անընթերցանելի մնաց։ Բայց ամենից հաւանական է որ Ս. Սիօնը շինուած լինի Դագիկ Արծրունիից։

---

2. Ս. Պօղոս եւ Պետրոս

3. Ս. Առաքեալ

Երկու միմեանց պատկից եկեղեցիներ, միայն միջնապատով մի որոշուած։ Հին, խիստ կրօնասիրութեան ոգինը ու եռանդը ինչպէս ամեն տեղ՝ նոյն և Վանում ունեցել է իւր ազդու նշանակութիւնն։ Ինչպէս ասում են վանեցիք, ժամը ժամի վրայ, ջուխտակ ժամատունը վէմ քարի վրայ. ի հնում մայր եկեղեցւոյ համբաւ է ունեցել։ Տաճարն ու դաւիթները հոյակապ և ամրակառոյց հաստատութիւն ունին, իսկապէս հայկական ձև ու ճաշակով, և յարմարութեամբ շինուած բոլորովիմբ սրբատաշ քարերից։

Երկուհարեան եկեղեցիքն բերդաքաղաքի կենտրոնումն են, թօփչու մէյդան կոչուած հրապարակում։ Դոքա աւելի հին ազնուականների եկեղեցիներ են եղել քան թէ հասարակաց, որովհետև ի հնում բերդաքաղաքի ազնուական և ականաւոր դասակարգը և ներկայումս իսկ հին տոհմականները այդ եկեղեցեաց ծխին են պատկանում։ Նորոգուած են $2^1/_2$ դար յառաջ տեղի ունեցած հանրային երկրաշարժի խորտակումից և, դեռ տաճարի արևելեան կամարի և ճակատի կետրոնում մնում են պատռուածքներ երկրաշարժից։ Ջուխտակ եկեղեցիների անշարժ կալուածները համեմատաբար՝ շատ են և աւելի արդիւնաւոր միւսներից և. ծուխներն էլ նմանապէս, բայց վերջին տարիներում, գուցէ խիստ պակասած լինին դոցա եկամուտն։ Ժողովրդոց մեծամասնութիւնն ցրիւ է եկել գանազան կողմեր, այգեստանի և և Աւանց արուարձանի մասերում։

Այս եկեղեցւոյ բաղումն է կառուցուել երկսեռ դրպրոց և վերջին տարիներում այստեղ փոխադրուեցաւ «Ղուշանեան» օրիորդաց ուսումնարանը։ Ս. Պօղոս և Պետրոս

և Ս. Առաքեալ եկեղեցեաց տօնը խիստ փառաւորութեամբ կատարվում է իրանց յատկացած տօնին, ուր խիստ բազմութիւնը լեցվում է նորա ներս ու դուրսն և վերջումն կատարվում է դպրոցական հանդէսը։

4. Ս. Նշան կամ Էջմիածին

Բերդաքաղաքի կենտրոնի եկեղեցին է. որ տեղ դարոյս սկզբից Վարագայ Ս. Նշանն-մի մասն խաչափայտից, ազատուելով քրդերի աւարից բերել են այս տեղ և. այդ անունով կոչվում է նաև Ս. Նշան եկեղեցի. ուր ամեն ուրբաթն օր լինում է հանդիսաւոր պատարագ և ուխտի են գալիս կանանց ստուար բազմութիւն։ Ուխտաւորաց թուումն են և բազմաթիւ թուրք, ասորի կանայք և մարդիկ, որոնք գիմում են խիստ ջերմեռանդութեամբ և լուսացվում են նորա օրհնեալ ջրովն։ Ս. Նշանի երկրորդ բագումն է ազգային առաջնորդարան, կրօնական. քաղաքական, տնտեսական և ուսումնական ժողովատեղիքն։ Տիրող աննպաստ հանգամանքների շնորհիւ, ազգ. առաջնորդարանը ներկայումս չունի այն հեղինակութիւն ինչ որ ունէր մի երկու տասնեակ տարի յառաջ։ Պատահել է որ՝ շատ անգամ տեղացի և գաւառացի թուրքեր ու քրդերը գիմել են այդ տեղ իրանցում տեղի ընկած ընտանեկան և ցեղային վէճերն խաղաղացնելու, նոցա շատ մի գաղաստանական և քրէական դատերն հանգուցեալ Պօղոս եպիսկոպոսի միջոցաւն է վերջացել, որին այնքան յարգում և պատվում էին նոյնիսկ պաշտօնականք Վանայ։

Առաջնորդարանի վերի յարկի ամբողջ երկու մասը 1890 ի սկզբներին շքեղապէս նորոգուեցաւ շնորհիւ նախորդ առաջնորդ հանգուցեալ Գրիգորիս արքեպիսկոպոս Ալէքթէջեանցի և ունեցաւ իւր պատշաճաւոր բաժանմունքներ, կահ ու կարասիք։ Հանգուցեալ Ալէքթէջեան արքեպիսկոպոսը նոյն նորոգումներ արեց և Վարագայ վանքում։ Ս. Նշան եկեղեցւոյ նաւակատեաց տօնը բացի ամեն ուրբաթ օրերից, այլև հանդիսաւոր կերպով կատարվում է Վարագայ և Խաչ-վերացի տօներին, ուր հաւաքվում են բերդաքաղաքի եկեղեցեաց ամբողջ միաբանութիւն և ժողովուրդը։

Ս. Սահակ եղեղեցի

Յանուն մեծ հայրապետին պարթեի

Ս. Սահակ եկեղեցին յանուն պարթև հայրապետին գտնվում է շուկայի հիւսիս-արևելեան կողմ, Բոյախանի թաղում, ուր հաճախում են աւելի արհեստաւորաց դասը մեծ պասի և մեծ տօներին աւելի մօտիկ լինելով ամեն կարգի արհեստաւորաց։ Թէև խիստ փոքրիկ է գաւիթն, բայց լայնանիստ ու հոյակապ տաճարն պատկառելի մի սրբավայր է, գիրքով և տեսարանով փառաւոր յորում պատարագում են միշտ։ Ս. Սահակ եկեղեցին ինչպէս ժողովրդական եկեղեցի իւր միջում ընդունել է շատ անգամ յայտնի քարոզիչներ. այդտեղ գտնուել են շատ անգամ Տէր Սարգիսեան Երիմիա և Սրուանցտեանց Գարեգին հանգուցեալ եպիսկոպոսներ խօսելով ընտրովի աստուածաբանական քարոզներ և պատմութիւնները մեծ Հայրապետի և նրա լծակից Ս. Մեսրովբի բազմաշխատ կեանքից և աշխատութիւններից. ափսոս, ոչ այլ ևս Գարեգինը և ոչ իւր քարոզն...

6. Ստեփաննոս

Պատկից և հարևան. Ս. Սահակ եկեղեցւոյ. խիստ պարզ և անշուք շինուածքով, դորան մատուռ կամ տաղաւարեկ

կարելի է ասել և շինուել է վերջի դարերում գուցէ կանանց աղօթատան համար ուր և խռնվում են ջերմեռանդ մամիկները։ Ունի միայն գաւիթ և մի սեղան պատարագելու։ Ս. Ստեփաննոսի տօնը կատարվում է իւր յատկացեալ տօնի օրն, ուր հաւաքվում է խիստ բազմութիւն երկուն սեռից էլ։ Ս. Ստեփաննոսի գաւիթը շատ անգամ ծառայում է որպէս ժողովասարահ զանազան արհեստաւորաց համայնքի։ Երբ Վանում պատահած լինի ազգային և համայնական ինչ և է շօշափելի խնդիր. բոլոր արհեստաւորաց համայնք և ընկերութեանց ներկայացուցիչները այստեղ են հաւաքվում իրանց խնդիրները և խորհուրդներ որոշելու կամ հանրագրելու. սակայն վերջի տարիներին. ինչպէս շատ տեղերի, նոյն և այստեղի սովորական հաւագումները արգելուեցան...։

Ս. Ծիրանաւոր եկեղեցի

Իսկապէս ծիրանիներով շրջապատուած մի պարտեզի մէջ, փոքրիկ տարածութեան վրայ զետեղվել է փոքրիկ տաճարն Ս. Ծիրանաւորի։ Մի նայէք այնքան փոքրկութեան, զօրեղ ու զօրաւոր է զօրութիւնն Ծիրանաւոր Աստուածամօրը, իւր հրաշքն տեսնուել է ամեն ջերմեռանդ հաւատացեալների վրայ անխտիր թուրքին և հային՝ որոնք խնկով ու ու մոմերով դիմում և լուացվում են նորա տաճարում բղխած խորի օրհնեալ ջրովն և գտնում են բժշկութիւն շատ տեսակ ցաւերի։ Ս. Ծիրանաւոր եկեղեցին հազիւ հինգ վայրկեան հեռաւորութիւն կունե- Ս. Սահակից։ Ամեն չորեքշաբթի օրերին անհրաժեշտ պիտի լինի ս. պատարագ. թէ մօտիկ թէ հեռու տեղերի երկսեռ ուխտաւորք գիշերանց գիմում են և կատարում իրանց ուխտն ոմանք գառ և ոմանք հաւ ու աքաղաղ մատաղելով։

Բերդաքաղաքամիջի հայոց հետզհետէ այգեստան մաս փոխադրվելուն և ցրուելուն պատճառաւ, այս երկու եկեղեցիք և թաղական խորհուրդները «միացեալ եկեղեցիք և թաղ. խորհուրդ» կոչուեցան, բայց երեսփոխանութիւնը մնաց առանձին պաշտօնէից ձեռքում, որովհետև երկու եկեղեցիքն ևս ունին բաւականաչափ կալուածներ, եկամուտ, որից մի մասը ինչպէս և միւս եկեղեցիներից, տարուց տարի յատկանում է բերդաքաղաքի Յիսուսեան «Մայր» վարժարանին։

Զուարճալի է Ս. Ծիրանաւորի ծառախիտ ու կանաչազարդ պարտէզ. որն ամառուայ շոգ ու տօթ օրերին Բերդաքաղաքացւոց բաւարար մի զբօսավայրն է ուր դուրս են գալիս երկսեռ բազմութիւն մաքուր օդ ծրծելու։

8. Ս. Տիրամայր եկեղեցին

Ս. Սիօնից յետոյ Ս. Տիրամայր եկեղեցին բերդաքաղաքի ամենահին եկեղեցին է հնական ձևովն ու որմերի հաստատուն հիմունքներովն, կառուցուած բերդին ամենամօտիկ ստորոտումն։ Սորա տաճարն աւելի հնութեան հետքեր ունի քան միւսներին, որմերի միջումն ունեցած գաղտնի պահարաններով և հաղորդակցութեան անցքերով։ Տաճարի աջակողմումն մօտիկ ժամանակաւ կառուցվել է մի երկրորդ և ընդարձակ տաճար յանուն հեշտակապետաց Գաբրիէլի և Միքայէլի։

Ս. Տիրամայր եկեղեցինը աւելի հարուստ է շարժական և անշարժ կալուածներով, թանգագին ոսկեայ, արձաթեայ և ակունքներով զարդարուած փոքրագրուած զարդ-սպասներով, որոնցից շատերին ականատես եղել ենք և շատ անօթներ էլ գուցէ անյայտացել են այս և այն եկեղեցպանի կամ երեսփոխի ժամանակաւ։ Չափազանձութիւն չ՝լինի, նորա եկեղեցական արձաթ սպասների

քանակութիւնը ու քաշն լտրերի են հասցրել նախնիք, ամենքը նրբին գրերով յիշատակագրուած, բայց ներկայ սերունդը շատ պակասացրել է այդ քանակը կամ եկեղեցւոյ աւելի անհրաժիշտ պէտքերին ծառայեցնելով և կամ ով ինչ իմանայ ինչ բանի... *) Մենք միայն այն գիտենք. դեռ մեր ուսանողութեան ժամանակից, որ Տիրամայրը՝ այս հին աւուրց եկեղեցինը թէ կայուածներով թէ ծխականներով ապահովուած էր։

Տիրամայրը եկեղեցւոյ բաղումն է կառուցուել դարոյս կիսից Վասպուրականի-Վանայ առաջին կրթարան «Յիսուսեան» մայր վարժարանը մեծ ջանիւ և աշխատութեամբ Վանայ առաջնակարգ իշխաններից և նոցա ղեկավարող հանգուցեալ Զարան բէկի Զարանեանց և իւր առևտրական ընկերութեան, որոյ և առաջին տնօրէն-ուսուցիչ նշանակուել է ընիկ Վանեցի հանգուցեալ մահտեսի Յովհաննէս վարժապետ և ըստ ոմանց Քօլօզ *) մականուանեալ. մի հայկաբան մարդ։

Թէ «Յիսուսեան մայր» վարժարանը և թէ Քօլօզ վարժապետը Վանայ այդ խաւար ու տգէտ թուականներին տուել են համայն վասպուրականցւոց իրանց առաջին և բաւարար արդիւնք. նորա աշակերտները, առաւելապէս Նորաշէնի կենտրոն թաղերում, բաւական թւով յայտնի են ազգային ամեն օգտակար և կենսական հարցերում։

*) Տիրամայրը եկեղեցում խիստ ակնածութեամբ պահվում է «Մմարխաս» կամ «Մալխաս» Ս. Աւետարան ձեռագիր և ծաղկանկար որն հիւանդների վրայ տարվում է։

**) Քօլօզ Մ. Յովհաննէս վարժապետը իւր ուսումն աւարտել էր Ս. Երուսաղէմի Ժառ. դպրոց. որտեղից հրաւիրվում է Վանայ «Յիսուսեան» վարժարանին ուսուցիչ. ունէր բազմաթիւ ձեռագիր գրուածներ զանազան նիւթոց վերաբերեալ, բայց ավաստս որ ապարդիւն են մնացել։

Մինչև 1863—64 թուականներին վարժարանը մնում էր տակաւին հին ուղղութեան, այդ նախաձեռի թուականից սկսեալ՝ նա մտաւ նոր, աւելի օգտակար և բարեփոխումների և ուղղութեան, ենթարկուեց աւելի հսկող պաշտօնէութեան շնորհիւ Կ. Պոլսեցի վիճակաւոր առաջնորդ հանգուցեալ Տէր Իգնատիոս արքեպիսկոպոսի (ապա պատրիարք Կ. Պոլսոյ), և նորանից ընտրուած բարեջան հոգաբարձութեանն։

Ապա 1863—64—72 թուականներին այդ հաստատեան մէջ, անդուլ և անձանձրոյթս գործում էր հանգուցեալ ուսուցիչ Սարգիս *) Բ. Գնունին թէ որպէս տեսուչ և թէ ուսուցիչ, ընիկ Էրէրին գիւղացի։ Այդ խաղաղ ու արդիւնաւոր թուականներում Յիսուսեան վարժարանը աւելի զգալի փոփոխութիւն կրեց և յառաջդիմութիւն արեց ապով յայտնի գործող և լուրջ երիտասարդութիւն իպէտս ապագայ գործունէութեան։ Այս վարժարանի ընդարձակ սրահումն էր որ՝ առաջին անգամ (Վանայ համար) տեղի ունեցան թատրոնական և զաւեշտական ներկայացումներ շարունակաբար (63—72) և ապա յետագայ սերունդը շարունակեց և այլ տեղեր մինչ գրէթէ 1885 թ. դարձեալ շնորհիւ և ղեկավարութեամբ հանգուցեալ Ս. Գնունւոյ։

Ուսումնարանի բարեկարգութեան հետ հանգուցեալ Գնունինը կազմակերպեց Վանում առաջին «Անդրանիկ» ընկերութիւն, որոյ նպատակ և գործն եղաւ ընթերցանութիւն, ազգ. ինքնաճանաչութիւն տարածել ժողովրդի զանազան խաւերում և, օգնել թէ դպրոցների և թէ թատրոնի զարգացման։

*) Հանգուցեալ Ս. Բ. Գնունինը իւր գրուածներով արդէն յայտնի է. նա Կ. Պոլիս աւարտելով իւր ուսումն՝ հրաւիրուեցաւ Վան. ապա անտի Ս. Էջմիածին ուր և թաղուեցաւ։

«Անդրանիկ» ընկերութիւնը և իւր գործն օրինակելի և օգտակար դառնալով Վանում. սկսուեց այնուհետև հետզհետէ և միւս եկեղեցիներում, թաղերում, ըստ դրամագրութեան ազգ. Սահմանադրութեան № յօդուածի կազմուել զանազան անուններով բարենպատակ ընկերութիւններ, որոց բոլորի միտք ու նպատակն էր ազգ. լուսաւորութեան, եկեղեցեաց, Վանօրէից և ուսումնարանաց հոգ տանել, կարօտ ընտանեաց խնամել և այլն բայց երկար չ'տևեց ընկերութիւնների կիրառութեան գործն ու շարունակութիւն. և ահա միջանկեալ դէպքերը սնոտի պատճառներով ընդհատեցին դոցա տևողականութիւն, այնպէս որ 1885—86 ից մինչ ց'ներկայս՝ բոլորովին դատարեցան գործելուց և ապարդիւն անցան մեր բոլոր յոյսն ու աշխատութիւնները։

«Յիսուսեան» վարժարանը ներկայ Վեհափառի Վանում առաջնորդութեան ժամանակ 18881—82 թ. 'ի հիմանց նորոգուեցաւ նոր և յարմարաւոր ձևի դասարանական բաժանմունքներով, հին շէնքին տեղ բարձրացաւ աւելի ճաշակաւոր երկյարկանի մի հոյակապ հաստատութիւն.

Երախտագիտութեամբ յիշում եմ այդ յայտնի հաստատութեան երախտիքն, որոյ մէջ աշակերտելու բաղդն եմ ունեցել իմ ժամանակակից ընկերներով։

9. Ս. Վարդան

Նոյն և բերդի մօտիկ ստորոտում կառուցուած է եկեղեցին յանուն մեծ սպարապետին Մամիկոնեան կարմիր վարդանայ, որ տեղ է և հայ մեծ նահատակի մասունքներից մի կտոր կամ ըստ ոմանց՝ ճկոյթն, բերուած Արտազու Ս. Թադէոս առաքելոյ վանքից։

Արդարև տեսք ու տեսարանովն էլ կարմիր է Ս.

Վարդան եկեղեցինը. տաճարն աւելի վայելուչ և գեղեցիկ. իսկ գաւիթն նոր ինորոյ նորոգուած յարմար յատակագծով, որոյ հարաւից բացուած պատուհաններից ցոլացած արևու ճառագայթները սփռուելով սեղանների վրայ, անդրադառնալով գաւթի տարածութեան մէջ, ամեն մի սուրբ առարկայքն երբներանգ գիւտերի մի տեսակ երևոյթ են ցոյց տալիս մարդուս, աչքերն են խրտխտացնում և միտք ու հոգինը փոխարկելով երևկայութեան աշխարհ և ուր, նահատակների արեան շիթերն են ցողել....

Ս. Վարդան եկեղեցինը թէև չունի բազմաթիւ ծխականք, սակայն իւր խնկելի անունը հեռուից ու մօտից բերում է իւր դուռն ամեն ճշմարիտ հայ քրիստոնեան, մանուկն, տղան ու աղջիկ, ծերն ու երիտասարդ կարօտիւ յիշում են կարմիր Վարդանին և հաւաքվում են այնտեղ աղօթելու։

Ս. Վարդան եկեղեցւոյ տօնախմբութիւնը կատարվում է այն յայտնի օր՝ բարեկենդանի հինգշաբթի. բայց թէ ինչ հոգեկան պատրաստութեամբ և ինչ հոծ բազմութեամբ արանց և կանանց, դպրոցական ներկայացուցիչների, ես չեմ կարող լիուլի պատմել, միայն կասեմ որ՝ Վասպուրականի մէջ ամենազլխաւոր տօնակատարութիւն և գլխաւոր հանդէսն է կատարվում այդտեղ նախօրօք պատրաստուած և խնամօք նախաձեռնութեամբ։

Այս եկեղեցւոյ բաղումն 1881-ին բացուեցաւ բերդաքաղաքի «Զուշանեան» աղջկանց առաջին ուսումնարան և յետոյ տեղի անձկութեան պատճառաւ, փոխադրուեցաւ Ս. Առաքեալ եկեղեցւոյ ընդարձակ բաղում և կայ մինչ ց'ներկայս։

Վանայ բերբաքաղաքում եղած եկեղեցեաց այս քանակութիւնն թող զարմանալի և շատ չ'թուի ընթերցո-

ղին՝ նայելով ներկայիս հայ ծխականների փոքրամասնութեան։ Բայց եղել է մի ժամանակ, դեռ մի դար յառաջ, երկրի անբարեկարգ և անապահով վիճակի դրութիւնից ստիպեալ՝ մօտ 2—3 հազար տուն հայերը առաւելապէս հին հարուստ տոհմականները իրանց ապահովութեան համար կիտուել են եղել այդտեղ։ Եկեղեցասիրութիւնը և կրօնական ջերմեռանդ ոգինը գրգռել ու համոզել է ամեն մի բարեպաշտ հայ մարդ, բարդել ժամն ու ժամատուն իրարու վրայ, կառուցանել եկեղեցիք միմեանց մօտ և առաւել փառաւոր կացուցանել Աստուծոյ տունն ու տաճարն։

Այո՛ խոստովանենք, որ Վանայ բերդաքաղաքի օդն ու ջուր զգալի անառողջաբար լինելով, դարոյս առաջին քառորդից սկսեալ շատերը տեղափոխուել են այգեստանեայց զանազան մասերում, նոր նոր ճաշակաւոր շէնքեր և այգիներ հաստատելով, այնպէս որ՝ մօտիկ ամայի դաշտերը ներկայումս ներկայացնում են մի խիտ ծառապատ անտառ, որոց մէջն են բազմաթիւ տներ, լայն ընդարձակ փողոցներով, երկու կողմերից կլկլացող առու առուակներով, համախումբ այգիներով և որթատունկ պարտէզներով, որոնցից մի մեծ և ընդարձակ մասը *նորատունկների* թաղ է կոչւում։

Առ հասարակ վանեցւոց եկեղեցասիրութիւնն, կրօնասիրութիւնը անուանի է. փոքրիկ, թօթովախօս մանկիկներից սկսեալ մինչ ծերուկ մամն ու պապ՝ կօշնակների ձայն լսելուն պէս, շտապում են իրանց պաշտելի վայրն։ Ինձ չէ պատահել տեսնել ոչ մի տեղ վանեցւոց—մասնաւորապէս Ցայնկոյսներցւոց և Նորաշէնցւոց—եկեղեցական կարգապահութիւնն ներդաշնակ երգեցողութիւնը. բայց ինչ օգուտ որ՝ տակաւին այդ կրօնի և այն եկեղեցւոյ, ազգի նահատակ ժողովուրդը մնում է անտէր ու անպաշտպան. Մի ինչ որ պաստօր կամ պատուելի. պեր-

դը-ֆրանսներ և կամ Ջնդօեանները օգտուելով այն խառն և անապահով դրութիւնից, շահագործում են խեղճ վանեցւոց այդպէս ասած՝ *անտէրութիւնն*, երկփեղկելով այն խոր համոզմունքն, քայքայելով շատ ջերմեռանդ ընտանեայ սէրն ու միութիւնն որ առ հայրենի կրօնն ու եկեղեցին է։

Եթէ 1896-ի հանրային կոտորածին աւարառութեանց և կոտորածի ժամանակ բերդաքաղաքի հայերը և եկեղեցիքն մնացին բաւականի ապահով դրութեան, դա մի բարեբաղդութիւն կամ նրբին քաղաքականութիւն էր և կամ շնորհիւ չէրքէզ հազարապետ Էմին բէկի արած պաշտպանութեանն, որն մի խումբ հետևակ զօրքով պաշտպանեց յարձակւող խուժանից։ Միայն մի քանի սպանութիւններ և գաղտնի կողոպտումներ պատահեցան։ Բերդաքաղաքի հայերը ի նշան իրանց երախտագիտութեան. ի վերջոյ արծաթեայ և ոսկեայ մի քանի թանգագին սպասներով յայտնեցին իրանց շնորհակալութիւն, յիշեալ չէրքեզ բէկին, որն այնքան բարի գտնուեցաւ յայտնի օրերում...

ՎԱՆԱՅ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՅԳԵՍՏԱՆ ՄԱՍՈՒՄ ԵՂԱԾ ԵԿԵՂԵՑԻՔ

10. Հայկավանից Ս. Աստուածածին եկեղեցի կամ Եօթն խորանի *ժամատուն*

Բերդաքաղաքից դուրս՝ հազիւ տասն վայրկեան հեռաւորութեան վրայ. կենդրոն դէպ այգեստան տանող երկու մեծ պողոտաների. խիստ յայնածաւալ գիրքով և տարածութեամբ և մօտիկ ընդարձակ գերեզմանատնով կառուցվել է Եօթն խորանի եկեղեցին կամ ըստ տեղացւոց՝ ժամատունն։

Ուրն հարիւր տարուայ հասնում է նորա առաջին

հիմնարկութիւնն, նորոգուած է 2½ դար յառաջ օգնութեամբ հին տոհմականների և ժողովրդոց։ Եկեղեցւոյ ընդարձակ գաւիթն թէև չունի ինչ որ մի պատշաճի շքեղութիւն, բայց կենդրոնի խորանի ոսկեզօծեալ խաչկալն առաջնապէս գրաւում է այցելուի ուշադրութիւն, որն մեծածախս մի պայծառազարդութիւն է խորանին։

Աւանդութիւնը պատմում է որ՝ հայոց մեծ նահապետն Հայկ աւանել է աստ և Հայկ անունից մնացել է Հայկավանք։ Բայց՝ բացի աւանդութիւնից և բերանացի զրոյցներից եկեղեցւոյ շրջակայքում գտնուած հեռու և մօտիկ վայրերն, իրանց հայկական հնութիւններովն, և աւերակները ապացուցանում են որ այդ շրջանակում ապրել են բազմաթիւ հայք շատ հին ժամանակաւ, թէև ներկայումս էլ կան սակաւ հայաբնակ թաղեր։

Եկեղեցւոյ կից շրջապատի մէջ գտնուած ընդարձակ գերեզմանատնից ի զատ նորա հարաւ-արևմտի պարսպաց մօտիկ, հայերն ունեն աւելի մի ընդարձակ և միշտ կանաչազարդ գերեզմանատուն, աւելի հին, ուր մի ժամանակ թաղուել են բերդաքաղաքացւոց ննջեցեալք. բայց այժմ այդ նշանաւոր վայրը ենթարկուել է անվերջ և անվճռելի հարցի. տեղական կառ. վաղուց յետէ մտադրուել է իւրացնել և կամ ծառայեցնել ուրիշ նպատակի որն՝ մենք չ՚գիտենք...

Եօթն խորան կոչվելուն պատճառն այն է որ բացի ս. սեղանի վերևումն գտնուած երեք խորաններից երեք ևս կան սեղանների ստորև ներքնախորաններ ուր տնկուած են իւրաքանչիւրումն մէկ մէկ հին գանդակուած խաչքարեր կապուտ, կանաչ և կարմիր-խաչ անուններով որոց՝ տենդ և ջերմ ունեցող հիւանդները մտնում և ծննդաղնում ու լուացվում են նոցա աւազաններում ի բժշկութիւն ցաւերի։ Եկեղեցւոյ բազումն է 1860 թ. հաստատուած նախակրթարան թաղային դպրոց, որքան յիշում եմ. դա ևս

նորին օծութեան Վեհափառ Հայրիկի շնորհին է բացուել նորա վարդապետութեան առաջին շրջանում։ Այդ բազի կենդրոնումն են թաղուած Վանայ նախկին առաջնորդ և երբեմն կաթուղիկոս տանն Աղթամարայ Գաբրիէլ արքեպիսկոպոս և 1895-ի ճիշտ ջրօրհնեաց առաւօտ յունուար 6. չարաչար սպանուած Վանայ յայանի կուսակցութեան կռուածաղիկ՝ Մէլիքեան Պօղոս սրբազան, ձեռնասունն և մտերիմն Գաբրիէլի։

Հայկավանից հարաւակողմն, մօտիկ Զամիրամայ թրբքաբնակ թաղին, կային, նաև Դէվկանց կամ Տէր Սարգսենց (մեր հին թաղն), Բուզախանայի, Իսհակ փաշայի երեք միացեալ հայաբնակ թաղեր և մի փոքր թաղ Խաչանայի, որոց հայ բնակիչք ևս նոյն վշտակրութեամբ կոտորուեցան և կողոպտուեցան և տները այրուեցան. որոց այրիքն, մանկահասակները 'ի մի վայր հաւաքելով, ապա նոյն հազարապետ Էմին բէկի պահպանութեան տակ, յանձնուեցան ազգ. առաջնորդարանի։

Վերոյիշեալ թաղերում կան երկու հին եկեղեցեաց մնացած աւերակ մատուռներ Ս. Ծիրանաւոր և Ս. Օհաննէս անուամբ, որոյ՝ ժողովուրդը *Թուխ-մանուկ* անուն է տալիս։ Այս վերջնոյս շուրջն 1880-ին հայ մանուկները խաղալիս, պեղումներ գործելով՝ դուրս բերին մի ամանով լիք հին արծաթեայ դրամներ, հռովմէական տիպով ու գրով, իւրաքանչիւրն մի արծաթ բուբլիի չափ ու ձևով, բայց տեղական կառավարութիւնը իսկոյնևեթ վրայ հասնելով՝ գրաւեց և չիմացանք էլ ինչ եղան այդ հնութիւնները։

11. Այր-յարոյց կամ Արարուց ս. Աստուածածին

Բերդաքաղաքից դէպ արևելք, հարաւային մեծ պողոտայի ճանապարհով, անցնելով ¾ ժամ հաղիւ, հաս-

նում ենք այդեստանեայց հարաւակողմ, և ահա Այր-յարոյց ս. Աստուածածին եկեղեցին կառուցուած բաւականին բարձր, հարթ տարածութեան վրայ, որոյ բարձրաբերձ գմբէթն ու զանգակատունն դեռ կէս ճանապարհից երևելով՝ անծանօթին առաջնորդում են ուղիղ դէպ սրբավայրն։

Եկեղեցինը մօտաւորապէս եօթն և կէս դարու գոյութիւն ունի և նորոգուած է հարիւր ինսուն տարի յառաջ, երբ ներկայ Արարքցւոց նախնիքը հին Արարք գիւղից գաղթելով աստ և հաստատուել են նախ որպէս գիւղաւանում։

Եկեղեցւում գտնուած յիշատակագրոց մէջ մանրամասնօրէն գրուած է ինչ որ մի հրաշագործութեան մասին, որն կատարուել է մի ննջեցեալի վրայ։ Ննջեցեալը յարութիւն առնելով, այն աւետարանը և եկեղեցինը կոչվել են մեռել-յարոյց աւետարան կամ այր-յարոյց եկեղեցին։ Արդարև ամեն բանով իսկ հրաշագործ է եկեղեցինը, որին գիմում են բացի հայերից և ջերմեռանդ միւսլիմները կանայք և տղամարդիկ, խիստ ակնածութեամբ վարվում են նորա կալուածոց հետ. շատերը դոցանից տարեկան մի քանի լիդր ձէթ են նուիրում նորա անուանն։ Ունի ուրն հարիւր տանից աւելի ծխական թոզ թէ պատահական այցելուք։

Եկեղեցւոյ հիւսիսային կողմումն է այն մեծ հրապարակ, վասպուրականի կիրակնօրեայ մեծ վաճառանոց, շրջապատուած եկեղեցապատկան ձեթահանով, գործարաններով և բազմաթիւ կրպակներով։ Հրապարակ—վաճառանոցում ամեն կիւրակէ և շատ անգամ լուր օրերին, կարելի է գտնել տնական և արհեստական անհրաժեշտ ամեն պէտքերը որն՝ ամեն դասակարգի համար էլ ձեռնտու է և գիւրագտնելի։ Ինչ մարդ որ չես տեսնում կամ գրտնում ամիսներով եաւից ման գալիս, կ'գտնես այդ տեղ. դա մի մեծ մթերանոց է Վանայ *քէսիբ-քիսիբ* հասարակութեան, որից օգտվում են ամեն ազգի հարուստն ու աղքատ դասակարգը։

Այր-յարոյց եկեղեցինը երկար տարիներով մտածելուց վերջ՝ ապա նորոգուեցաւ 1883—84 թ. խիստ փառաւոր և խիստ հոյակապ հաստատութեամբ և մեծութեամբ։ Երևակայեցէք մի ընդարձակ. շէնք, փառահեղ և և վեթխարի գիրքով ու ծաւալով. որոյ գաւթումն, աղօթատեղումն կարելի է զետեղել 3—5 հազար հոգի, կանանց երկյարկանի վերնատնով և երկու կողքից հիմնարկուած փոքր խորաններով։ Հարաւային կողմից բացուած հինգ մեծաշրջանակ լուսամուտները աւելի շքեղ և հիանալի են կացուցանում Ս. Վայրն։ Այս վերջին նորոգութեան մասնակցեցան Վանայ բոլոր հայեր իթիւս որոց և նշանաւոր թուրքեր՝ իւրաքանչիւրն նուիրելով թէ կանխիկ դրամ, թէ շինութեան վերաբերեալ այլ և այլ նիւթեր։ Երջանիկ ժամանակ, որ դեռ չար քաղաքականութիւնը չէր մտեր երկու հարևան և մօտիկ դրացի ազգաց մէջ, տեղացի թուրք ու հայն լաւ էին վարվում...։ Այդ մեծագործ շինութեան գործին գլուխ կանգնել էին, սկզբունքով միմեանց հակառակ, երկու կուսակցութեանց գլխաւոր պարագլուխները՝ Վանայ նախկին առաջնորդ յայտնի Պօղոս եպիսկոպոս և Նաթանեան մեծ. Կարապետ Էֆէնդին, երկուքն ևս որպէս հեղինակաւոր գործողներ, եկեղեցւոյ շինութեան գործում միացած՝ բազումս աշխատեցան և գլուխ բերին այդ մեծ և Ս. շինութիւնն։

Եկեղեցինը միայն բաւական չէր վերանորոգել, այլ և պէտք էր եկեղեցւոյ ներկայ և ապագայ մատաղ սերնդին համար յար և նման կրթութեան մի վայր էլ շինել։ Եւ ահա ընդարձակ շրջապարսպի արևմտեան կողմ, մէկ տարուց վերջ 1885—86 թ. ամենայն եռանդով և անգուլ աշխատութեամբ շինուեցաւ Ս. շէնքին համապատասխան և այն վեթխարի նոր շէնքն. երկյարկանի և խնամուած

որմնարկութեամբ։ Դա է «Ս. Թարգմանչաց» երկսեռ ուսումնարանը. արքունի-քաղաքային երկրաչափ ճարտարապետ Պօղոս էֆ. Թագաւորեանի տուած յատուկ յատակագծովն։

Ուսումնարանի ստորին յարկումն են Թաղ. խորհրդարան. աշակերտաց ատաղձի գործարան, գորգագործութեան սրահն և այլ ամբարներ և կրպակները, իսկ վերնայարկումն են մի ընդարձակ-երկար ճեմելիք (սալօն) մեծ դահլիճ (հանդէսների և հարցաքննութեանց համար տասներկու դասարանները (ուր սովորում են մօտաւորապէս 750—800 երկսեռ ուսանողք տասն և եօթն պաշտօնեաներով) և տեսչարանը իւր առաջին ունեցած պատշգամբով։

Արարք եկեղեցին իրաւամբ պարծենում է այդ մեծ հաստատութեամբ, ուսումնարանով, որոյ տեսարանն էլ եզական է Վանայ մեծամեծ շինութիւնների մէջ։ Արևմտեան կողմից տեսարանը անարգել տարածվում է մինչ Բզնունեանց ծովի արևմտեան հօրիզոն. որտեղից մի հայացքով կ'մբռնուի Գնունեանց, Քաջբերունեանց, Բզնունեանց, Ռշտունեանց գաւառները իրանց լեռներովն ու բազմաթիւ գիւղերովն. հարաւից՝ Զամիրամայ լայնածաւալ այգեստանք, տեսնվում են Առնօսի. Արղօսի և այլն լեռ ու բլուրների գագաթները. հիւսիսից՝ Վանայ այգեստանեայց գլխաւոր մասն և, Արևելքից աննման պատկերն Վանայ ամբողջ դաշտերի, արուարձան գիւղերի և մօտիկ վանքերի և, աւելի հեռուն թէ տանք մեր ուշքն ու միտք, ահա Վարագայ, մեր ամենին պաշտելի ս. լեռն իւր աջ ու ձախ լանջերովն. մարդ ու մարդաղետիններով, Կարմարվորայ. Ս. Խաչ Վանուց բարձրահոյեաց կաթուղիկէքն մեր սիրտ, ու միտքն գրաւում են դէպ յինքեանս.

Արարուց եկեղեցին և ուսումնարանը ապահովուած

են շնորհիւ այն բազմաթիւ և հաստատուն կալուածների. որոյ մատակարարութիւնը եթէ աւելի տնտեսուի և կուլ չ'գնայ այս և այնի կոկորդ. ուսումնարանը կարող է աւելի ճոխ ասպարէզ ունենալ և աւելի հարուստ ծըրագիր։

Մինչև 1896-ին Արարուց երկսեռ ուսումնարանում սովորում էին մօտաւորապէս 750—800 երկսեռ ուսանողք տասն և չորս ուսուցիչներով և երեք վարժուհիներով, որոց թիւմն էր հանդուցեալ օր. Աննա Մունետիկեանց և տողերիս գրողը. շատ ջերմ սիրով և միաբան գործունէութեամբ, խիստ համերաշխ և նախանձելի վիճակով. սակայն թող ներուի ինձ՝ որ ես ցաւ խիրտ, ստիպուած եմ կրկին յիշել այն տխուր անցքերը որոնք խանգարեցին և այդ դպրոցի ամեն ինչ. որոց ենթարկուեցանք և մենք մեր խմբովն ու ուսանողներով և ականատես եղանք այն ամեն թշուառութեանց։

1897 Յունիս 3. երկուշաբթի օր, դասաւանդուեանց չորրորդ պահն էր, երբ զանգակը հրաւիրում էր իւրաքանչիւր ուսուցիչը իւր դասատան մտնել։ Ուսումնարանի տակովն անցաւ հազարապետ Հալիմ էֆէնդինը մի խումբ զինուած զօրքերով« Մենք լուսամուտներից տեսնում ենք նոցա հապճեպս անցնել հրապարակից և գնալ ուղիղ դէպ հարաւ Կլոր-դար կոչուած խառն թուրքաբնակ հայաբնակ թաղն։ Կլոր-դարը այգեստանեաց կենդրոն թաղերից շատ հեռու է և շրջապատուած աւելի ֆանատիկ թուրքերից։ Մենք կարծեցինք որ նոքա, ըստ սովորականին գնում են որև է մի հայու տուն խուզարկելու, բայց ընդ հակառակն եղաւ և մեծ եղաւ մեր ահն ու սարսափը երբ նոքա Կանդօեանենց տուն հասած չըհասած՝ մի տասնեակ հրացանները միասին պարպեցին,

դա անշուշտ առաջին նշանն էր համախբուած խուժանին անարգել յարձակումները գործելու ուր որ պէտքն էր։ Զանցաւ հինգ ըոպէ և ահա մզկիթներում հաւաքուած ամբոխը զինուած դանազան սպանիչ գործիքներով զրոհ տուած, *սալավաթն* գոռալով յարձակուեց հայոց տների վրայ. մահ, մահ, գեավուրներին գոչելով. և այդ կատարվում է անխնայ, ըոպէական։

12. Նորաշէնի կամ Տիրակառոյց Ս. Աստուածածին եկեղեցի

Այգեստանեայց բուն կենտրոնում, շրջապատուած բազմաթիւ մեծ և փոքր զուտ հայաբնակ թաղերով 1850 ական թուականներից կառուցուել է այստեղ Նորաշէնի կամ Տիրակառոյց Ս. Աստուածածին, հարուստ ծխականներով, յառաջդիմասէր երիտասարդներով և ժողովուրդով։

Չնայելով իւր անհաստատ եկամուտներին, միայն դանձանակների և պատահական հասոյթներով է կառավարվում, նախանձելի ինտեռագիտութեամբ։ Թէ դպրոցն և թէ եկեղեցին աւելի լաւ դրութեան են միշտ քան միւս թաղերի և, դորա ապացոյցն այն է որ՝ օրից օր աւելի բուրոր վիճակի են հասնում Նորաշէնցիքն միշտ նախանձելի են կացուցանում դպրոցն էլ եկեղեցին էլ։

Նորաշէնի եկեղեցւոյ կից 1865—70 շինուեցաւ մի փոքր եկեղեցի ևս, որպէս կանանց յատկացեալ ժամատուն, բայց միջանկեալ մի աննպաստ կուսակցութեան-հակակրութեան երևից՝ այժմ բոլորին փակուած և դրէթէ աւերակ վիճակի. ուր թաղվում են նշանաւոր ննջեցեալները։ Եկեղեցւոյ բագումն է բարձրագոյն-նախակրթարան դպրոց, բայց շէնքը համապատասխան չէ ներկայ ուսումնարանական դրութեան. ահա մի դլխաւոր պակասութիւն, որն զգում են Նորաշէնցիք, բայց պատեհառիթ

միջոցն է միայն պակասում վերանորոգելու և, այդ։

1896 Յունիսի անցքերին Նորաշէնի դպրոցն ու եկեղեցին որպէս դլխաւոր կետրոն այգեստանի հայոց, բազմաթիւ որբոց և այրեաց, վերաւորեալների, փախստական դաւառացիների համար ապահով ապաստանարան դարձաւ, ուր մնացին շաբաթներով և կերակրուեցան թաղի խնամակալ վարչութիւնից մինչև իրանց տեղն վերադառնալ։ Խուժանի անարգել յարձակումն թէև հասաւ մինչ այնտեղ, բարեբախտաբար եկեղեցւոյ և դպրոցի ամբութեան պատճառաւ զդալի վնաս չեղաւ, իսկ եկեղեցւոյ հիւսիսային կողմի թաղերը և թաղեցիք տուժեցին թէ աւար տալով թէ տները հրկեզելով։

Գեղեցիկ և խիստ զուարճալի է Նորաշէնի շուրջն ու շրջապատի բոլոր վայրերն. շրջադայողն այդտեղ, կարծում է որ ճիշտ հասարակաց պարտեզումն է. ապա այն միշտ թարմ գերզմանատունն, որն աւելի վարդարանի նմանութիւն ունի քան թէ մեռելատեղւոյ, վարդաթուփերով և դալար ուռենիներով վանդակապատուած են բոլոր գերեզմանները, որոց բոլորդիքովն էլ անցնում ,են *առուներով* կկկլացող մաքուր ջրեր։ Այդ գեզմանատանում թաղուեցան նոյն տխուր անցքերին ընկած պաշտպան երիտասարդներից ոմանք։ Եկեղեցւոյ դռան աջակողմումն են թաղուել շինութեան մասնակցող նշանաւոր աղդայինք և հանրածանօթ Զարանբէկ Զարանեանց։

13. Ցայնկոյսների Ս. Աստուածածին Կամ պստիկ Տաճար

Վանայ այգեստանեայց հիւսիս-արևելեան կողմ՝ համանուն ձորակի և գետի ձախ կողմի վրայ 'իհնուց կառուցվել է պստիկ տաճար Ս. Աստուածածին եկեղեցինը,

մինն այն հին վանքերից՝ ուր երևացել է և այս սրբավայրում պատմական լուսեղէն սիւններից մինը, ուր երբ, դարում Վասպուրականի Վարդ-Պատրիկ իշխանի օրով։

Ըստ պատմութեան ծերերի, դեռ դարուկէս յառաջ որպէս վանք, ունեցել է իւր միաբանութիւնը գիւղատնտեսական ամեն պարագայիւքն, ինչպէս որ տակաւին մընում են իւր մշակականութեան սահմանի հանդն, արտեր և ձիթահանի աւերակներ Վանից մօտիկ. բայց փոխուելով ժամանակը քայքայվում է միաբանական ուխտն և հին եկեղեցինը անխնամ մնալով փլչում է միայն քարաշէն և ամրակառոյցն մնում է պատիկ տաճարը«

Դարոյս սկիզբներին երբ այգեստանեայց վերի մասերը-նորատունկների թաղերը ստուարանում են հայ բընակիչներով, կարի պէտք է զգացվում նոր եկեղեցի ունենալ։ Այդ ժամանակի նշանաւոր գերտաստունք (գլխաւորապէս Թէրլէմէզեան Մ. Ալխաս և Զաքար աղաները) օգնում են հին աւերակ եկեղեցինը վերանորոգելու, անշարժ պահելով պզտիկ տաճարն որպէս հնութիւն, և այդ Յայնկոյսների հին վանքը դառնում է իւր շուրջ կենող հայ բնակչաց մշտական ծխ. եկեղեցի։

Այդ ձորակը արդէն էլ բանաստեղծական, յարգուարճ մի վայր է եղել. նորա մէջում գտնուելով եկեղեցինը իւր շրջակայքի թարմ ու գեղեցիկ ծառաստաններով գրաւիչ է դառնում յամենայն դէպս զբօսաշրջիկ երիտասարդները և ուխտաւորը ունենալ։ Չորս կողմից այգիներ, որթատունկ և մրգաւէտ. պրակներ ուռենիների և բարտիների. ուր երգող թռչունների գեղեցիկ գեղգեղանքն էլ անընդհատ լսվում, առուներ և գետակն ներկայացնում են մի հիանալի զբօսավայր՝ որտեղից մարդս ակամայից է դուրս գալիս։

Յայնկոյսների թաղեցոց եկեղեցասիրութիւնն ուանտապահ կարգապահութիւն, ջեռմեռանդութիւնն դէպ

հայրենի կրօնն ու եկեղեցին, անսանի և օրինակելի է դարձել բոլոր Վանեցւոց մէջ, և այդ բարի սովորութեան տակ էլ՝ օրից օր աւելացրել են եկեղեցւոյ անշարժ և շարժուն կալուածոց քանակն ու թիւ. ջրաղացներ, այգիներ, պրակներ դուքաններ և այլն՝ օրից օր աւելացնում են իրանց դինն և վարձի տրուած արժէքն։

Եկեղեցում որմերի վրայ դասաւորուած են տէրունական և այլ սրբոց բազմաթիւ պատկերներ, բոլորն էլ ընտրովի և նշանաւոր նկարներով՝ հմուտ նկարիչների գործ. ամենն էլ խրատական և օրինակելի դասաւանդութեան համար թէ ժողովրդոց թէ մանկանց։ Ունէր իւր ծոցումն տղայոց նախակրթարան դպրոց բաւականաբար ծրագրով. ուր սովորում էին երկուհարիւրից աւելի թաղի մանուկներ. բացի այդ դպրոցի եկեղեցւոյ վարչութիւնը հոգում էր «Մ. Գայիանեան» օրիորդաց դպրոցի ընդհանուր ծախսն։ Գայիանեան դպրոց գտնվում էր Վեհափառ Հայրիկենց տան մէջ մի որոշ մասում բաւական յարմարութեամբ շինուած, բայց ափսոս՝ որ իւր ամենայն կահ-կարասիօքն 1896 ի տխուր անցքերին հրոյ ճարակ դարձաւ։ Նոյնպէս և Վեհի տունը իւր բոլոր մասերովն։ Նոյն թշուառ գէպքերին շրջակայ թուրքեր և բուրդերը նոյնպէս անխնայ կողոպտելուց վերջ՝ այրեցին թէ եկեղեցին և թէ դպրոցը իրանց ամբողջ շէնքերովն, վերին և ստորին ամբողջ սենեակներով, մնաց միայն պստիկ տաճարը շնորհիւ իւր ամրակառոյց շինուածքին և մինչ յ՚ներկայիս էլ ժամերգութիւնը կատարվում այդ փոքրիկ սրբավայրումն մինչ նորոգութիւն եկեղեցւոյ։

Նշանաւոր է Յայնկոյսների ամբողջ թաղը իւր վայելուչ և յարմարաւոր դիրքովն. երկու կողմից կրկնակի առուների եզերքով տնկուած ուռիները և բարդիները զարդարում են այդ մեծ պողոտանը որն ձգուած է արևելքից արևմուտք բաւական երկար տարածութեամբ. յարմարա-

ւոր երկյարկանի, եռայարկ շէնքերով, որն և Վանայ ամենագլխաւոր հայկական *արահետն է*։ Այդ նշանաւոր թաղումն է ծնուել ահա Նորին Օծութիւն Խրիմեան Վեհափառ Հայրիկ. Կաթուղիկոս ամենայն հայոց. դորա կարկաչիւն առու առուակների, աղբիւրների վրայ, մրգաշատ ու որթատունկ այգիներում ու պարտէզներումն է անցկացրել, երջանիկ օրերն մանկական և երգել շատ անգամ։

Յայնկոյսների հիւսիսակողմն է այն նշանաւոր և գիտնոց հետաքրքրելի բերդը-Թօփրաք Գալէ-և ըստ Վանեցւոց՝ Զըմբ-զըմբ մաղարայ (քարայր)։ Ահագին տարածութեան վրայ ընկած է այդ վիթխարի քարափը շուրջն ունենալով մի ընտարձակ քարայր. և այլ մի քանի փոքր ու մեծ քարանձաւներ։

Այդ քարայրներից միոյն մէջն է *Զարխի ֆէլէկ* (երկնային անիւ) երևկայեալ բախդանիւ, որն ըստ ասմկաց, շուռ գալով՝ վճռում է մարդկանց բարի կամ չար բաղդի տիրանալը։ Մինչև ցարդ գտնուած բեռեռագրերից շատ տեղեկութիւններ են ստացուել Բաբելական-ասորական աշխարհակալութեան վերաբերեալ։ Թօփրաք-գալէի վրայ եղած պեղումները դեռ շարունակվում է այս և այն Եւրոպական հնագէտներից։

Մեր օրով տեսել ենք շատ թանդագին հնութիւններ այդ բերդի շուրջն և լեռնադաշտի կենտրոնում արած պեղումների արդիւնքից. դուրս են բերուել շատ քանակութեամբ ոսկեայ, արձաթեայ, անագէ փոքր և մեծ չափով կուռքեր, պատկերները զանազան կենդանեաց. նետեր, նետաօղեր, աղեղները, ափսէներ. անագէ, պղնձէ ամաններ, յախճապակեայ ամաններ, շիշեր և այլ նիւթեր։ 1881—82 թուականներին այդ կանոնաւոր պեղումների փորձն արեց Վանայ առաջին գօնսիւլ (Անգլեացւոց) պ։ Գլէյթօնը, վերոյիշեալ տեսակ նիւթերից, քանի մի հակ

կապելով ուղարկեց անգլիայ հնագիտաց ժողովին և ստացաւ շնորհակալութիւն։

Յաւալին այն է որ՝ այդ յայտնի և հետաքրքրական բերդը գտնուելով Յայնկոյսների եկեղեցւոյ կալուածային հողին մէջ, դեռ մինչև ցայժմ նա երբէք օգտուած չէ բազմաթիւ հնութիւններից. բացի իւր շինութիւնների և թաղեցւոց տուած առատ որմնաքարերից, որոյ անսպառելի քարահանքն շատ հին ժամանակից իվեր տուել է և տալիս է համայն Վանեցւոց առատ քար ամեն կարգի շէնքերի համար։

Համեմատութեամբ միւս թաղերի. Յայնկոյսների թաղեցւոց նիւթական և բարոյական վիճակը աւելի խիստ զգալի եղաւ 1896 ի անցքերին։ Այդ սգալի օրերում, ժողովրդին պաշտպանելու գործքում, պակասեցան այդ յայտնի թաղից ընտրովի երիտասարդներ, գլրոցական պատանիք, այրուեցան ուղիղ պողոտայի վրայ գտնուած յայտնի շէնքեր ու տներ և շատ այլիք և որբերը մնացին անտէր ու անպաշտպան։

14. Ս. Յակոբ Հայրապետ-եկեղեցի.

Այգեստանեայց ուղիղ հիւսիսային կողմ, չորս կողմից շրջապատուած թուրք բնակիչներով և նոցա այգիներով, ստորին Նոր-շէն կոչուած թաղում, ընդարձակ տարածութեան վրայ շինուած է եկեղեցին՝ յանուն Ս. Յակոբ Հայրապետին Մծբնայ։ Այգեստանեայց ամենահին եկեղեցին է Յայկոյսներից յետոյ։

Իւր Հին ծխականները ցրուել և խցկտել են աւելի կենդրոն թաղեր իրանց հին տները էժանագինս ծախելով նորեկ թուրքերին. թողլով Սրբավայրն մէն մենակ շրջապատող տարրի մէջ։ Թէ եկեղեցւոյ թէ թաղականութեան սենեակներ և շինութիւնները բաւականին յարմա-

բութեամբ նորոգուել էին վերջին տարիներս, նմանապէս նախակրթարան դպրոցն, որոյ առաջին տնօրէն-ուսուցիչն եղել է հանգուցեալ Մեսրոբ քահանայ Փափազեան (ապա վարդապետ, հայր Վ. Փափազեանի) երկարամեայ ծառայութեամբ տքներով հեռաբնակ թաղեցւոց մանուկների համար։ Ինչպէս Յիսուսեան վարժարանը բերդաքաղաքում, նոյն և Ս. Յակոբայ դպրոցն այդեստան մասում 67—90 թուականներին մեծ համբաւեն ունեցել իրանց հասունացած աշակերտներով, այդ քահանայ վարժապետի շնորհիւն էլ առաջին անգամ այդ դպրոցում դրուել է թատրոնական ներկայացում, ապա մի ժամանակ շարունակուել է նորա նախկին աշակերտաց աշխատութեամբ։

Ս. Յակոբ եկեղեցում, երկար ժամանակաւ, ամենայն զգուշութեամբ և ակնածութեամբ պահվում էր մագաղաթի վրայ գրուած Ս. Աւետարան՝ Շար-խափան կոչումով, որն եկեղեցւոյ ամենագլխաւոր Սրբութիւնն էր. և միևնոյն ժամանակ թէ եկեղեցւոյ և թէ քահանայից եկամուտի աղբիւր։ Ամեն շաբաթ երեկոյեանը, հեռու և մօտիկ թաղերից, Շար-խափանին սիրուն՝ խռնվում էր այդտեղ կանանց խիտ բազմութիւն, խունկ ու մոմով, մատաղացու գառ ու հաւով կատարում էին իրանց ուխտն։

Ս. Յակոբայ վերի կողմ, Թուխ-Մանուկայ թաղ, Բօղիկեանենց բակում կայ մի ինչ հին եկեղեցւոյ նշանատեղի, որտեղ շինուել է մի հասարակ մատուռ, անունը Թուխ-մանուկ, որոյ ուխտաւորքն էլ պակաս չեն իրա ժամանակին։

Այսպէս ահա՝ Վան քաղաքի երկու մասումն։ Այդեստան և բերդաքաղաք. մեր ազգայինք ունէին տասներեք եկեղեցիք, այնչափս հռչակուած ժողովրդով. հինգ օրիորդաց

և ութն տղայոց ծխ. ուսումնարաններով և մի «հայկական» որբանոց ուսու—արան. թողունք ամերիկացի միսեոնարներից և վերջուց Դոմոնեկեան կրօնաւորաց-ձեռօք բացուած ուսումնարաններ և նախակրթարանները։

Այդ ուսումնարաններից մի քանիսումը ուսումնական ծրագիրն, կարգապահութիւնը աւելի բարձր և կանոնաւոր էր քան միւսներ. նայելով դոցա նիւթական միջոցներին ևս առաւել ժողովրդոց նիւթական և բարոյական վիճակին։ «Հայկական» որբանոց շարունակվում է մօտաորապէս 20—22 տարուց աւելի ընտ տեսչութեամբ մի քրիստոնէական և հաստատամիտ մարդու. դա է մեծ պ. Համբարձում Երամեան։ Պ. Երամեանը դեռ պատանի հասակում, որ ժամանակ հազիւ թէ առած էր ուսման համն ու հոտ, զրկվում է բնութեան ամենագլխաւոր զգայարանքից, աչազուրկ դառնում, և այդ օրից նա աւելի եռանդ և ձգտում է ունենում դէպ ուսանիլ և ուսուցանել, և ինչ որ էլ սովորում է՝ դա շնորհիւ իւր մտքի կորովութեան է լինում, ըմբռնում է առարկաների (և ֆրանսէրենի) դասախօսուած բոլոր նիւթերը. պատրաստվում է ուսուցչի դեր կատարել և յաջողում։ Ապա սկսում է իւր միսիթարական գործն. առաջին «որբանոց» դպրոց բանալ Վանում։ Նա հիմք դնելով այդ բարենպատակ գործին, տարուց տարի աւելի հիմնական կարգեր, կանոններ և ծրագիրներ պատրաստեց ու մտցրեց այդ միակ հաստատութեան մէջ յօդուտ իւր սանուց մտաւոր զարգացման։

Այդ աչազուրկ վիճակի մէջ՝ պ. Երամեանը իւր արած ճանապարհորդութեամբ (Թիֆլիզ, Եւրոպայ մի քանի քաղաքներ Կ. Պոլիս) աւելի բարոյապէս նպաստից «Հայկական» որբանոցին, բերելով իւր հետ նոր նոր նիւթեր և գործիքներ բնագիտութեան և այլ առարկայից այնպէս որ՝ տալով տղին բաւականի զարգացած երիտասարդ-

ներ և տասնեակ թուից ուսուցիչներ փառաւոր կացոյց իւր անունը ու համբաւն։ Հնայելով Վանայ պատճառած այն թշուառ դէպքեր և աւելի նիւթական վնասն, ամբողջ Վասպուրականում, ներկայումս էլ «Հայկական» որբանոց եղական միջնակարգ ուսումնարան է, իւր շատ բազմակողմանի օգտակարութեամբ։

1896 ից առաջ Վանում կային բացի ծխ. ուսումնարաններից, նաև մի քանի մասնաւոր դպրոցներ (երկսեռ). դոցանից աւելի օգտակարներն էին «Վարժապետանոց» «Միացեալ» ընկերութիւնից հաստատուած, ապա «Կենդրոնական», «Հայկազեան» դպրոցները սակայն հետզհետէ տիրապետող տխուր պայմանները տեղի տալով՝ հակառակն ազդեցին այդ բարոյական հաստատութեանց վրայ. հետզհետէ փակուեցան, ցրուեցան և ընտիր ուսուցիչները և այդ նահատակ ժողովուրդը ընկճուեց ամեն կերպի թշուառութեանց։ Այդ բոլորը յայտնի են, մենք աւելին չենք ախորժեր մեր աշխարհի հին և նոր ցաւերն կրկին և կրկին կրկտելու։

Մեր առած վերջի տեղեկութեանց նայելով՝ այժմ Վանում կան ազգային չորս տղայոց և երեք օրիորդաց ծխ. դպրոցներ և մեր յիշած «Հայկական» որբանոց, ոչ առաջին ապահովուած վիճակի և ոչ առաջնոյն չափ աշակերտներով։ Բայց բարեբաղդութիւն է որ բարերաբաց շնորհիւ, մասնաւորապէս հանգուցեալ բարերար Գրիգոր Ջանշեանից ուղարկուած նպաստներով, թէ մօտիկ վանքերում և թէ շրջակայ արուարձաններում բացուել են և բացվում են նորից մի քանի «որբանոց» դպրոցներ, որոնցով մեծ յոյս ունինք որ՝ Վասպուրականի ապագանը նոր հասած սերնդի բարւոք դաստիարակութեամբ պիտի լինի խաղաղ և մխիթարական։

Երբ Վասպուրական աշխարհ և նորա կենտրոն Վան քաղաք դեռ նոր էր քայլափոխում զարգացման ժամանակակից շրջանի մէջ, ափսոս որ՝ այդ սկզբնաւորութեան առաջին և զգալի հարուած եղան 1896 ի սոսկալի և արիւնոտ անցքերն։

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱՅ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐՆ

15. *) Կռունկվանից Ս. Աստուածածին վանք

Բերդաքաղաքի հարաւակողմն՝ հազիւ երկու ժամ հեռաւորութեան վրայ, մի ընդարձակ սարահարթում կառուցվել է ծովահայեացն-Կռունկվանից Ս. Աստուածածին վանք. ընդ մէջ Ընտամետ և Ծվստան այգեպարդ գիւղերի, որոց երեքի դիրքն ու տեսարան եղական յատկութիւն ունին։

Կռունկվանից Ս. Աստուածածին վանքն էլ ունի իւր հրաշալի պատմութիւնն։ Նորա յիշատակագրերում գրուած է հետեւեալ պատմութիւնը։ «Եղել է մի ժամանակ՝ երբ քահանանը պատրաստուել է պատարագելու, ս. խորհրդի գինինը պակասել է, և ինչ է տեսնում իւր շուարած վիճակումն՝ ահա կաթուղիկէի լուսամուտից ներս է մտնում կռունկը խաղողի մի ճիւռ կտուցն ունելով. քահանանը վերցնում է ճիւռն. քամում և կատարում է Ս. խորհուրդն, այն օրուանից Ծովահայացն փոխվում է Կռունկվանից վանք, և հրաշալի դառնում ամեն հաւացեալների վրայ»։

---

*) Ուխտատեղիքի տեղագրութեան մէջ, մենք նկատի ունեցել ենք աւելի այն վանքեր և եղեղեցիք որոնք հանրային նշանակութիւն ունենալով, որոշեալ օրեր ունին իրանց տօնը կատարելու։ Ի հարկէ ամբողջ նահանգում բազմաթիւ են չէն ու անչէն, աւերակ կիսաքանդ սրբատեղիք էլ, որոնք թէև անցեալումն ունեցել են իրանց պատմական նշանակութիւնն, բայց ներկայումս չունենալով ինչ որ է մի հետաքրքրութիւն, բաց ենք թողել մեր նկարագրութիւնից։

Ի՞նչ զուարճալի և հիասքանչ վայրեր. ամբողջ Վան իւր այգիներով և դաշտերով պատկերանում է Կուռնկվանից առաջև որպէս մօտիկ սահմանակից հարևան քաղաքիափսոս որ՝ ամենայն դէպս ենթակայ է (և եղաւ) վտանգների։

Կուռնկվանից վանքը հարուստ է իւր սեպհական կալուածներով, արօտահողերով և ընտիր վարելահողերով սահմանակից յիշեալ հայաբնակ գիւղերի։ Վանքը զբաղուելով Աղթամարու կաթուղիկոսութեան սակ ոչ երբէք ունեցել է բաւուք տնտեսագիտութիւն։ Յիշում եմ միայն նորա Վանահայրերից մինը զիժ մականուանեալ Մխիթար վարդապետ, որն թէև ցանցառ մտքի տէր ոմն. բայց և այնպէս իւր օրովն շէն ու լիքն էր վանքը գիւղատնտեսական ամեն պարագայիք և ապահով հարևան թուրքերից։

Կուռնկ Վանից տօնակատարութիւնը կատարվում է վերափոխման յաջորդ Կիւրակէն. Վանեցի և դաւառեցի հայոց երկսեռ և հոծ բազմութեամբ։ Ունի միայն երկուութեամբ նշանաւոր գիւղ, այն է *) Արտամետ և Ծրվստան խառն թուրք քուրդ բնակիչներով։

16. Ս. Խաչ վանք

Վանայ տաշտի հարաւ-արևելեան կողմ՝ հազիւ մէկ

*) Արտամետ և Ծրվստան գիւղերը նշանաւոր են իրանց սննման մրգառատ այգիներով, այլ և այլ ծառատունկերով, որոց պատուական խնձորն ու տանձը անուանի և հռչակ ունեցել են իրանց հոտովն ու համովն առաւելապէս արտաքին տեսքով և շատ հազուագիւտ են ամբողջ հայաստանում։ Այդ գիւղերը մեր աշխարհի մրգատանեայց ամենառատ ամբարներ եղել են միշտ. որոնցից նաւերով և վարաւանների արտահանվում են նահանգի ամբողջ կողմեր։ Ըստ պատմութեան՝ Արտամիտ անունը եղել է հայոց թագուհիների ամարանոց մանաւորապէս Սաթենիկայ։ Ներկայումս էլ էլ բարձրատիճանաւորների կանայքը օդափոխութեան գնում են այդ գիւղը։

ժամ հեռաւորութեան լինի, Կուռուպաշ (գուցէ կռապաշտ) հայաբնակ գիւղի մօտ բարձր լեռնատաշտի մի առապարովն բարձր ացրել են թէ հոյակապ եկեղեցին և տաճարն իւր բարձրահայեաց կաթուղիկէովն։

Ս. Խաչ վանք՝ ըստ պատմութեան՝ երբ. դարում հռոմայից արտահալած Հռիփսիմեանց կուսանքների առ ժամանակեայ իջևանն է եղել. դոցա անունովն է յիշվում վանքի վերևում գտնուած կուսանաց սարը, և Գայիանէի անունով մկրտուած այն սառնորակ աղբիւրը, որի բժշկարար ջուրը շատ տենդ ու ջերմ ունեցողներին տուել է առողջութիւն. և ամեն կիւրակէ և հասարակ օրերին անդամ ուխտաւորք պակաս չեն այդ Ս. Վայրից։

Նայելով այն բերդի վարելահողերին և գիւղատնտեսական պարագայիցն վանքը բաւարար վիճակ մի չէ ունեցել. զանազան ժամանակներում մնալով անհաստատ վանահայրերի և աշխարհական խնամակալների տատանուող կառավարութեան տակ, չէ ունեցել բաւուք տնտեսագիտութիւն։ Ս. Խաչ վանքը միայն որպէս ուխտատեղի և օդափոխութեան յարմար տեղ, հայ ու թուրք զբօսաշրջիկները պակաս չեն նորա ուռենեաց տակ քէֆ անելու. բայց ոչ մի օգուտ տալով վանքին։

Ունի մէկ թեմական գիւղ, այն է Կուռուպաշ, որթատունկ այգիներով և խիստ մօտիկ վանքին, որն դժբախտաբար 1895—96-ին ենթարկուեց խիստ թշուառութիւնների և ամբողջ բնակիչք սարսափահար փախան քաղաք։

17. Շուշանից Ս. Գեորգ

Համանուն Զուշանց հայաբնակ գիւղում, յանուն դասերն Արծրունի Սենեքերիմ արքայի, Վարազայ սարի արևմտեան սառրոտում գտնվում է Զուշանից Ս. Գէորգայ եկեղեցին ուր և է Սրբոյն նշխարներից մի մաս։ Ինչ-

պէս զօրավար է եղել անուանատէրն, զօրաւոր է և եկեղեցին ու մասունքն ամեն դասակարգի ուխտաւորաց վրայ։ Թէ ցաւաքարները հիւանդոտ մարդիկ և կանայք դիմում են սուրբին բժշկելու յուսով, նոր սերունդն էլ իւր հետաքրքիր առարկան ունի Զուշանից վայրերից, նախանձաւոր իւր ազգային հնութիւններին նա դիմում է այդտեղ օգտուելու բարոյապէս և զբօսնելու։

Ընքայադստեր գերեզմանը գտնվում է գիւղին ստորև մի պրակի մէջ, բայց անշուք և անզարդ, միայն գերեզմանի սառն քարն է նորա բոլոր ինչ։ Զուշանց գիւղը ինչպէս զուտ հայաբնակ գիւղ և մօտիկ արուարձան քաղաքի, իւր առողջարար օդին ու ջրին հետ մէկ տեղ վերջին մի քանի տարուայ ընթացքում դարձել էր Եդեմական դրախտ. նորանոր որթատունկ այգիներով, մրգաւէտ ծառաստաններով և պրակներով զարդարուել էր նորա բոլոր սահմանները։

Զուշանից Ս. Դէորգայ տօնակատարութիւնը—օրան—կատարվում է գլխաւորապէս ապրիլ 23-ին (ըստ յունաց), վասնզի վանեցիք այդ օրն են յարմար տեսել դարունը ողջունելու և դուրս գալու ձմեռնային տխրութիւնից՝ կատարելու դաշտային զբօսանքը։

18, Կենդանանից Քօշահան Ս. Աւետարան

Այդեստանեայց հարուակողմն, *) Շամիրամայ՝ այդ պատմական մեծ առուի աջ ափին. Համանուն գիւղի եկեղեցւոյ մէջ մասնաւոր պահարանում ամենայն զգուշութեամբ պահվում է կենդանանից Քօշահան կամ Քօշահան Ս. աւետարանը որը ըստ ինքեան խիստ թանգագին մի սուրբ հնութիւն է։

Այդ աւետարանը շատ հին ժամանակից նրբին գրված և ոսկեզօծ պատկերներով, նկարներով զարդարված մի հնութիւն է, արձաթապատ կող ու կազմով, որոյ վերջաբանում գրված կայ աւետարանի գտնուելու պատմութիւնն հետևեալ բովանդակութեամբ։ «Եղել է մի ժամանակ որ գիւղի հովիւը դաշտում ոչխարը արածացնելիս, տեսել է որ Քօշը-խոյ. գետինը քրքրում է և եղջուներով խփում է ինչ որ մի կապոց փաթաթանի։ Հովուի հետաքրքրութիւնը գառնում է դէպ այդ առարկան. մօտիկ դնալով վերցնում է ծրարը և ահա միջում մի գիրք։ Հովուին այլ ևս կասկած չէ մնում թէ նա լինի Ս. գիրք ծրարուած երբներանգ դաշկինակներով գիրկն առած ամենայն զգուշութեամբ դիմում է գիւղ և յանձնվում եկեղեցւոյն։»

Ահա այդ օցուանից իւր անունն ստանալով՝ հրաշալի հուչակէ հանել ամբողջ նահանգում։ որին դիմում են բազմաթիւ ուխտաւորք ամեն օր։

Կենդանանց գիւղը բացի այդ թանգագին սրբութիւնից, ունի և ընտիր քարահանք ջրաղացաքարերի և երկանաքարերի համար. ընտիր և կածր կապատքարից փորուած՝ շարժուն աւազանները պատրաստվում են այդտեղ։

---

*) Նոյն անունով կայ ներկայումս Վանայ հարաւային կողմ Շամիրամայ թրքաբնակ, այգիներով պատած թաղն ուր բազմաթիւ են եղել հայեր, բայց դարուս սկզբներից նեղուելով թուրքերից՝ դաղթել են այդեստան մասում, այդ այգիներում չորս տեղ կան աւերակ եկեղեցիների միայն հողակոյտերը.

19. Կարմրվորայ Ս. Աստուածածին վանք

Վարագայ սարի ստորոտում. մօտիկ հարևան Զուշանց գիւղի։ Դիրքն ու գրութիւնն ամենաքանչելի է Վանայ բոլոր վանքերի մէջ. պատմական հրեղէն սիւննե-

ըից միոյն իջման տեղ՝ հարթ լեռնադաշտի վրայ կառուցվել է Կարմրվորայ Ս. Աստուածածին վանք։ Եւ սա գրտնվում է Վանայ այգեստաններայց ուղիղ արևելեան կողմ. որոյ կաթուղիկէին, ամպածբաբ քառաթևին, Վանեցի պառաւ մամն ու պապը արևածագից առաջ՝ տալիս են իրանց առաջին երկրպագութիւն, երիցս խաչակնքելով երեսնին ապա դիմում են եկեղեցին և անտի ապա սկսել գործի։

Ի՞նչ վայելչագեղ տեսք ու տեսարանով սրբավայր է Կարմրվորայ վանք. ահա արևելեան կողմից ահաւոր զառի վայրով տարածվում են հսկայ լեռան, Ջիաթռնուկի (մասն Վարագայ լեռան) միշտ թարմ և կանանչ մարգագետինները իրանց զոյնզոյն ծաղիկներով։ Հիւսիսից. հարաւից և արևմուտքից տեսարանը ընդարձակվում է հեռուն շատ հեռուն մինչև Վանայ ծովի երեք կողմից լայնածաւալ անարգել հորիզոններ. մի հայացքով հեշտ կ'լինի ըմբռնել արևմտեան ամբողջ զաւառներ իրանց յայտնի գիւղերով. Վանայ ընդարձակ դաշտ, այգեստանը որն ինչպէս մի շքեղապանձ թագուհի այդ ընդարձակութեան մէջ. մեծ պտղոտաները ամբողջ բերդաքաղաք. Զամիրամայ թաղի մրգաստան այգիներ. Արտամետ. Ծրվստան գիւղեր իրանց այգիներով ու պրակներով, Կտուց. Լիմ, Առ-տէր, Աղթամար կղզիները իրանց ագարակներով։

Կարմրվորայ վանքը իւր մօտիկ սահմաններում *քթին տակ* ունի շատ բերրի և արդաւանդ հողեր. ունի և մի քանի թեմական գիւղեր. գտնվում է Վանայ առաջնորդարանի իրաւասութեան տակ. ուր շատ անդամ նոցին արժանապատութիւնները ձանձրացած բերդաքաղաքի վատառողջ օդից ու ջրից. տեղափոխվում են Կարմրվորայ վանք որպէս ամարանոց շարաթներով այդտեղ են անցկացնում իրանց գործելու օրերն։

Կարմրվորայ վանք շատ անգամ ենթարկուել է ձախող դրութիւնների, այնպէս որ նա ամայացել է մինչև անգամ, ոչ ով տէր չէ մնացել։ Ես յիշում եմ նորա արտաքին շէնքերի և պարիսպների նորոգութիւնը որն կատարվեց 1868—70 թուականներին, Վանայ նախկին առաջնորդ հանգուցեալ Իգնատիոս եպիսկոպոսի (ապա պատրիարք Կ. Պոլսոյ) բազմատանջ ջանքն և աշխատութեամբ. ապա Աղթամարայ միաբան Յակոբ եպիսկոպոսի հիզանցւոյ և ամենավերջին վանահայր Յակոբոս վարդապետ Զահրաղլեանի խելացի տնտեսագիդութեամբ վանքի այն աննախանձելի վիճակը բաւականի բարւոքուեցաւ մինչև 1895—96 ի դժբախտ թուականներին յորում ամենայն ինչ տակն ու վրայ եղաւ։

Զահրաղլեան վարդապետը նշանակուեց առաջնորդ Բաղէշի վիճակին. դեռ կիսամեակն չ'բոլորած տարագրուեցաւ ... Կարմրորայ վանքի ամեն կայքն ու սրբութիւնները յափշտակվելուց վերջ, շինութիւնները բոլոր այրուեցան բացի սրբազան տաճարից։ Մենք բազմաթիւ ժողովրդով ամերիկացիների տանից տեսնումէինք այն բոլոր խժդ ժուրթիւններ. թէ ինչպէս այրում էին սրբավայրն, քշում էին նորա տաւարն ու ոչխար, հալածում շուշանցիներին, բայց մեր պատասխանը մեր լռիկ ու մեջիկ տխուր հառաջանքն էր։

1879—80-81 թուի. չարաբաստիկ սովին ժամանակ. թէ Կարմրորայ թէ Ս. Գրիգորի և թէ Ս. Խաչի վանքերը շատ որբերիի թիւս «որբանոց» դպրոցի սանուց ապահով ապաստանարան եղաւ, և Վանայ ազգայիններից մեծ. Պ. Փ. Դափամաջեանը. մասնաւորապէս Կարմրվորայ վանքին՝ շատ անդամ նուիրել է իւր թէ բարոյական և և թէ նիւթական միջոցները առի հաստատութիւն։

Իսկ ներկայումս, յայտնի է՝ որ բարերարաց շնորհիւ կայ այդ վանքումն ես «որբանոց» դիշերօթիկ դպրոց. և

Վանայ առաջնորտարանը լուրջ ուշադրութիւն է դարձրել նորա բարւոք կառավարութեան վրայ։

---

20. Ս. Գրիգորի վանք կամ Սալնաձորի անապատ

Հեշտ կ'լինի մեզ եթէ՝ Վարագայ սարի արևմտեան լեռնալանջովն. Կարմրվոր վանքից ուղղենք մեր ուղիղը դէպ հիւսիս արևելք, որտեղից Սղբայ Զորովանց, Զրուանդանց պատմական գիւղերի միջով, նոցա տեսք ու տեսարանովն զմայլած, կլկլուն առուների և պսպղուն վտակների ուղեկցութեամբ հասնենք այդ փափագելի վայրն՝ Կողբանից կամ Սալնաձորի անապատ-Ս. Գրիգորի վանք։

Հասնելով Սալանապատի ձորաբերանն, ահա երեք բարձրաբերձ կաթուղիկէները իրանց խաչագարդ գմբէթներով հեռուից դեռ մեզ ուղեցոյց են դառնում։ Փոքրիկ, բայց խիտ անտառով շրջապատուած վանքը գտնվում է երկու մեծ լեռաց ստորոտով բացուած երկու ձորերի միջում տարածուած սարահարթի վրայ։ Առաջին խորանը կամ տաճարը կրում է յանուն Գրիգոր Լուսաւորիչ. երկրորդ՝ յանուն Ս. Կարապետի և երր. յանուն Ս. Յարութեան։ Երեքն ևս հաւանական է որ միաժամանակ շինուելն, հոյակապ հաստատութեամբ։

Անտառի արևմտեան ծայրումն կայբարձր քարափի գ/խին, սրբատաշ քարերից կերտուած և մի փոքրիկ խորան. ըստ աւանդութեանն այդ Սրբավայրումն է ազօթել հայ ազգի Լուսաւորիչ մեծ Հայրն Գրիգոր. որոյ և ուխտաւորք դիմում են ջերմեռանդութեամբ և համբուրում։ Այդ անտառը չունի այժմ այն առաւելութիւնն, որն տեսել ենք մեր մանկական, ուսանողութեան ժամանակից, մեծ մասը փճացրել են Զրուանդանցի թուրքեր և մի

մասն էլ՝ Տէր Գալուստի որդիք, որոց՝ մի ժամանակ վանքը կապալով դրուած է եղել շահագործելու...։

Ս. Գրիգորի վանքն ևս իջման տեղի է այն պատմական հրեղէն սիւններից միոյն, որն երևացել է ութն երրորդ դարում շատ տեղեր։ Իւր հռչակուած առողջարար օդն ու ջուրը շատերին դրաւում են օդափոխութեան ելնել իւր շուրջն, մանաւորապէս ամերիկացի միսեոնարների և անգլիոյ գոնսիւլների ամրանոցը այդտեղ է, ուր ամբողջ ամառը անցկացնելով վայելում են երջանիկ կեանք։

1883—84 ին Վանայ առաջի գոնսիւլն ռուսաց՝ Պ. Կ. Կամսարականը իյիշատակ իւր անմոռանալի անունանն շինել տուեց այդ վանքում մի քանի կոկիկ սենեակներ և աջից ձախից էլ օգնում էր վանքի դրութեան։ Սալնապատ կամ Զառնապատ ձորի ջուրը որն թափվում է Վարագայ սարի աջ թեի զառի վայրերից, շատ անգամ գնուած է բժիշկներից և հռչակուած է որպէս առաջին ամենառողջարար ջուր և, այդ վստահութեամբ սկսեալ նահանգապետ փաշայից բոլոր բարձրաստիճանաւորք, ամեն օր այդ ձորից տակառներով ջուր են փոխադրում Վան։

1896 ի կոտորածից վերջ, վանքը բոլորովիմբ ամայացաւ և ապա ապաստանարան դարձաւ բազմաթիւ գիւղացի գաւառացի փախստական գաղթականների։ 1898 թ, նորից սկսուեց վերանորոգումներ և այդ օրից հանդուցեալ մեծ բարերար Գրիգոր Ջանշեանի բարերարութեամբ բացուեց «որբանոց» դպրոց, և վերջինս շնորհիւ նորին Օծութեան ներկայ Վ.հափառի, համեստափայլ տիկին Նատիրեանը գոհացուցիչ մի գումարով ապահովեց թէ վանքի և թէ որբանոցի ապագայ դրութիւնն։

Վանքի վերևումն է Կողպանց հայաբնակ գիւղը որն նոյն 96 ի դէպքերին ժամերով ենթարկուեց ռմբակոծու-

թեան. կարծելով թէ պաշտպան երիտասարդները ամրացել են դորա լեռներում։

Ս. Գրիգորի վանքից և Կողպանց գիւղից թեքուելով դէպ հարաւ-արևելք. Վարագայ լեռան արևելեան ստորոտում, թարմ մարգագետնոց. կանաչազարդ անտառով շրջապատուած ձորին եզերքով, խիտ ուռենեաց մէջ կան երկու նշանաւոր տեղիք ևս, մինը որ աւերակների մի կոյտ է կոչվում է ասորոց անանուն վանք. և միւսը Սուլթան Եայլասի, թագուհեաց ամարանոց։ Առաջինը որպէս Սրբավայր է թէ հայոց թէ ասորաց համար. իսկ երկրորդ՝ որպէս ամարանոց, որպէս յարակայ զբօսավայր ամենի համար. գարնան եղանակից սկսեալ մինչ աշնան սկզբներին՝ պակաս չեն այդ վայրից նաև վրանաբնակ քրտեր և մաս մի ոչխարատէր հայերը զօտայեն դուրս գալիս։ Սոցա հարաւային կողմն է 'ինոուց խնամքով հիմնարկուած ու հաստատուած Քէշիշ գեօլ (տէրտէրա լիճ) կոչուած լիճն՝ որն պահեստի ջրամբարն է Վանայ ամբողջ այգեստանեաց համար։

Քէշիշ գեօլի չորս բոլորը սկսեալ մայիսի սկզբից մինչ սեպտ- ամսոյ վերջ, կատարեալ մի տօնավաճառ է դառնում. այդտեղ բազմաթիւ են վրանաբնակ քրտեր և հայերը, դոցա մէջ և անասնավաճառ վաճառականները եկած Սիբիայի զանազան կողմերից, որոնք գնում են բազմաթիւ ոչխար և գուար. երկար ժամանակ արածացնելով այդ խոտաւէտ վայրերում՝ ապա քշում են դէպ Բերիա, Դամասկոս ի՛ վաճառ։

21. Վերին Վարագ.

Կամ Մինասեան Ս. Խաչ-հին վանքի

Սալնապատի ձորից բարձրանանք վերև Վարագայ լեռան հիւսիսային լանջովն։ Այս տեղ ճանապարհ մի քիչ դժուարին է, քարքարոտ և դժուարանց, տեղ տեղ միայն երևում են փոքր մարդագետինք այն է, ճախճախուտ. հոգ չէ այն փափագելի սուրբ վայրերի կարօտն, հեռուից ու մօտից անուշահոտ ծաղկանց զմայլելի բուրումն անզգալի են դարձնում ամեն դժուարութիւնները։

Ձորի երկու առապարովն ընկած ձեան թանձրացած շերտերի եզերքով կարելի է մի քիչ կանգ առնել. թէ սոված էլ լինի մարդս և քրտնած. անկարելի է որ չախորժի, զէթ, փորձելու համար մի կում ջուր խմել. դի հազգուագիւտ է մարգագետնոց միջից ճլճլացող այդ մարգարտաթիթ գուտ մաքուր ձեան ջուրն։

Երևակայենք որ գարնան եղանակումն ենք, դրախտի ամսում, մայիսում։ Կտրեցինք քարքարոտ ուղիներ. անցանք ձորերն ու ձեանց թանձրացած շերտերը. հա մօտեցանք կանանչազարդ լեռնագաշտին. դա Վարագայ հսկայ լեռան ստորոտի պատուանդանն է. ահա և վերին Վարագայ այն հին մենաստանի փուլ եկած աւերակները. որոց միջից բարձրանում են կրակն ու ծուխ, դա մի հաւատի նշան է որ յայտնվում է Սրբավայրումն կան ուխտաւորք. կամ որսորդներ են, որոնք այնքան դար ի վայր և դար ի վեր վաղ տալուց յետոյ. մի եղնիկ կամ այլ կենդանի ուսերնին առած վերադարձել են, ու պարզ սեղանին շուրջ բոլորած իրանց քէֆն ու զուարճութիւններ անում։ Ներդաշնակ երգերի զեղգեղանքը սար ու ձորերի արձագանքն է կրկնապատկում. խմբակ խմբակի կշտին բազմել են կանանչ գորգերի վրայ։

Մենք մօտենում ենք մեր փափագելի Սրբավայրին, Վարագայ կամ Գալիլիէ լեռան ստորոտում դեռ ուժն երրորդ դարուց գոյութիւն ունեցող վերին վարագայ հին մինաստան Ս. խաչ Վանքին. աւա՜ղ, որ փոխանակ երկնաբերձ կամ ուղիկէին. սուրբ սուրբ տաճարներին, տես-

նում ենք աւերակաց կոյտեր. կոյտերն սրբարնակ խորանոցն, տաճարին ու ճգնաստեղեաց միայնակեաց կրօնաւորների, որոնք դէս ու դէն ցրիւ ընկած այցելու ուխտաւորաց վրայ թողնում են տխուր տպաւորութեան, մտաբերել տալով նորա տխուր անցեալն ...։

Վերին վարագայ վանք խսկապէսը առաջին իջման տեղն է այն հրաշափառ տեսլեամբ երևցած հրեղէն սիւն, ներից միոյն, որին իտես փութացին Վասպուրականի իշխանք, աւագանին, ժողովուրդը իրենց սիրեցեալ Վարդապատրիկի հետ և այդ օրից հետզհետ հիմնեցին նախ Վարագայ Մենաստանն և ապա նորա շուրջն պատող միւս փոքր և մեծ վանքերը 'ի յիշատակ այն Աստուածային հրաշիցն, որն երևեցաւ ուրմն երրորդ տարում, հայոց աշխարհում։ Պատմում են որ. սրբատաշ հիմնաքարերից շատ քանակութեամբ մի ինչ որ նշանաւոր թուրքը տարել է տուել քաղաք. մի մասը ջամիի և մի մասը բաղանիսի գործածելով։ Այդ աւերակ խցիկների չարքում է և քարայր ճգնարանն երանելոյն Թորգիկ ճգնաւորի, ուր աղօթել, ծնրադրել է խստակրօնն իւր Հովելիայ աշակերտի հետ, անդադար միշտ անմռունջ սաղմոսերգութեամբ. և որտեղից նորա երկոքին տեսել են այն հրաշափառ տեսիլն. Գալիլիէի-վարագայ լեռնադագաթի կենդրոնից դուրս ցոլացեալ լուսափայլ նշանն Ս. Խաչի։ *)

Ահա իսկապէս դրախտանման վայր. լիառն հրաշագան և աննման. չորս կողմ հազար ու մի երփներանգ ծաղիկներով պճնուած։ Կապտագոյն, անուշահոտ գիներբուկի, մանիշակի, աղբերանց-արիւնի, որոշ որոշ անմա-

*) Այդ Ս. Նշանը մասն է խաչափայտի, ըստ սոյդ պատմութեան և յայտնաւորքի, բերուած Հռէփսիմէ կուսանքներից, որոնք երբ. դարում արտահալած լինելով Դիոկղիտիանոսից. հալածական փախել էին Հայաստան և մի ժամանակ ապաստանելով Վարագայ սարում, որպէս աւանդ՝ թողել են այդտեղ Ս. Նշանն. որն այդպէս հրաշալի տեսլեամբ յայտնվում է ուրմն երբ. դարում։

հական բուրումները զմայլեցնում են այցելուին չ'հեռանալ երբէք այդ չքնաջղեղ դրախտից։ իսկ սառնորակ և զզզուն աղբերաց ակն ու ակունք անհաշիւ, որոց մէս անուանի է Քրիստոսի աղբիւրն, արտարև աղբիւր ջրոյ կենդանութեան բղխեալ Վարագայ սարից, ծաղկաւէտ քարից, որն թարմացնում զուարթացնում է զմարդ։ Հանդէպ լեռան վարագայ է, հայ ոստուածոց Մայր-Թագուհոյ Աստղկան բերդը, թէք ընկած վարագայ լեռան հարաւային կողմից։

Վերին վարագայ ուղտաղնացութեան տօնը լինում է առաւելապէս Համբարձման հինգշաբթի օր, ուր դիշերումն բազմաթիւ երիտասարդ ուխտաւորները, տեսնելու ծաղիկների ողջագուրանքն-համբուրվելն։ Այս օրն ու դիշերը ունին իրանց խորհրդաւոր նշանակութիւնն։ Շատերը զոգորուած սիրոյ կրակով չափում են ծաղիկներ. կապում են փունջեր զոյն զգոյն ծաղիկներից ի դարձին ընծայելու իրանց սիրելեաց։ Հագիւ թէ արշալոյս սկսած և Արուսակն իւր ձէգն եվեցեցուցած Շաղաթաթախ աղօթարանի հետ, խումբ խումբ, շարան շարան սկսում են իրանց վերելքն դէպի Գալլեան, Վարագայ սարի ամենաբարձր գագաթնակէտն, ուր ամփոփուած է եղել մասն խաչափայտ Ս. Նշանի. համբուրել, ծնրադնել, երգել խաչին շարական «նշանաւ ամենայաղթն»։ Այդ վերելքն իւր դժուարութեամբ շատերին է յետս կասեցրել և չի կարողացել փափագին հասնել, կէս ճանապարհից դառնալով։

Յիասթափումն է մարդս այդ գագաթնակէտից իւր չորս կողմն դիտելիս, մանաւանդ երբ պարզ է լինում երկինք. երբ խաղաղ է բնութիւնը։ Անարգել հորիզոնը օգնում է տեսնելու աիեկերքի ոքանչելիք որչափ որ օգնում է մարդոյ աչաց լուսաւորութիւնը։ Հեռուն շատ հեռուն. հիւսիսից տիրզերքի մթնոլորտում տեսնվում են ալեոր Մա-

սիմների. Նպատի. Արագածի ձիւնապատ գագաթներն և նոցա ամբողջ շրջակայքը։

Արևմուտքից Կապուտակ ծովն Վանայ՝ իւր ամբողջութեամբն բոլորապատ Բերկրի, Քաջբերունի, Խոռխոռունի (բուլանըղ) Բզնունի, Գնունի, Ռշտունի գաւառներով որպէս պարունակուած մի միջավայրում. բոլորը՝ պատկերանում են առաջեղ։

Վերին Վարագից մինչև ստորին Վարագայ վանքն հասնելիս. պատահում ենք և մի քանի սրբատեղերի էլ. դուցէ դոցանից շատերն ես մոռացել եմ։ Այդ ճանապարհի վրայ են ընկնում «կուսանաց» այը, մի քանի գետնափոր մատուռներ և այն բազմաճղանի մկնալուշի ծառն, որոյ ներքև ոչ սակաւ ուրախացել են ուխտաւորք։

Ոլորապտոյտ ծիղ ձորին ձախ կողմումն է «Ապարանջան» աղբիւր, ըստ աւանդութեան՝ աղբիւրն Զուշան արքայադստերն, ջուրն քաղցրահամ և առողջարար որպէս մի փոքրիկ ջրվէժ զառիվայրից թափվում է մեծ առուին մէջ։ Դորա դէմուդէմն է և «Կօռ քարն» ուղղաձիգ բարձրացած մի ձիւնապատ լեռ, որն իւր երկարատև ստուերովն, կէս օրից յետոյ, հրաւիրում է խոնջեալ ճանապարհորդին մի հանգիստ, մի պարերգ տալ որոտընդոստ առուի եղերքովն, և կամ թռչել առապարներով պոկել խաւարծիլ, այդ թթուաշ բոյսովն բերանն զովացնել։

«Կօռքարի» ստուերում շատ անգամ բազմում է վանքի միաբանութիւնը երբեմն «ժառանգաւոր» սաներով մէկտեղ։ Այդ անցեալ. խաղաղ ու երջանիկ օրերումն է եղել որ՝ թարմ գրամագրութեան տակ երգել է բանաստեղծն իւր հետևեալ սրտառուչ տաղն.

«Խողոջացող քար ավագ»
«Մի սողոսկար շուտափոյթ.»
«Կաց դու վայրիկ մի 'ի համբեր,»
«Վշտագնելոյս լեր ընկեր և այլն։»

Բնութեան ամեն գեղեցկութիւնով պճնուած Վարագ՝ մի լիաբուղխ ջրամբար է ստորև գտնուած դաշտերի, հանդ ու հանդաստանների։ Թողունք այն հարիւրաւոր աղբերաց ակն ու ակունք, որոնք դուրս են բխում իւր միջից, և ամեն քայլափոխումդ պատահում ես կլկլացող վտակների, լեռան հարաւային և հիւսիսային լանջերի տակովն, ականներով լիառատ ջուր են բերուել մինչ ստորև, դաշտերն, և Վանայ այգեստանեայց զանազան կենտրոններում բղխած քսանհինգից աւելի աղբիւրների գոյութիւնը սկսվում է լեռան զառեվայրի կող կշտից։ Այդ աղբիւրները այնքան առատ են, որ նոցանից ոմանք պտտացնում են ջրաղացի քարեր բանեցնում են ջրաղացներ և շրջան են կազմել ամեն կողմերն այգեստանեայց։

Այս անցեալ 1896 ի կոտորածին Վարագայ լեռը, հազարաւոր կեանք փրկեց շատերի էլ գերեզման դարձաւ. ուր՝ վտանգի ամենաթունդ ժամանակ ապաստանել էին քաղաքացի և գիւղացի ընտանիք իրանց անասուններով, և պաշտպանուեցան անհաւասար ուժերի դէմ յամառ դիմադրութեամբ։

---

22. Ստորին Վարագ

Կամնոր Մենասեան Ս. Խաչի

Ստորին Վարագ կամ Մենաստան Վարագայ Ս. խաչի, համայն վասպուրականցւոց պաշտելի և խնկելի սրբավայրն է. հոգին ու միտք գրաւող, արդար և մի հոյակապ հաստատութիւն է կառուցուած Վարագայ լեռան հարաւային ստորոտով ընկած մի հարթավայրի վրայ։ Եթէ վանայ այգեստանեայց ուղիղ արևելեան ուղիովն սկսենք գնալ Վարագայ Վանք՝ հետիոտն, ժամ ու կէս կա-

ելի է հասնել եթէ ձիով՝ աւելի շուտ։ Դա ևս նշանաւորելի է այն պատմական հրեղէն սիւներից միոյն, ուր Արծրունի Սենեքերիմ այն բարեբարոյ արքայն, հիմն է ձգում որպէս արքայական Մենաստանի. և հոյակապ որ մերով, սօսասարաս տաճարովն ու կաթողիկէովն սքանչելի է կացուցանում որպէս մայր ամենայն Մինաստանացն Վասպուրականի, 10-երը. դարու վերջերում։ Թուրքերը Վարագայ վանքին կոչումեն *Եէտի քիլիսէ*, եօթն եկեղեցիք և ճիշտ որ Ս. Խաչ վանքի բոլորտիքով, խիստ մօտիկ կան այլ և վեցն տաճարներ զանազան անուններով, որոնցոմանց փուլ եկած կաթողիկէքն, տարբասները, ներքնագաւիթն տակաւին կանգուն մնում են որպէս յուշարձաններ իրանց անցեալ փառազարդութեանն *)։ Այդ տաճարներից միոյն ճակատի քարին վրայ գրուած արձանագրութիւնը Սենեքերիմ արքայի Խուշուշ թագուհւոյ անունն է կրում. հաւանական է այդ տեղ թողուելն։

Վարագայ վանք՝ իւր պատմական, տեղագրական և բնական դիրքովն իսկ հետաքրքրական է եղել շատ եւրոպացի դիտնոց և այցելուաց։ Անցեալ դարերում նա ունեցել է իւր փառաւոր յիշատակներ, շուջն ու շրջապատն, հեռուն ու մօտիկ իւր սահմաններում, տարածվում են հին հին եկեղեցեաց, մատուռներ և գիւղերի աւերակաց կոյտեր, որոնք ներկայումս էլ որպէս սրբաեղիք, ժողովուրդը տալիս է իւր այցելութիւնը. համբուրում եօթն անգամ, խնկարկում ու ծնրադնում։ Քանի Քանի անգամ այդ սրբազան Մենաստանը ենթարկուել է փոքր ու

*) Այդ եօթն եկեղեցիք կրում են հետևեալ անունները. Ս. Դէորդ, Ս. Աստուածածին, Ս. Նշան, Ս. Խաչ, Ս. Յովհաննէս կամ քառասուն աբեղայից եկեղեցի. Ս. Սոֆիա և Ս. Սիոն։ Վանքի արևելեան շրջապարսպի մէջն է նաև դրսից կոչուած պարտաս ծառերով և ծաղկանոցներով զարդարուած պարտէզն, ուր պահում են մեղրի փեթակներ։

մեծ աւարառութեանց, կողոպտուել, թալանուել քար ու քանդ եղել և դարձեալ շնորհիւ ջերմեռանդ ժողովրդի և անձնուրանց վանահայր հովիւների և առաջնորդների կրկին վերանորոգուել է։ Սրանից մօտ երկու դար յառաջ Խոշարայ չիք Զօմար անուն ցեղապետը քուրտ աւազակներով մի անգութ արշաւանք է գործել վանքի և վանականաց վրայ, կոտորել է միաբանութենից շատերին, աւարել տաճարի սրբազան բոլոր սպասքն, քշել է դուարն ու ոչխար և դոցա հետ շատ թանգակին իրեր, արձաթեղէն և պղնձեղէն։

Սրբազան մասունքներից ի վերջոյ, շատ դժուարութեամբ և կաշառքներ կերցնելով, հազիւ թէ ձեռք է բերուել Ս. Նշան մասունքն Մասն խաչափայտի, որն անմիջապէս փոխադարվում է Բերդաքաղաք, Ս. Էջմիածին եկեղեցին և այն օրուանից զգուշութեամբ պահվում է այդ տեղ. նորա համար և եկեղեցին կոչվում է Ս. Նշան։ մենք շատ հեռու չենք կարող գնալ նորա շատ անցեալները քքքրելու։

Վարագայ վանքը 1850—54 թուականներից կորզուելով Վանայ առաջնորդարանի և ազգերի կամայականութիւնից, պատրիարքարանի լիազօր արտօնութեամբ յանձնվում է ներկայ Վեհափառի բարձր հովանաւորութեանն, նորին օծութեան վարդապետութեան առաջին շրջաններում։ Այդ օրուանից սկսեալ Վարագայ Լոյս աստղը փայլում է, իւր բարի համբաւն տարածում է Իսփիւս աշխարհի տարածուած հայոց և հայ գիտնոց մէջ։ Տաճկահայաստանում առաջին անգամ տպարան, մամուլ. ժառանգ. տպրոց, մատենադարան և սոցա նման բարոյական հաս. տատութիւնք Վարագայ Մենաստանում Երևան են գալիս, որոնք իրանց ժամանակին լինելով արդիւնաւոր և օգտաւէտ ապագայնոց էլ օգտակար եղան. մեծ ծառայութիւն մատուցանելով ազգին, թէ՝ վեհ հիմնադրի և թէ՝ վանքի

փառքն ու պատիւ միշտ ակնածելի կայուցին և յաչս օտարաց։

Վասպուրականի «Արծիւն» լրագիրը Նորին Օծո-ւ թեան խմբագրութեամբ իւր վարդապետութեան այն թարմ և կորովալի ժամանակին թէև սկզբում Կ. Պոլսում գոյութիւն ունեցաւ (1855-ին) բայց ապա Արծիւն իւր հայրենասէր թեւքն շուտով սլացաւ ու թռաւ, տեղափոխվեց Վարագայ Ս. Խաչի պատուանդանի ներքև, շարունակեց երբեմն յաջող և երբեմն անյաջող պայմաններով. բայց յօգուտ իւր բնավայրի լուսաւորութեան, յառաջդիմութեան. պատահել է որ 'ի բացակայութեան Մեծ խմբագրին, խմբագրութիւնը կատարուել է երբեմն այս և այն ձառնահատների միջոցաւ, որոնց թուումն էին հանդուցեալ Սրուանձտեանց և պ. Մ, Անանեանց։

Որքան փոխվել են փոխանորդ Վանահայրերը ի բացակայութեան Մեծ Վանահօրն, դարձեալ Վարագայ վանքի բարի ուղղութիւնն նոյն է մնացել։ Հիւրասիրութիւն տնտեսական կառավարութիւնն, ժառանգ. դիշերօթիկ դպրոցի * շարունակութիւնը *ողջամիտ* ազգ. վարդապետութիւնն ունեցել են իրանց օգտակար տեղականութիւնն, մանաւանդ վերջի վանահայրերի ժամանակներում. Մոկացեան հանդուցեալ Մեսրովբ Ծ. Վարդապետի և նահատակ Ալէքսանդրապօլեցի Դանիէլ Ծ. Վարդապետի տոկուն աշխատասիրութեամբ։ Այս վերջինս որպէս ժողովրդական մարդ մեծ յարգանք էր վայելում բոլոր վասպուրականցիներից։ Հանդուցեալը «Արծրուի» Վասպուրականի հետևող և միշտ բարի աշակերտներից մինն էր, դեռ կոտորածից մի քանի տարի յառաջ նա վարում էր Վարագայ մինաստանի և Արջակայ Վանուց փոխ-առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը. բայց աւադ. որ 1896 ի կոտորածի

*) Ժառանգ. դպրոցի սկիզբն է 1857 թ. մարտ 1-ին։

երկրորդ օր (յունիս 4) երբ այգեստանից քաղաք էր իջնում, օգնութիւն հայցելու իւր բարեկամ Նահանգապետ *) Նազիմ փաշայից, որից միշտ յարգվում էր, ճանապարհին նա ենթարկուեց թուրքերի սաստիկ քանակոծութեան ապա չարաչար սպանութեան...։

Նշանաւոր էր Վարագայ մատենադարան-թանգարան, երկարժամանակի մի աշխատութիւն. ուր գասաւորած էին զանազան կարգի հին և նոր, ձեռագիր թէ տպուած, ընտիր ընտիր բարոյական, իմաստասիրական, գիտական, պատմական և այլ մատեանները ընդ կառավարչութեամբ մեծ. պ. Խորէն Խրիմեանի։

Վարագայ վանք իւր ամենայն բարոյական օգտակարութեամբն արդէն հռաչակուած էր. երբ 1867—67 թուականներին Վանայ և Հէքարիի (հին Աղբակ) նախորդ երկու կուսակալ եղբարք յաջի Ահմէտ և Ապտուլլահ փաշաները, այցելում են վանք ընդունելով պատուաւոր հիւրասիրութիւնք հիացումով ասում են *) «Արդարև ուրախալի գործ, ցանկալի էր որ՝մեր մէտրէսէներն ևս (Ատուածաբանական դպրոց) սոյն օրինակելի ընթացքին հետև էին որպէս Ասիայի խորքերում գտնուած այս Մանաստրը (վանքը) կարող է ժամանակին մեծ օգուտ տալ թէ կայս· կառավարութեան և թէ հայոց հաւատարիմ ազգին» և այլն...։

*) Նահանգապետ Նազիմ փաշանը բնաւհամակիր չէր տեղի ունեցած սրածութեանց, նա Վանի կոտորածը յապաղեցրեց և շատ անգամ առաջնորդարանի միջոցաւ խորհուրդ է տալիս զգուշանալ՝ տեղիք չտալ· սակայն անգուտ եղաւ. ինչոր անելու էին արեցին, և ինքը հէնց կոտորածի միջում պաշտօնանկ եղած՝ կանչուեցաւ Կ. Պոլիս գնալ։

*) Վերոյիշեալ խօսքերի ամբողջութիւնն և յիշեալ փաշաների այցելութեան նկարագրութիւնը գուցէ ընթերցողաց պատահած լինի նոյն թ. «Արծուի» Վասպուրականի թերթերում։

Վարագայ մամուլը բացի իւր «Արծիւ» ամսագիր հրատարակումից, նա տպագրել է բազմաթիւ պատմական, ողբերգական, վիպական գրքեր և դասագրքեր էլ, որոնք արդէն տարածուել են Վասպուրականի ամեն ուսումնարաններում։

Մեր մանկութեան, ուսանողութեան օրերից սկսեալ տեսել ենք որ՝ Վարագը եղել է ազատանարան որբոց և այրեաց. իջևան ծանօթից և անծանօթից, հիւրընկալասպնջական ամեն դասակարգի հոգևորականաց, բարձրաստիճան թուրքաց, եւրոպացի դեսպանների, գիտնոց և բազմաթիւ ճանապարհորդաց, որոնք՝ բոլորեքեանք ևս զոհ սրտիւ մեկնել են այդ Ասիական Վենետիկից, հայոց նահապետական այդ սուրբ օջախից։

Չ'նայելով այն անձուկ դրութիւններին՝ որոց երբեմն ենթարկուել է վանքը, դարձեալ միշտ պակաս չեն եղել ժառանգ-դպրոցում 30—40 ի մօտ գիշերօթիկները թէ թեմական գիւղերից և թէ այլ և այլ գաւառներից։ Վարագայ ժառանգաւոր աշակերտներից վարժապետ։ վարդապետ, քահանայ, վաճառական, արհեստաւոր ամեն տեղ ու քաղաքում, գիւղերում կարելի է գտնել, որոնք ամենքն էլ մեծ երախտագիտութեամբ և ակնածութեամբ յիշում են իրանց սիրեցեալ Վարագ և նորա վերանորոգութեան Վեհ բարերարն։

Այդ պատկառելի հաստատութիւն, յուսալի էր օրից օր աւելի ընդարձակէր իւր բարոյական գործն, եթէ ժամանակ և հանգամանքները նպաստաւոր լինէին։

1886—89 ին հրամանաւ Նորին Օծութեան, Վանայ. նախորդ առաջնորդ հանգուցեալ Գրիգորիս արքեպիսկոպոս Ալէքսիջեանը 'ի հիմանց վերանորոգից ժառանգ. դպրոցն. ննջարանը, տպարան և այլն մի քանի հին շէնքերը, աւելի պիտի ընդարձակուէր նորա ուսումնական ծրագիրն։ եթէ անգութ ժամանակը չ'խլէր մեզանից այն քաջարի

հոգևորականը։ 1781—82 թ. բացուեց այդ վանքում երկրագործական դպրոց, Կ. Պոլսոյ «Սովելոց» յանձնաժողովի իրաւասութեան տակ, բայց զգալի պատճառներից ստիպեալ փակուեց, առանց զգալի արդիւնքն ունենալու, բայց ժառանգ, դպրոցը միշտ շարունակելի մնաց։ 1892 թ. տպարանը արդէն կնքուած էր և վերջ Մամուլն իւր պարագայիւք բերուեցան քաղաք կառավարութեան «Վան» թուրքերէն լրագիրն տպելու։ Այժմ Վարագայ Մենաստանը զրկուած է իւր անցելումն ունեցած շատ մի առաւելութիւնից. միխիթարական միայն այն է որ՝ օգնող բարերար ձեռները չեն դլանում նորան օրից օր վերականգնելու և աւերակները նորոգելու. ժառանգ, դպրոցի դրութիւնն աւելի բարեկարգելու, որ առ այս Նորին Օծութիւնը երբէք չէ մոռանում իւր սիրելի Վարագ իւր անմոռանալի Սրբավայրն։

Հրաշալի է Մայր տաճարն իւր հոյակապ գաւթովն, որոյ որմերի և սիւների վրայ նկարուած կ'մնան պարթևական Գրիգորի, Սահակայ, Ներսէսի Տրտաղայ և այլ պատկերներ, ծաղկանկար ստուերագծեր։ Գաւթի աջակողմ դասումն են հանդչում մեծագործ* Սենեքերիմայ, Նորա Խուշուշ թագուհւոյ, Պետրոս գետադարձ հայրապետի նշխարքն՝ ծածկուած մետաքսեայ կտորներով։ Այդ սքանչելի դրախտամեան վայրն ու վայրասաանն, որպէս ամարանոց, որպէս օդով ջրով առողջավայր զրօսատեղի, տարուայ երեք եղանակումն էլ ունի իւր այցելուն, իւր ուխտաւորն, 'իթիւս որոց և հայ, թուրք ուսանողները իրանց ուսուցիչներով։ Վարագայ վանք իւր թեմումն ու-

*) Արծրունի Սինեքերիմ ալքայն և Պետրոս գետադարձ Հայրապետը նախապէս թաղուել են Սեբաստիա և ուր կայ նոցա անունով տեղք. սակայն իրանց կտակին համաձայն նշխարք փոխադրուել են Վարագայ վանք, որոց հետ և բերվել է Ս. Նշան մասունք։

նի քանհինգից աւելի գիւղեր, որոնց մէջ է Արշակ աւանը իւր Ս. Աստուածածին վանքով։ Վարագայ թէմականքն բացառութիւն են կազմում միւս գիւղերից, ուր որ գնաս նախակրթարան դպրոց, ուսեալ և զարգացած երիտասարդներ, և դա իհարկէ վանքի ժառանգ. դպրոցի և միաբանութեան արդէն ցոյց տուած շնորհիւն է։

---

23. Շահբաղու կարմիր Ս. Աւետարան

Այգեստանեայց հիւսիսակողմն՝ հազիւ կէս ժամ հեռաւորութեան վրայ, Շահբաղի անուանի գիւղի եկեղեցւոյ մի զգուշաւոր պահարանում պահվում է Կարմիր Ս. աւետարանն։ Այդ աւետարանը բաւականին թանգագին մի հնութիւն է, զօրքն ու զօրութիւնը աւելի է կարմրախտ և կարմիր վէրք ունեցողների վրայ, միշտ հրաշալի է ախտաժէտների և լուսնոտների, դորա համար էլ ամեն կիւրակէ և տօն օրերին իւր յատուկ ուխտաւորքն ունի։ Կարմիր աւետարանը իւր հրաշքի հետ մէկ տեղ ունի իւր շուրջն ամեն աննման որթատունք, առատ մրգաւէտ այգիներ, զեղեցիկ պրակներ, միշտ թարմ՝ կանանչազարդ մարդ ու մարգագետինք, որոնց մէջ ուխտաւորք, զրօսաշրջիկ երատասարդները կատարում են իրանց ուրախութիւններն յետ կատարելուց ս. ուխտն։ Ասենք որ՝ ճշմարիտ է ջեռմեռանդ կանայք և ցաւագարները դիմում են յոտս Կարմիր աւետարանի իրանց ցաւ չօրին բժշկութիւն հայցելու. բայց շատերն էլ քէֆամոլ մարդկանցից գնում են այդ գինիեաց մառանն իրանց կոկորդն թրջելու, այցելութիւն նորա կարմիր գինիին, մեղրանման շիրային, էծապտուկ խաղողին...։

Չնայելով դեռ այն նահապետական-գինեգործութեան հին սիստեմին, և այդեգործութեան պարզ պարագներին, Շահբաղու գինին ու խաղողն ըստ վկայելոյ Եւրոպայի դեսպաններին, կարող են մրցել Կախէթի և Խարբերդի ընտիր գինիների հետ։ Շատերը դեռ այդեկութ չսկսած արդէն կանխավճար են լինում գիւղացիներին, իրանց ունեցած գինին նախապէս իրանց տուն ուղարկելու. նմանապէս անուանի է դեղձն։ Գիւղից մի կէս վերստ հեռաւորութեան վրայ է գտնվում Շահ-բաղի, շահի այգին, որոյ խաղողն ու գինին առաջինն է գտնուածների։ մէջ։ Պատմում են որ՝ Շահ-Աբասը Վան պաշարելիս, եօթն տարի սպասել է այդ գիւղում, մինչ տնկած այգւոյ բարն պտուղն վայելել՝ ապա հեռացել է։

Շահ-Բաղի գիւղը բայց ընդարձակ որթատունկ այգիներ ունենալուց, ունի ընդարձակ հովիտներ, դաշտեր և բերրի վարելահողեր էլ. որոյ նախանձելով ինչոր մի շէյխի որդի շէյխը վերջի տարիները սկսեց դատ բանալ գիւղացւոց դէմ՝ իւրացնելոյ այդ հողերի զրէթէ մեծ մասը։ Երկար ձգձգուեցաւ այդ անսպասելի դատը և տակաւին առ կախ մնալով վրայ տուեց 1896 ի հանրային կոտորածն։

Դէպքից վերջ՝ կաթոլիկ կղերը ամենից շուտ փութաց խեղճ Շահբաղեցւոց վիրաւոր հոգոյն սպեղանի դընել, առանց մտածելու նոցա նիւթական թշուառութիւնը, երկպառակտութեան մի կայան դարձնելով գիւղն. շատ անբաւականութեանց տեղիք տուեցին...։

Շահբաղի գիւղ Վասպուրականի գինեամբարն է։

24. Ակռբու Ս. Աստուածածին

Այգեստանեայց և Շահբաղի գիւղի մէջ տեղ ընկած ճանապարհի վրայ մի փոքր մաս թուրքարնակ թաղ։ Այդ

թաղի հիւսիսակողմն բարձրացած ժեռ ապառաժ քարի ստորև կայ մի փոքր մատուռ, Ակռբու Ս. Աստուածածին անունով, որն բորոտների և այրուածք ունեցողների յատուկ սուրբն է, որին դիմում են ամեն օր, լուացվում են և ցեխոտում են ամբողջ վիրատեղն, ապա կրկին լուանում են ցեխն ու կաւը և դա լինում է բորոտների բժշկութեան առաջին նշանը։ Հաւանական է որ բանի մի երբորդ անգամ կրկնվում է այդ և դուցէ ըստ հաւատոց էլ, ինչպէս կոյրին նման բժշկվում են իրանց վէրքերից, մատաղելով սուրբին մի զառ կամ մի հաւ։

Այդ ապառաժ քարափը (Ակռբու քար) իւր վրայ շատ ժողովրդական ասացուածքներ ունի, ոմանք կարծում են որ դա լինի ժողովրդական հիքեաթի հերոս Մբհերի (Միհրանի) բերդ, ոմանք Ռուստամի և ոմանք Թըլոլ Դաւիթի, և այլ ոմանք ուրիշ գաղափար ունին այդ երկարացած մարդաձև երկու արձանանման քարերի վրայ, որպէս թէ մի հին նշանաւոր հարս ու փեսայի, հերոսի և հերոսուհւոյ քարացած պատկերներ լինին, որոնք դրժելով իրանց ս. ուխտն. չեն արժանացել թաղն ու պսակին և հէնց եկեղեցւոյ դռան էլ քարացած մնացել են։

Ակռբի կամ Աղբեօփրի (սպիտակ կամուրջ) թրքաբնակ թաղը մի կատարեալ Արշակաւան է. այդտեղ են ապաստանում և օգնութիւն գտնում այն ամեն չարագործները որոնք շատ անգամ խոյս են տալիս կառավարութիւնից։

25. Լեզի կամ Լեսկայ Ս. Ամենափրկիչ

Վանայ Բերդաքաղաքի ուղիղ դէպ հիւսիս հազիւ մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնվում է պատմական Լեզի հայաբնակ գիւղը որոյ կենտրոնում գտնուած բնական, բարձր քարափի վրայ 'ի հնոց շինել են մի փոքրիկ ե-

կեղեցի Ս. Ամենափրկիչ անունով, ճիշտ այն տեղ, ըստ աւանդութեան, ուր եղել է զոհարան Լէզի աստուածների։ Լէզայ Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ տօնակատարութիւնը, օբանը, կատարվում է ճիշտ Կարմիր կիւրակէին (զատկին տասնհինգ օր վերջ) ուխտաւորաց խիտ բազմութեամբ, թէ քաղաքից թէ հեռու գիւղերից լցվում է նորա շուրջն երիտասարդ տղոց և աղջկանց զուգված զարդարուած խմբակները իւրաքանչիւրն իւր սրտի առարկան այդ տեղ փնտռելու։ Բարձրացած քարափին շուրջն և այգիներում պար բոլորած երգում են ու պարում անընդհատ բոլորելով իրանց պարերի կերպ կերպ շրջանը, և ոմանք մրջիւնների երամի նման չեն զգաղարում իրանց ել և էջն անելու Ս. Մատուռին, խաչքարերին իրանց ջերմ համբոյրն դրոշմելուց։

Գեղեցիկ Նահապետին Արայի լիզող աստուածների բնավայր զոհարանում և դեռ ներկայումս էլ, հայոց աղջիկները չ'մոռացած իւրեանց լսածն ու կարդացածը. բաղդ գտնելու յուսով, երեք անգամ քար են ձգում և անում իւրեանց խորհրդաւոր ուխտն։ Լէզի գիւղը իւր գեղեցիկ դիրքով որթատունկ այգիներովն, արգաւանդ հողերովն պակաս առաւելութիւն չունի Վանայ արուարձաններում. բայց 96-ի կոտորածին էլ պակաս թշուառութիւնները և հարածանքներ չ'կրեց իւր դրացի սրիկայ քնչուներից, որոնք օրն ի բուն Լէսկցւոց առատ հաց ու կերակրովն էին ապրում։

26. Աւանուց Ս. Յովհաննէս Մկրտիչ

Վանայ Ծովի արևելեան ափին գլխաւոր նաւահանգիստն է Աւանս կամ Աւանց գուտ հայաբնակ գիւղը, որոյ եկեղեցւոյ աջակողմեան տաճարն կառուցվել է յանուն Ամենազուսյն Յովհաննէս Մկրտչի։ Այդ տաճարի անուան

հին եկեղեցին ու տաճարն գտնուելով աւելի խիստ մօտիկ ծովակին՝ դարոյս սկզբներին դեռ կիսաքանդ որ մնրովն երևում էին ծովի եզերքով, բայց հետզհետէ և նա իսպառ կուլ գնաց մեծամեծ ալիքների և տեղի ունեցած մակընթացութեանց, ինչպէս և հին Աւանս գիւղը իւր ամբողջութեամբն։ Այս նկատելով հին հեռատեսող նախնիքն Աւանցիների, կանխամտած՝ ծովից բաւական հեռու՝ այգեստաններայց մօտիկ՝ շինել են նոր Աւանս գիւղ և թէ եկեղեցին և տաճարն համանուն հնոյն։

Ս. Յովհաննէս Մկրտչի համբաւն մեծ է ամբողջ նահանգում, նորա տօնակատարութիւնը կատարվում է իւր յատկացեալ տօնին և գատկի երկուշաբթին. քաղաքացւոց մեծ մասը այդ տեղ է հաւաքվում։

Աւանս գիւղը ինչպէս գլխաւոր արուարձան Վանայ և խիստ բանուկ նաւահանգիստ ծովակին, ունի շատ առաւելութիւններ և հետաքրքիր կողմեր։ Դա բերդաքաղաքացիների գլխաւոր ամարանոցն է, որոնք ունին այդ տեղ բազմաթիւ խնամուած որթատունկ այգիներ և պրակներ, վարելահողեր և գեղեցիկ շէնքերը այգիներում։ Սկսեալ գարնանամտից մինչև վերջի աշունք, այդ աւանը մի ինչ որ կրկին կենդանութիւն է առնում։ Ամեն կիւրակէ և տօն օրերին նոցա այգիները լիքն են թէ ուխտաւորներով և թէ զուարճասէր թուրք, հայ երիտասարդներով և շատ անգամ երկսեռ բազմութիւն, որոնք և ծովում լողանալուց վերջ՝ իրանց հանգիստն ու թէյն այդ զուարճալի վայրերումն են վայելում։

Բացի այս առաւելութիւններից այդ գիւղը թէ որպէս արուարձան՝ երկրորդական վաճառանոց է նահանգի ազգարնակութեան. այդտեղ է լինում ցորենի. ալիւրի. գարիի, ածուխի մեծ առուտուր և Աւանցիներից մեծ մասը ինչպէս ճարպիկ նաւավարները խիստ օգտվում են այդ յարաբերական առուտուրից, որն ունենում են

շրջակայի բոլոր գաւառների և գիւղերի հետ։ Աւանցիքը շնորհիւ այդ նաւավարութեան՝ վերջի տարիները չափաւոր հարստութեան տէր դարձան, իրանց բնակարանները վերանորգելու և զարդանելու հետ չ՚մոռացան դպրոցն ու եկեղեցին էլ գեղեցիկս նորոգել և շինել։ Բայց դորա հակառակ վերայ հասաւ 96 թ. այդ պատուհասի տարին. տուժեցին չարաչարն, ամբողջ գի՛ղն լի հարուստ կահ-կարասիներով թողած խուժանի կամայականութեան, ապաստանեցան իրանց նաւերին, և դոցանով էլ փրկուեցան սպանութիւնից և կոտորածից։ Նաւերը լիք խառնիճաղանճ ժողովրդով ամբողջ տասնհինգ, քսան օր տանուեցին ծովի վրայ, երբեմն պակասած հացն ու ջուր առնելով Լիմ, Կռուց անապատներից։ Ընդհանուր աւարի հրկիզութեանց մէջ, այրել էին եկեղեցին և դպրոցն։ Տեղի ունեցած սպանութեանց մէջ յայտնի են Տէր-Մկրտիչ և բարեհամբաւ Յարութիւն աղայ Աղաւնեան, հայր բժիշկ Գրիգորիս Աղաւնեանի։

ՎԱՆԱՅ ՀԻՍՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄ ԳՆՈՒՆԵԱՑ—ԹԻՄԱՐ-ԳԱՒԱՌԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

27. Կտուց անապատ—Ս. Կարապետի վանք

Մտնենք այժմ պատմական Գնունեաց—Թիմար գաւառ։ Միշտ դեղածիծաղ և ծովահայեաց վայրերն, որոնց տեսքն ու տեսարան, միմեանց վրայ բարդուած, հայաբնակ այգեպարդ գիւղերն ու աւանները դեռ հեռուից հեռու՝ մի ինչ որ գրաւիչ ներգործութիւն ունելով, ճանապարհորդին անձանձրոյթս գրաւում են հետակրքրուել իւր Սրբավայրերովն։ Վան քաղաքից ուղիղ դէպ հիւսիս խճուղիով սկսենք մեր գնացքը վեց ժամ հեռաւորութեան

վրայ՝ ծովակի արևելեան ափում, ահա դեռ չ'մօտեցած կղզուն, տեսնվում է Կտուց անապատի Ս. Կարապետի վանուց մեծատարած ագարակն, վանից տունն, իւր ընդարձակ մարգ ու մարգագետիններով, հանդերով, այգիներով և պրակներովն, որոց և հանդէպ ցամաքից քիչ հեռու. ծովացումն, կղզու վրայ կառուցուած եկեղեցին ու տաճարն յանուն Ս. Կարապետի։

Կղզինը բաւականին հարթ տարածութեան վրայ ունի հարթավայրը, որոց մի մասում, որպէս վարելահողերի ցանում են հացահատիկներ և այլ հունդեր, և մի մասումն են խնամքով պատրաստուած, մեծ ու փոքր պարտէզներ, բանջարանոցներ, որթատունկ բարունակները յատկացած այս և այն վարդապետի և մոնթի որպէս իրանց աշխատութեան արդիւնք։

Եկեղեցւոյ և տաճարի վերջի նորոգութիւնը կատարուել է Աղթամարու կաթուղիկոսներից միոյն աշխատութեամբ, որ ժամանակ կղզինը նոցա թեմին է պատկանել. ապա վերջի ժամանակներում անցել է Վանայ Առաջնորդարանին։ Եկեղեցւոյ շուրջն բոլորակի պատում են նեղլիկ ու մութ քանի մի նրբանցքներ, և այդ անցքերի երկու կողքովն 20—30 ի մօտ մութ ու խաւարչտին խրցիկներ, ճգնարանները աշխարհից զրկուած միայնակեցիների համար, ուր անդադար գիշեր ու ցերեկ, սաղմոսն ու նարեկ իձեռին, ծնկաչոք մտածում են իրանց հոգւոյ փրկութեան հոգս։ Անտանելի կեցութիւն, զրկուած բընութեան ամեն բարիքներից, վարժուած այդ չարքաշութեան, միշտ մի օրինակ կեանք...։

Այդ թշուառներից ոմանց ոչ կերն է յայտնի և ոչ կեանք. ամբողջ շաբաթ պահս. միայն շաբաթ և կիւրակի օրերումն հազիւ իւղի երեսը տեսնում են։ Միս ուտելը տարուայ ամբողջ ընթացքում հազիւ թէ պատահի մի քանի անգամ։

Կղզու տեսարանը պակաս չէ դրսում եղած ագարակի տեսարանից, զանազան տեսակ մրգաւէտ ծառերը բազմաթիւ նշենիները աւելացնում են նորա, շուքն ու շուաք, որոց ստուերներում, շատ անգամ պատահել է տեսնել, աղօթող միայնակեցիների, աչազուրկ մոնթերին լռիկ ու մնջիկ մրմնջալ իրանց սաղմոսն։

Դեռ (95 թ.) կոտորածից առաջ ունէին ժառանգ. դպրոց. թեմի մանուկներից հազիւ մի քանի մոնթ-տիրացու պատրաստելու. անտակդ և անպայման դրութեան։ Զանազան ժամանակներում թէև փորձերը շատ են եղել հանելու դոցա այդ խաւար մթնոլորդից, բայց ապարդիւն է եղել բոլոր աշխատութիւնք. նորա դեռ նոյն են։

1848 ին քուրդ ցեղապետ յայտնի ապստամբ Բէդրխան բէկի և նորա ստորադաս խան-Մահմուդի ձեռքով Գրնունեանց գաւառում եղած արշաւաքին կողոպտուել են թէ Կտուց թէ Լիմ անապատների վանքեր, տեսնողները վկայում են այդ։

Այս անցեալ 1896 ի հանրային դէպքին էլ վանքի ագարակը ոչ պակաս թշուառութիւն կրեց իւր մօտիկ հարևան Ձէվրցի և Մալակասրմցի քրդերից և թուրքերից։

Կտուց անապատի Ս. Կարապետ Վանուց ուխտը կատարվում է Վարդավառին. ուր հաւաքվում է ստուար բազմութիւն. բայց Եւայի աղջկերանց խստատ արգելուած է մտնել կղզին, չ'խանդարելու ճգնաւորների խաղաղը։

28. Ալիւր գիւղի Ս. Աստուածածին վանք

Կտուց անապատի ագարակից դէպ հիւսիս-արևելք՝ հազիւ մէկ ժամ հեռաւորութեամբ գտնվում է Ալիւր բազմահայ գիւղը, որոյ բացի գիւղական եկեղեցուց կայ նաև մի փոքրիկ վանք. յանուն Ս. Աստուածածնի ընդ

իրաւասութեամբ Կոուց անապատի, բայց ամեն կողմից անշուք և անպայման դրութեան։

Այդ փոքրիկ վանքը թէև ունի իւր որոշ սեպհական կալուածները և նոյնչափ գիւղատնտեսական պարագաներ, բայց առի չ'գոյէ մշտական Վանահօր և օրինաւոր տնտեսութիւն, այդ բոլոր հողերից ու հանդից օգտվում են ուրիշները։

Գնունեաց գաւառում Ալիւր գիւղը անուանի է իւր ընտիր այգիներով ու պարտէզներով, արիւնի պէս կարմիր և թունդ գինիովն, ևս առաւել իւր միջում գտնուած պարտիզպաններով որոնք Գ. Պօլսոյ մէջ մեծ համբաւ ունին իրանց այդ ճիւղի մասնագիտութեամբ. հայ, յոյն և թուրք երևելիների այգիների, պարտէզների մշակութիւնը ընդհանրապէս յանձնվում է սոցա և Բուլղար պարտէզպաններին որոնք այդ պատճառով էլ տարիներով ծընդավայրի երես չեն տեսնայ. և չորս հարիւր տանից բաղկացած այդ գիւղը միշտ դատարկ է տղա-մարդկանցից։ 1882 թուականից սկսեալ գիւղումը, որպէս Գնունեաց գաւառի կենդրոնում, հաստատուել էր «Միացեալ» ընկերութեան առաջնակարգ նախակրթարան, բայց վերջ աննպաստ հանգամանքների տակ ստիպուեցան փակել դպրոցն։ 1896 ից մի քանի ամիս առաջ Ալիւր գիւղը չ'վրիպեցաւ իւր գրացիների թուրք քուրտ խմբակների աւարառումից, նորա էլ իրանց բաժինը տուժեցին։

Ալիւր գիւղի շուրջն են հետևեալ բազմահայ գիւղերը. Խավենց, Խժիժկ, Քօչանի, Մարմետ՝ ուր կան բրուտի քանի մի գործարաններ- Ամիկ բերդաւան, որոնք ամենն էլ ունին ընդարձակ որթատունկ այգիները։

29. Էջմիածնայ վանք

Կոուց և Լիմ անապատների ճանապարհի կիսում,

ծովի արևելեան ափում գտնվում է այդ փոքրիկ վանք, յանուն Ս. Էջմիածնի, որն ըստ աւանդութեան բնակավայր է եղել ճգնող անապատականների, որոց վրայ և իջել է երկնային լոյս և ունեցել է իւր նշանատեղին։ Փոքրիկն Էջմիածին վանքը իւր ամենայն կայք ու կալուածովն պատկանում է Լիմ անապատի վանուց և նորայ հաստատուն ագարակն է գիւղատնտեսական ամեն պարագայիւքն կարգ ու սարքովն.

1875—78-ից սկսեալ այս ագարակում տնկուել են բազմաթիւ թթենիք, շինուել են շերամապահութեան համար յատուկ սրահներ և վերնայարկի սենեակները որոշ որոշ բաժանմունքներով և պարապում են իսկ շերամապահութեամբ. բայց շատ հին և աննպաստ եղանակաւ, որոյ տուած արդիւնքը երբէք չէ պատասխանել ծախսին, պատահել է որ շատ տարիներ էլ, թթենիք մնացել են անմշակ և անխնամ. գուցէ և այժմ իսկ, որովհետև անապատներում ապրողների ճաշակը դեռ չէ նրբացել։ Ս. Էջմիածնի կառավարութիւնը յանձնվում է մի վանահայր վարդապետի, որն նշանակվում է անապատի վարչութիւնից։

Տօնակատարութիւնը կատարվում է ամեն նաւակատեաց տօներին։

30. Երէրնայ Ս. Սահակ

Անցնելով Էջմիածնից, կտրելով ծովի արևելեան եզերագիծն՝ մէկ ժամ ճանապարհորդելով հասնում ենք Երէրին ծովահայեաց բազմահայ գիւղն։ Սորա հարաւային կողմում բարձրացած լեռնադաշտի մի վրայ գտնվում են ցրիւ ընկած մի քանի աւերակ խցիկներ, նոցա միջում աւերակ տաճարն և դա է Երէրնայ Ս. Սահակայ վանք կամ ուխտատեղին։ Ներկայումս այդ հին աւուրց աւերակներից

մնացած զարդն ու զարդարանք՝ միայն մի փոքրիկ մատուռն է, որոյ շուրջ պատում է տօնասէր հայ գիւղացին և անում է ուխտն։ Տեսարանը յայժ գեղեցիկ է Էրէրնայ սարին և Ս. Սահակի սրբավայրին. չորս կողմից գիտելիս Վանայ գլխաւոր գաւառները, կապուտակ ծովը մեծամանութեամբ իւր վրայ ճեմող նաւերովը պատկերանում է առաջիդ. Գնումնեաց երկրի ամբողջ գեղաստանք իրանց սահմաններով, և դոցա բոլորից յետոյ, սարին ստորոտում Էրէրնայ մրգաստանք և որթատունկ այգիները որոնք հրապուրիչ են իրանց միշտ թարմութեամբ։

Ս. Սահակը Գնումնեաց երկրի ամենամեծ սուրբն է և հրաշալին մանաւանդ աչկացաւ ունեցողներին որոյ լուսատու բժիշկն է։ Վարդավառի կիւրակէին սուրբին յատուկ տօն է կատարվում, գաւառի զանազան կողմերից հաւաքվում են այդ տեղ բազմաթիւ ուխտաւորք, երկու սեռից էլ, մեծ մասը երիտասարդներ, և 'ի պատիւ սուրբին այդ օր. Մատուռին մէջ կատարվում է Ս. պատարագ, յետ որոյ, ուխտաւորք դիմում են Էրէրնայ այգիներ, ըստ սովորականին կատարում են իրանց պարերգ։

Էրէրէն գիւղը իւր այդ մրգառատ այգիներովն, խաղողովն ու դեղձով, խիստ գրաւիչ է, և այդ պատճառով իսկ՝ շատ անգամ ենթարկվում է թուրք պաշտօնեաների կամայականութեանց և անպայման ծախսերի։ Զէվրցի քրդերը 1896-ի հանրային կոտորածին՝ հասան իրանց ցանկութեան, աւարելով այդ հարուստ գիւղին։

31, Լիմանապատ—Ս. Գէորգայ վանք

Լիմ-Անապատ կամ կղզին՝ Բզնունեաց ծովի կղզեաց մէջ ամենամեծ և ընդարձակ կղզին է. գտնվում էհիւսիսարևելեան կողմն, դէպ Արջէշ գաւառ տարածուած ծովախորշում. եղերքից մօտ մէկ վերստ հեռաւորութեան վրայ։

Կղզում չ'կան բարձրացած լեռներ և բլուրները—նորա ամենամեծ մասը հարթ տարածութիւն է. ուր կան մշակելի վարելահողերը—արօտատեղերը, փոքր և մեծ այգիներ, բազմաթիւ նշենիք, որոնք բուսել են քարքարոտ տեղերում. պարտէզները որոնցից բացի զանազան բանջարեղէններից ստացվում է նաև շատ առատութեամբ սեխ ու ձմերուկ։

Այդ կղզու աւելի հարթ մի տարածութեան վրայ, արևելեան ծայրումն, կառուցուել է հոյակապ եկեղեցին է իւր փառաւոր տաճարովն կաթուղիկէով յանուն Սրբոյն Գէորգայ։ Լիմ անապատումն ևս կ'տեսնենք այն ամեն անձկութիւն և չարքաշ կեանքը որն տեսանք Կտուց անապատում. նմանօրինակ եկեղեցւոյ շուրջն, նեղլիկ ու մութ անցքեր. երկու կողմից խառն ի խուռն շինուած խցիկներ, միաբան ճգնաւորներին համար. դրութիւն, առօրեայ կեանքը նոյն է գուցէ և սոքա աւելի խստակրօն. որովհետև քաղաքից բաւական հեռու են- մօտաւորապէս ութ ժամ կարելի է հասնել Լիմ անապատ։ Օրական եօթն անգամ ժամերգութիւն, ծոմ ու պահս, զիշերային ժամերգութիւնից յետոյ, եկեսցէ, ապա սաղմոսերգութիւն, ապա, ապա և այն ըստ կարգին մինչ առաւօտեան աղօթք, ահա իրէալ, և խոհերը։

Ճգնարան—խցիկներից երկու քարնկէց հեռաւորութեամբ կայ մի այլխցիկ, հեռու և միայնացած միաբանութիւնից, դա ճգնարան է դարուս սկզբներին յայտնի Գէորգ ճգնաւորի։ Ճգնարան, աղօթարան, բնակարան վերջապէս նորա տուն ու տեղ բոլորը դա է եղել, որոյ ընտիր վարուց և մաքրակեցութեան մասին կան բարոյական պատմութիւնները շատ։ Սրանից մօտ քսան տարի յառաջ. Լիմ անապատի վանքը իւր բարւոք տնտեսական և բարոյական կառավարութեամբ աւելի մեծ հռչակ ունէր շնորհիւ իւր բազմաշխատ վանահօր՝ Թօփուզեանց

Յակոբ եպիսկոպոսի, որն և իւր ժամանակին աստուածաբան քարոզչի համբաւ է ունեցել, և նորա մի շատ տաղաչափական գրուածները տպուել են «Արծուի» Վասպուրականի թերթերում։ Թոփուզեանի մահից յետոյ վանքի կառավարութիւնը կազմալուծուեցաւ, աւելի թշուառ դրութեան կ'հասնէր, եթէ ազգ. պատրիարքարանի լիազօր կարգադրութեամբ հանդուցեալ Պօղոս եպիսկոպոսը չ'հաստատուէր վանահայր և միասին վանայ փոխ—առաջնորդութեան պաշտօնի։

Պօղոս եպիսկոպոսը ինչպէս հեղինակաւոր մարդ, վերականգնեց Լիմանապատի անկեալ դրութիւնն, ընդարձակեց նորա ագարակն նոր նոր շէնքերով. որոյ մէջ է Ժառանգ, դպրոց, ննջարան և վերնայարկումն առաջնորդարան, հիւրասենեակները իրանց կարգ ու սարքովն։ Բացի այդ՝ նա ետ կորդից վանքապատկան մի մաս վարելահողերը որոնցից օգտվում էին այս և այն անձինք։

Գնունեաց գաւառում եղած մօտաւորապէս քառասուն հայաբնակ գիւղերը մեծ մասը պատկանում են Կրտուցը և Լիմ անապատների թեմին. և այդ թեմականքը շատ խիստ կրօնական կապերով կապուած են այդ սրբութիւնների հետ, Լիառատ պտղով և այլ նուերատուութեամբ ընդ միշտ կատարել են իրանց հոգեկան պարտք, բայց ցանկալի էր որ ձգնազգեաց հայը սուրբերն էլ կատարէին իրանց պարտաւորութիւն, առաջ և եթ մատծէին գիւղացի մանկանց կրթութեան հոգսն. այդ ինչպէս ամեն տեղ՝ նոյնպէս և Վանում շատ սակաւ բացառութիւն է լինում...։

32. Ջանիկայ Ս. Աստուածածին—Տիրամէր

(*Ըստ Թուրքաց՝ Միրաք*)

Ջանիկ հայաբնակ գիւղը ըստ կառավարչական շրջանի, կենարոնատեղի է ստորին Թիմար (Գնունեանց)

գաւառի, ուր նստում է Միւդիր (հսկող պաշտօնեայ-պրիստաւ). նորանից մի ժամ հեռաւորութեան՝ գաւառի վերին՝ հիւսիսային ծայրումն է Տիրամօր գիւղ, Միրաք. գիւղի վերի կողմն հոյակապ եկեղեցին ու սպիտակաւուն փառաւոր գմբէթն յանուն Ս. Աստուածածնի։

Ըստ աւանդութեան՝ սրբավայրի ներկայ տեղը եղել կռատուն պատմական Ձիրաք, Ձիրաք և Միրաք աստուածների, զորս խորտակելով Մեծին Ներսէսի՝ տեղումն հաստատել է ուրանոց կամ Վանք գաւառի ազգաբնակութեան համար։ Եւ արդարև մինչ ցներկայ ժամանակս այդտեղ հաւաքվում են Հայաստանի և Պարսկաստանի ամեն կողմերից տեսակ տեսակ վէրք ունեցող ուրերը, բոլորտներ, ախտաժէտներ. որոնք ամիսներով, տարիներով գեգերվումին Տիրամօր դուռ և ոմանք որպէս խոստիկներ. ձրիաբար ծառայում են Տիրամօր գիւղացւոց տներում, այն յուսով և հաւատով՝ որպէս իրան Տիրամօր ծառայելու նպատակաւ դէթ բժշկվելու վիրալի մարմնոյն։

Տիրամօր վանքը հին ժամանակաւ ունեցել է իւր անկախ վարչութիւնն, զորա հետ և գիւղտանտեսական կառավարութիւն, ընդարձակ վարելահողեր՝ բայց երբ մի քանի ընտանիք եկել տեղաւորուել են իւր շուրջն և հետզհետէ բազմանալով և հաստատուելով՝ ոտնձգութիւն են արել, տիրացել են վանքի բոլոր հողային կալուածներին և այժմ մօտաւորապէս հարիւր յիսուն տուն ընտանիք ապրում են Տիրամօր թէ հողերի և թէ նորա գերեզմանի շնորհիւ։ Բացի այդ հանգիստ իւրացումից, այդ ձրիակեր ‘խաչագողները չ'բաւականացած իրանց բոլոր վար ու ցանքով, չ'բաւականացած այն արտաքոյ կարգի եկամուտներով, իւրաքանչիւր տանից մի մարդ շրջագայում է ամեն կողմ յանուն Տերամօր մարդու, ողորմութիւն հայցելու, խոստիկներ հաւաքելու. միամիտներ է խաբելու։

Պատահել է որ դրա շատ անգամ ամենայն խայտառակութեամբ վանդուել են տներից և խստիւ արգելումների պատահել, բայց դարձեալ այդ տեսակ մի անբարոյական խաչադողութիւն շարունակվում է դոցա մէջ։

Տիրամօր տօնի նշանաւոր օրն է վերափոխման կիրակէն, ուր մի շաբաթ առաջ իւր շուրջն հաւաքվում է 8—10 հազարի մօտ երկսեռ ուխտաւորք, ձիաւոր թէ հետեակ, դոցա թւումն է նաև բազմաթիւ քրդերի, թուրքերի և սորինների ողջ թէ վիրաւոր բազմութիւնը իրանց հետ բերելով ոսկիից արձաթից զարդեր և մատաղացու գառներ նուիրելով յանուն Տիրամօր, որպէս զի նորա մարդիկ ուտեն կշտանան, խաթուն Տիրամօրից խնդրեն իրանց ախտաժէտների ցաւին չօրին բժշկութիւն տալու։ Այս համայնական տօնին, որքան երգ ու պար. որքան ուրախութիւններ և իրարանցումներ լինում է դուրս ու ներս, վրանների տակ կամ պարտեզներում կիտուած բազմութեան մէջ, այնքան աւելի արգահատելի է միւս կողմն. եկեղեցւոյ դռան երկու կողմովն իրարու վրայ թափթփված թշուառ ուրերի, վերաւորեալների ախտաժէտների տեսարանն, յոյժ զզուելի և անախորժ տպաւորութիւն է թողնում անցորդաց վրայ։ Դրա բոլոր, որպէս Տիրամօր-եարաւորները, մուրացիկների նման. մի ձեռքով բռնած իրանց վէրքն. միւսովն՝ մեկնած դէպ անցորը ուխտաւորն ողորմութիւն են խնդրում՝ առածն իսկոյն դցում են դարձեալ Տիրամօր գանձանակ. տիրամօր մարդոց աչքն լոյս անելու։

1881—82 թ. հանդուցեալ Պօղոս եպիսկոպոսը մեծ աշխատութեամբ հազիւ կարողացաւ Տիրամօր եկամտի հասոյթից մի մասը հանել տեղական ուսումնարանին և մի շարունակութիւն ունեցաւ, ցանկալի էր որ տեղականութիւն էլ ունենար-գէթ ապագայ սերունդը շնորհիւ

Տիրամօր՝ տիրանար ուսման և քաղաքակրթութեան պայմաններին, թողնէր պապերի արհեստն։

1896 ի անցքերին. Միրաք գիւղում թէև սպանութիւնները այնքան տեղի չունեցան. բայց որպէս իւղալի պատառ, պաշտպանութեան անուան տակ Ջէվրցի քրդերը և ցեղապետ Ջէհվէր բէկը խիստ օգտուեցան նոցա դեղին ոսկիներին այցելութիւն տալուց։

33. Տէր Յուսական որդւոյ վանք Բերկրի գաւառում

Գնունեաց գաւառի հիւսիսային ծայրումն են Բերկրի գաւառի մի մաս հայաբնակ շէն գիւղերը, որպիսիքն են *) Գործոթ մեծ աւան. Պղտիկ գիւղ և Բերկրի աւանը ուր նստում է գաւառապետ իշխելով նաև Աբաղու (հին Աբեղեանք) դաշտի գաւառակին։ Բերկրի աւանի արևմտեան կողմ, գետի աջափին շուրջ պատած ծաղկանց լեռան արևելեան միոյն լանջով՝ թէք ընկած առապարովն կառուցվել է Տէր Յուսկան որդւոյ Ստեփաննոսի վանք, սրբատաշ քարերից բարձրացրած երկնաբէրձ գմբէթն, տաճարն ու եկեղեցին, որոյ մէջն է և սրբոյն գերեզմանը մարմարեայ կափարիչով։ Դա բերկրի գաւառում եղած միակ և նշանաւոր վանքն է. բաւականին հնութեան ապացոյցներով. նայելով իւր հաստահիմն որմերին և մի մաս արձանագրութեանց և շրջակայքի հին գերեզմաններին։ Ով որ կարդացել է Տէր Յուսկան որդւոյ պատմութիւնը նրա առաքինի վարքագրութիւնն, լրիւ գաղափար կ'կազ-

*) Գործոթ աւանին մօտիկ սահմանում 1877-ի պատերազմից առաջ ընկ վանեցի Առաւեղեան Նազարէթի յատուկ խուզարկութեամբ բացուեց նաւթային իսկական խոր. դուրս եկած արդիւնքը խիստ բաւարար էր՝ բայց ընդհակառակն կառ, հրամանաւ չահագործեն արգելուեցաւ։

մէ այդ ճշմարիտ քրիստոնէի, և ապա քահանայի ցոյց տուած առաքինի գործքերի մասին։

Տէր Յուսկան որդւոյ վանքը նոյնքան նշանակութիւն ունի յաչս ուխտաւորաց որքան Տիրամօրն։ Խաթուն Տիրամօր ուխտադիր այցելուն, անտարակոյս շտապում է և այս տեղ գալ, իւր փափագն լրացնել, համբուրել Ստեփաննոս ճգնաւորի գերեզմանն ու դառնալ։ Մի տասնեակ և աւելի հաստաբմատ ընկուզենիք և այլ պտղատու և անպտուղ ծառերը պատել են վանքը չորս կողմից, այնպէս որ՝ չ'մօտենան նորա ստորևի ագարակն՝ ոչինչ չէ տեսնվում բացի բարձրադիր գմբեթիցն։ Ունի իւր սեպհական ագարակն ընդիր հանդերով և արդաւանդ հողերով, որոնք ընդամեն միասին տարածվում են *) գետի ուղղութեամբ դէպ հիւսիս տարածուած Բերկրու կիրճի տարածութեան մէջ։

Բերկրու կիրճը գրէ թէ 3—4 ժամի ճանապարհ է կտրում մինչ դէպ հիւսիս արևմուտք և հիւսիս արևելք տարածուած Աբաղու (Աբեղեանք) դաշտ, մօտիկ պարսկաստանի Սալամաստ, Խոյ և Աւաջուք սահմանների։ Այդ լայնածաւալ դաշտում գտնվում են ութսունի մօտ քրդաբնակ գիւղեր և երկու հայաբնակ ագարակները անհաշիւ սահմաններով։ Բայց դեռ մի դար յառաջ բնակվում են եղել այդ տեղ չորս հարիւրի մօտ գիւղ թէ արևորդի (եէզիդի և թէ ասորի բնիկ ժողովուրդ։ Ամեն անբնակ վայրերը լիքն են աւերակ գիւղերով և եկեղեցիներով, տարածուած գերեզմատներով որոց խաչ—արձան քարերը շարունակաբար տարվում են այլ և այլ շինութիւնների համար։

*) Այդ գետը կոչվում է Բէնդի-Մահի (թումբ ձկանց) որն սկիզբն է առնում Աբաղու դաշտից և թափվում է վանայ ծով։ Գետից դուրս եկած տաւէխը անուանի է իւր տեսակին մէջ, որից շատ քանակութեամբ կարաւաններով արտահանվում է Պարսկաստան և այլ տեղեր։

Իւր բնիկ ժողովուրդը տարագրուել է մեծ մասը Արարատեան նահանգ, քրդերի հետ երկար ժամանակ կռուելուց ու կոտորվելուց յետոյ։ 1877-ի ռուս—թուրք, պատերազմին Տիր Զուկասովի զօրաբանակից մի մասը Էշխան—Զօրավար Ամիլախվարու առաջնորդութեամբ քրդերին քշելով՝ հասան մինչ յիշեալ կիրճն։

1896-ի կոտորածին՝ Տէր Յուսկան վանքը և Բեկրու գաւառի հայ գիւղերը շնորհիւ ցեղապետ կօփ մականուանեալ Մեհմէդ բէգի՝ բաւականին պահպանուեցան և, այս իրողութիւնը բացառութիւն պէտք է կազմել. գուցէ Մահմէդ բէկը լինելով միևնոյն տարին Բերկրու գաւառին գաւառապետ և սահմանակից բնակվող աշիրաթի պետ, աւելի հեռանկատ է եղել քան իւր միւս ցեղակիցներ։

24. Արջակու Ս. Աստուածածին վանք

Վերին Թիմար—Գնունեաց—գաւառի ուղիղ արևելեան սահմանում, դէպ պարսկաստան տանող մեծ պօղոտայի վրայ ընկնում է Արջակ հայաբնակ գիւղ. Վան քաղաքից 6—7 ժամ հեռաւորութեամբ։ Գիւղի հարաւային կողմով բարձրացած տափաստանի մի լանջովն է և համանուն Արջակու Վանքը Ս. Աստուածածին անունով որևև պատկանում է Վարագայ թեմին։ Վանքն ինչպէս գիւղը մի գեղեցիկ բացառութիւն են կազմում իրանց շրջանում, երկուքն ևս պատկանելով մի թեմի—Վարագայ, որտեղից և նշանակվում է վանահայր—քարոզիչ, շատ մօտիկ են քաղաքակրթութեան պայմաններին։ Վերջին տարիներում Արջակ գիւղը մի մեծ աւանի նշանակութիւն ունեցաւ թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Շնորհիւ վարագայ վանուց և վերջին վանահայր Դանիէլ վարդապետի ուսումնարանն էլ, երիտասարդութիւն էլ բարւոքուեցան. նոյն յառաջդիմութիւն արին և գիւղատնտեսութեան մէջ։

Որպէս արևելեան վերին Թիմարի կենդրոն, Արջակում նստում է փոխ—գաւառապետ. ձիաւոր զօրքերի պահապան մի խումբ, և այլ հսկող պաշտօնեայք, որոնք հսկում են պարսկաստան երթևեկող կարաւանների վրայ։

Արջակու վանքը կառուցված լինելով բարձրադիր տափաստանի առապարով, իւր առաջևից ունի անարգելի գեղեցիկ և ընդարձակ տեսարան։ Արջակու լայնածաւալ հովիտն իւր միջով անց կացած վտակներ, բազմաթիւ գիւղեր և այն փոքրիկ լիճն իւր շրջապատի բոլոր մարգագետիններով, և հիւսիս—արևելքից մինչ հարաւ արևելք տարածուած թուրք—պարսկական սահմանագլխի լեռնաշղթաները մի խիստ հրապուրիչ բնակատեղի են ներկայացնում, մանաւանդ ընտիր ադարակներովն։ Այդ ադարակներում գործում են նաև ոմանք Վանեցի գիւղատնտեսներ, բայց միայնցանելով զանազան հացաբոյսեր և բանջարեղէններ, ուրիշ ոչինչ։ Այս հովտումն է նաև Խառակոնիս բազմահայ գիւղը որն և պակաս առաւելութիւն չունէր Արջակից. սակայն ընկճուած էր ծանր պարտուց տակ։ Սկսեալ 1880—82 թուականից՝ հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանի բարերարութեամբ «Միացեալ» ընկերութեան ձեռքով բացուել է այս գիւղում նախակրթարան դպրոց և զգալի արդիւնք է ցոյց տուել այդ միջավայրի կարօտ ժողովրդեան։

*) Արջակու Ս. Աստուածածնի տօնակատարութիւն ևս լինում է Վերափոխման տօնի օր. այստեղ ևս հաւաքվում է ուխտաւորաց խիտ բազմութիւն։

---

*) Արջակ՝ հաւանական է Արշակ լինելու, ժողովուրդը չբնի տեղ ջը գործածելով։

35. Պախէզկայ Թուխ-Մանուկ *)

Արջակ գիւղից դէպ քաղաք բերող ճանապարհի աջ թևին վրայ է ընկնում Պախէզկայ Թուխ-Մանուկ անունով մի փոքրիկ մատուռ, մօտիկ Պախէզիկ (գուցէ պարտէզիկ) հայաբնակ գիւղի։ Մատուռը չունի ոչ նշանաւոր ծածք և ոչ շրջակայքում աւերակների նշանները միայն զօրաւոր է նրանով որ՝ հռչակ ունի որդեսէր կանանց մէջ և որոց մանուկներին՝ թէ պատահի բերանացաւ, կամ վէրք կամ գալար, խկոյն ուխտում են և դիմում Թուխ-Մանուկին, մի քիչ նորա հիմքի հողից բերան գցելով և եօթն անգամ շուրջն պտտելով, Աստուածով գտնում է բժշկութիւն։ Թուխ-Մանուկայ ուխտաւորք պարբերաբար գնում են ամեն կիւրակէ օրերում։

36. Աւերակայ Ծաղիկ աւետարան

Վանայ այգեստանեայց հիւսիս—արևելեան կողմ մէկ ժամ հեռաւորութեան վրայ է Աւերակ բազմահայ գիւղ. որոյ եկեղեցում խիստ զգուշութեամբ պահվում է Ծաղիկ-աւետարան։ Արդար և համանման այդ անուան բոլորովիմբ ծաղկենկարներով դարդարուած է նորա բոլոր լուսանցքներ. գրուած նուրբ գրչագրերով և մաքուր մագաղաթի վրայ։ Ծաղիկ աւետարանի ուխտաւորք բազնաթիւ են թէ գաւառացի և թէ քաղաքացի հայերից. ամեն կիւրակէ և տօն օրերին նա բացվում է մի քանի գառների և հաւերի մատաղազոհութեամբ, դորա հետ մէկ տեղ և շատ նուէրարերութեամբ խունկից, մումից և մետաքսեայ թաշկինակներից։

---

*) Թուխ-մանուկ կոչվում են այն մատուռները որոնք ընդհանրապէս չինուել են աւերակ եկեղեցիների կամ տաճարների տեղերում, որոց և ժողովուրդը տալիս է իւր յարգանքն։

Աւերակցիք որքան որ ճնշուած էին վաշխառուների ծանր տոկոսիքի տակ և պարտուց ներքև, վերջին տարիներում իրանց հաւաքական ուժովն առանց դրսի օգնութեան դիմելու՝ փառաւորապէս շինեցին այն հոյակապ եկեղեցին և փոքրիկ նախակրթարան դպրոց, ուր սովորում էին մօտաւորապէս ութսունի չափ աշակերտներ։ սակայն 1896-ի հանրային խժդժութեանց ժամանակ, Աւերակ գիւղը որպէս անուանի տեղ, աւելի թշուառ դրութեան հասաւ։ Աւերակ գիւղը իսկապէս աւերակաց կոյտ դարձուցին։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՔԱՋԲԵՐՈՒՆԵԱՑ ԳԱՒԱՌՈՒՄ— ԱՐՃԷՇ—ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Նահանգի հիւսիսակողմն Թիմար—հին Գնունեաց—գաւառից անցնելով, Բէնդի Մահիի (թումբ ձկանց) կամրջից՝ մտնում ենք Քաջբերունեաց—Արճէշ—գաւառ։ Կապուտակ ծովը ընտ գծում է այդ քաջաց երկրի հարաւային հարաւարևելեան մինչ հիւսիս-արևմտեան ամբողջ կողմերն, որոնք ամեն էլ իրանց գիւղերովն տափաստաններով գեղածիծաղ, ծովածիծաղ դէմքով, վայելուչ դիրք ու տարածութիւնով շքեղացնում են բնութեան տեսարանն։

Թէև շրջակայութեանս տեղերն ու վայրերում, ինչպէս և ուրիշ գաւառներում. բազմաթիւ էին աւերակ եկեղեցիների, վանք ու մատուռների, բայց դոցանից և ոչ ամենքն նշանակութիւն ունի ժողովրդի աչքում, որպէս ողորմական ուխտատեղիք. այլ միայն նոքա՝ որոնքներկայումս սովորական սրբատեղիք են և ունին հանրային նշանակութիւն իրանց հաստատութեամբ։

37. Ականից Ս. Գէորգ

Ականց աւանը խառն թուրք, քուրդ և հայ բնակիչ-

ներով՝ ներկայումս Քաջբերունեաց-Արճէշ-գաւառի գլխաւոր կենտրոնավայրն է, և Վանայ կուսակալութեան առաջնակարգ գաւառն։ Ականց աւանի երկրորդ եկեղեցումն կայ գերեզման յանուն Սրբոյն Գէորգայ, նոյնպէս և մասունք. մասունքին համար տարակոյս չունինք որ լինի սուրբ Զօրավարի մասունքներից, սակայն գերեզմանը թէ սուրբ Զօրավարի մասունքներից, սակայն գերեզմանը թէ հոր Գէորգին է, գուցէ մեզ յայտնի չէ։ Ինչ և իցէ Ականից սուրբ Գէորգը, որպէս հրաշալի սուրբ, ոչ միայն իւր գաւառի մէջ, այլ և հարևան գաւառներում մեծ նշանակութիւն ունի, առաւելապէս այնպիսեաց՝ որոց վրայ կան ականից Ս. Գէորգայ յատկացած վէրքն-ականից եարէնը։—

Պառաւների, այդ աղօթող մամիկների հետազօտութեամբ և ճանաչելովն. Ականից եարէնը որոշվում է միւս սրբերի, օրինակ Ցիրամօր, Պախէզկայ և այլ վէրքերից, ինչպէս հմուտ բժիշկ որոշում է վէրքերի տեսակները։

Մեր աշխարհի մի դասակարգի սրբերը, ըստ հաւատոյ և կարծեաց միամիտների ունին իրանց պատկանեալ վէրքն, ինչպէս հմուտ բժիշկ իւր մասնագիտութիւնը. թէ առողջանան էլ՝ մնացեալ սպին էլի կրում է իւր անունը։ Ականից Ս. Գէորգայ տօնակատարութիւնը տարուայ ընթացքում երկու անգամ կատարվում է. յունայ և հայոց Ս. Գէորգայ տօներին և հոծ բացմութեամբ։ Գոյացած արդիւնքը, միայն վերջի տարիներում, հազիւ թէ մի մասը կարողացան յատկացնել տեղական ծխ. ուսումնարանին։

Քաջբերունեաց գաւառի նշանաւոր և պատմական քաղաքն Արճէշը, վաղուց արդէն խորտակուած լինելով, դարուս սկզբներին՝ գլխաւորապէս պարսիկներից. ըստ ոմանց ասելուն, Հասան-խանից, 'ի վերջոյ ամբողջապէս ծովակուլ է եղել և դեռ քաղաքի բարձրաւանդակ տեղերը ինչպէս և Թուրքաց Մինարէթը ծովում երևում են։ Հին Արճէշ քաղաքի բնակիչները տեղափոխուել են մեծ մա-

սամբ ներկայ Ականց աւանը, ուր նստում է առաջին կարգի գաւառապետ, կառավարչական ամեն մասի ստորաբաժանմունքներով։ Վերջին մի տասնեակ տարուայ ընթացքում այդ աւանը հասաւ իւր խիստ վայելուչ և ճոխ վիճակին, զգալի փոփոխութիւն կրեց ամենայն կողմից, լիք լիք ապրանքով վաճառատներ, կրպակներ. հասարակաց շէնքեր և մրգաւէտ որթատունկ այգիները կատարելապէս՝ քանի մի առաւելութեամբ, երկրորդական քաղաքի կերպարանք տուին, առաւելապէս այնու՝ որ լինելով բանուկ ճանապարհ դէպ Կարին և Պոնտոս, օրից օր յառաջդիմութեան մէջ էր մտնում։

Աւանում ապրող բնիկ քուրդ և թուրք տարը անընդունակ լինելով գործելու, ասպարէզ բուրը մնացել էր Վանեցի, Բաղէշցի հայ վաճառականներին և արհեստաւորներին և նոքա կերպարանափոխեցին Ականց։

Ըստ երևոյթին՝ այնպէս ենք հասկանում որ՝ աշխատասէր հայերի այդ շէնարարութիւնն. նիւթական և բարոյական յառաջդիմութիւնը շարժել էր շրջապատող տարբի չար նախանձը որոնք անհամբեր սպասում էին 1896 ի պատեհառիթ պարագաներին...

Քաջբերունեաց երկրի բազմաթիւ հայ գիւղերը աւերակաց կոյտ են մնացել և ոմանց մէջ՝ որպէս արդաւանդ և բերրի հողերի՝ եկել բուն են դրել քրտերը. իւր բնիկ ժողովուրդը տակաւին ցրիւ, վտարանդուած թափառում է դէս ու դէն.

Ականից հիւսիսակողմն է, հաղիւ կէս ժամ հեռաւորութեամբ, լեռնաշաղտի մի վրայ և զառեվայրումն Իրիշատ, հին Զարիշա քաղաքի տեղ, որոյ կիսաքանդ և աւերեալ շինքերի, վաճառանոցների աւերակները միայն երևում են. իսկ նոքա ստորին հարթավայրումն է վերին և ներքին Իրիշատ գիւղերը։

38. Արծուաբեր վանք

Ականց աւանի հիւսիս-արևելեան կողմ, Ծաղկանց լեռան հարաւային աջթևին տակ հովանաւորուած կառուցուել է ամենահնագոյնն Արծուաբեր վանք՝ յանուն Ս. Աստուածածնի. Սօսկուն հայաբնակ գիւղի վերև.

Ոչ միայն Քաջբերունեանց գաւառի. կարելի է ասել՝ որ ամբողջ Վասպուրականի նահանգում գտնուած նշանաւոր վանքերի մէջ զարմանալի ճարտարագործութեամբ, հին գեղարուեստական ճաշակով, տասն հինգ դար յառաջ հոյակապ հաստատութեամբ իւր գոյութիւնն սկսուել է Քաջաց երկրին մէջ։ Սորա լայնածաւալ ու բոլորաձև գաւիթն խորին ուշադրութեան մի արժանաւոր շէնք է. առանց ինչ էէ յենարանի-սիւնների, բարձրակատար կամարակապ կաթուղիկէնը իւր բոլոր պարունակութեամբն բարձրանում է միայն չորս անկիւնից հաստատուած որմերի վրայ. միայն ցաւալին այն է՝ կաթուղիկէի վերի ամենաբարձր մասն, կոնաձև գմբէթն, բաւական տարի յառաջ փլելով, կրկին նորոգելն անկարելի է եղել։

Արծուաբեր վանքը խորին տպաւորութիւն է թողնում այցելուին վրայ, առաջին անգամ տեսնելիս մարդս կարծում է որ ինքը մտնում է մի անառիկ գղեակի մէջ, չորս կողմից պաշարուած աշտարակներով։ Նա չունի տաճար, միայն կետրոնի սեղանումն է նորա, մեծաշէն պատարագամատոյց խորանն և ներքևումն՝ աջ ուձախ կողմից՝ նոյնպէս երկու մեծ խորաններ, երկու անյայտ գերեզմաններով։

Եկեղեցւոյ չուրջն պատում է ահագին հաստահիմն պարիսպ չորս անկիւնում շինած չորս աշտարակներով, յատակի խրամներով։ Այդ չէ միայն այդ հին աւուրց Սրբավայրի եզական հաստատութիւնն. գաւթի հիմքերի տակից նոյնպէս սրբատաշ քարերից շինուած են

մի քանի ներքնատներ, ներքնաուղիները նրբանցքներով, որոնք ուղիղ յարաբերութիւն ունին դէպ վերև աշտարակները. դոցա մի կողմումն են և երկու հոյակապ դարբասները, շտեմարանները, ցորենի հորերը բոլոր քար ու կիրեայ և սալայատակ որմերով, որոնք բոլորը վեր առած՝ ինչպէս ասացինք, կազմում են մի անմատչելի ամրոց, գուցէ տասն հինգ դար յառաջ՝ այդ մաքով էլ շինած լինին Քաջբերունցիք, երբեմն պաշտելատեղի և երբեմն պաշտպանուելու ամրոց։

Այդ բոլորին հետ մէկ տեղ Արծուաբեր վանքը ունի ընդարձակ հանդ ու հանդաստան, ամենաընտիր վարելահողերը գիւղատնտեսական ամեն պարագայիւք, բայց ցաւալին այն է, որ տասնեակ տարուց առաջ է որ չունեցել մի արժանաւոր Վանահայր։

Ես յիշում եմ նորա վաղեմի՝ Վանահայր՝ հանրածանօթ Տէր Սողոմոն Պապանը *Դէլի-քէշիշ* Մականուանեալը՝ մտաբերում եմ նորա այն պարթև հասակն, սպիտակ թաւ միրուքն, մէջքումն և ձիան թամբում խրած երկզոյգ ատրճանակները մի կողքին լայնաբերան կարաբինան (ատրճանակի մի այլ տեսակ) և միւսումն սուրն. նստած իւր խրինջուն սպիտակ ձիան միջքին, որն ամեն տարի, Վանայ հրապարակային ձիարշաւին մէջ (կանանչ կիւրակէին) մեծ անուն էր թողնում և ձիավարժ քրդերի մէջ,

Արծուաբեր Վանքին ամենամօտիկ հարևաններ են Կալկանցի, Լրմնցի աշիրէթ քրդերը. դոցա ցեղապետները մի ժամանակ խիստ ակնածութեամբ էին վարվում վանքի բոլոր կալուածոց և Վանահայրերի հետ. բայց 96 ի տխրահռչակ դէպքերին նորա ամենքն էլ մոռացել էին վանքի աղն ու հաց. մօտակայ հայ գիւղերի հետ կողոպտել էին և վանքի հարուստ ամենայն ինչ մալն ու տուար և ամեն սպասք։

Արծուաբերին պատկանում են մօտիկ Կորած-քար և Սօսկուն հայաբնակ գիւղեր. որոնք արտադրում են ցորենի և դարուց ամենալաւ տեսակն։

Հանգուցեալ Տէր Սողոմոնի Վանահայրութեան ժամանակը վանքը իւր ամենալաւ շրջանումն էր գիւղատնտեսական ամեն պարագայիւքն։

39. Մեծոփայ վանք

Քաջբերութեանց գաւառի հիւսիսակողմն. Ծաղկանց լեռան հարաւային ձախ թևին տակ. թաղնուած երկու միմեանց մօտ կիրճերում կառուցվել է Մեծոփայ վանքը ոչ պակաս հնութեամբ Արծուաբերից, փոքրիկ բայց կոկիկ շէնքերով։ Մեծոփ անունը առնուած է վանքի վերևում գտնուած փոքրիկ լճակի *ոփ* յորջորջումից, այդ լճակը ներկայումս բոլորովին ցամաքել է, միայն տեղն է երևում։ Մեծոփայ վանք գտնուելով սրածայր լեռանց և նոցա ստորոտում, եղած կիրճերում չունի ոչ տարածութիւն և ոչ մի ինչ տեսարան. բայց մի քիչ հեռուն իւր շուրջն ունի ընդարձակ դաշտավայրեր, հովիտները դէպ Ծաղկանց լեռան ստորոտումն ուղիղ, դոցա հետ մէկ տեղ, ոչխարաց արօտատեղ—մակաղատեղիք ճոխ պարագայիւք։

Իւր սեպհական ագարակը—վանից տունը—բաղկանում է մօտաւորապէս քառասուն տանից բաղկացած մի գիւղ, որոյ ամբողջ հայ բնակիչք պարապում են վանքապատկան հողերով և այլ գիւղատնտեսական պարապմունքներով։ Բացի այդ լայնատարած ագարակից, վանքի վաղեմի և աշխատաւոր վանահայր Գեր. Սահակ Ծ. վարդապետ Բագրևանդացու տասն տարուայ տոկուն աշխատութեամբն և դատավարութեամբ, ձեռք բերուեցան և ուրիշ մի քանի կտոր ընտիր վարելահողեր, արօտատեղիք, խա-

շանց մակաղատեղիք ինչպէս վանքապատկան հին սեպհականութիւնք կրկին վերադարձվեց վանքին։

*) Գեր. Սահակ վարդապետ Բաղրեանդացին թէ վանահայը էր Մեծոփայ վանուց և թէ առաջնորդ Քաջբերունեաց—Արճէշ—գաւառի։ Ազգ. պատրիարքարանը ճանաչելով նորա ժողովրդական հեղինակութիւն 1892-ին նշանակեց Վանայ փոխ—առաջնորդութեան բարձր պաշտօնին, կառավարեց Վան շատ խելացի և վարվող քաղաքականութեամբ՝ մանաւանդ 94—95—96-ի այն տխուր և տարտամթուականներում, որ ժամանակ ամբողջ նահանգը տատանվում էր աւշտրկող և սպանող խուժանի ձեռքում. սուրն ու կրակ ընկել էր ամբողջ հայ ազգաբնակութեան մէջ։ Նա ականատես եղաւ և վերջի 1896-ի յունիսի 3—11-ի սոսկալի խժդժութեանց, շրջագայեց Վանայ այգեստանեայց ամեն անկիւններում կիտուած փախստական դաղթականների և վիրաւորեալների մէջ, մխիթարեց, ոփոփեց թէ նիւթապէս թէ բարոյապէս, և ապա սնոտի պատճառներով՝ նահանգապետ Նազիմ փաշայի հետ կանչուեցաւ Կ. Պոլիս նոյն կոտորածի շարունակութեան մէջ և պանդխտեցաւ ամբողջ չորս տարի. 'ի վերջոյ ուրախալին և մխիթարականն այն եղաւ որ Տէր-Ներսէս եպիսկոպոս Արսլանեանի հրաժարումից յետոյ, անցեալ 1901-ից առաջ ազգ. պատրիարքարան յարմար տեսաւ, Նորին գերապատուութիւն նշանակել կրկին Վանայ նահանգի փոխ—առաջնորդութեան պաշտօնին։

Թէև Մեծոփայ վանքն ևս իւր շրջակայ Յարութիւն. Ծակ—ծակ, գիլան և այլ հայաբնակ գիւղերով նոյն աւա-

*) Գեր. Սահակ. Վ. ինչպէս յայտնի է ներկայ 1902 մայիսի 12-ին, ի վարձադրութիւն իւր բարի գործունէութեանց Ս. Էջմիածնում ընդունել է եպիսկոպոսութեան բարձր աստիճան, որոյ յայտնում ենք մեր խնդակցութիւն և շնորհաւորումն։

բառութեանց և սպանութեանց ենթարկուեց, սակայն ի վերջոյ և ներկայումս. ինչպէս լսում ենք, իւր բազմաբախտ վանահայը առաջնորդի խելացի և համոզողական միջոցներով կրկին վերանորոգուելու յոյսերը յայտնվում է. յուսալի է իւր բարոյ վիճակին հասնի։

40. Գանձակայ Կենաբեր վանք

Քաջբերունեաց գաւառի Գանձակ գիւղի շրջակայ այգիների վերև շրջապատուած որթատունկ այգիներով կառուցուել է համանուն Գանձակայ Կենաբեր վանք։ Կենաբեր -Կեանքաբեր—վանքը բաւականին հնութեան հետքեր ունի իւր շուրջն հեռուն ու մօտիկ, ոչ միայն աւերակ գիւղատեղիք այլ և աւերակ փոքր ու մեծ մատուռների եկեղեցիների կոյտերը դեռ անկորուստ տեսնվում են վանքից մի քանի քարընկեց հեռաւորութեան վրայ, բազիւ երբեմն հետաքրքիր այցելուներ ունենալու 'ի համբոյր այդ տեղեր ընկած ու խոնարհված խաչաքարերին սրբոց տապաններին։

Ի՞նչ սքանչելի հովիտ և ընդարձակութիւն է այն, վանքի առաջևից երևցած այն բոլոր բերրի և արդաւանդ հողերով. ահա մի երկիր՝ որն առաւելապէս ընութեան ընական հիւթովն է ոռոգվում, որքան մարդոց աշխատութեամբ. մէկ ցանողն անշուշտ վերցնում է քսան մէկ, հողերի մեծ մասը անջրդի գոլով մէկ տեղ։ Գանձակի վանքը երկար ժամանակ կառավարվում էր ընիկ Գանձակ գիւղացի հին տոհմական գերդաստանի անդամոց վերահսկողութեամբ. վերջին վերակացուն էր Վարդան աղա անունով մի խելացի և ազդեցիկ մարդ, որո երկար ժամանակ գաւառական կենդրոնական վարչութեան անդամ եղաւ և կառավարութեան ամեն շրջաններում յայտնի անձնաւորութիւն էր։ Վանքը 1896-ի կոտորածի օրերում

թէև շատ կեանք փրկեց, բայց շատերին էլ գերեզման դարձաւ։

Այդ տխուր և արիւնոտ ժամանակից զրէթէ մինչ ցներկայս՝ թէ Կենաբեր վանք և թէ նրա շրջակայքի հայաբնակ յայտնի գիւղերը ամայացել են իրանց բնիկներից և փոխարինել են նոցա տեղ լեռնային քրդերը։

Ամբողջ Վասպուրական նահանգում Քաջբերունեաց երկրի գլխաւորապէս սորա *ղէմ* (անջրդի) գիւղերի *ղեր* կոչուած ցորենը խիստ հռչակ ունի և թանգ է գնահատվում, որից պատրաստուած ալիւրն, համովն ու հոտովն կարող է մրցել ռուսաստանի ընտիր ալուրների հետ եթէ աւելի խնամքով պատրաստուի։

41. Առջեւենից կամ Առաջուց վանք

յանուն Ս. Աստուածածնի

Նոյն և Ծաղկանց լեռան հարաւային շղթաներից միոյն լանջի վրայ, առապարով ընկած ճանապարհի աջ կողմում կառուցվել է Առջևենից կամ Առաջուց վանք յանուն Սուրբ Աստուածածնի։ Դորա հիմնարկութեան մասին լսել ենք որ Քաջբերունեաց երկրում առաջին անգամ հիմնարկեալ վանքն է եղել և դորա ապացոյցն՝ վանքի ամենահնաշէն տաճարն, խուլ ու մթին դարբասն են, որոնք արդար և թէ իւրեանց հնաձև յատակագծովն, տարբեր շինուածքովն տարբերվում են միւս վանքերի շինուած ձևերից, և դարերի ընթացքում այդպէս կանգուն մնացած որպէս յուշարձաններ, հազիւ հազիւ սկսուել են մաշուել ու բեկորներ թողնել թէ տաճարի և թէ գաւթի որմերից։

Առջևենից վանքն ևս Կենաբերի պէս չէ ունեցել իւր նշանակովի վանահայրն։ Դեռ հարիւր յիսուն տարիյառաջ յանձնուածլինելով մի քահանայական տան, որդւոց-որդի յաջորդաբար կառավարում են մինչև ցներկայս, ապրելով վանքում իրանց բոլոր ընդանիքով։

Վանքապատկան հողերն, արօտատեղիք, որոնց սահմանը ընդարձակվում է մինչ ծովին եղերք, զրէթէ բրոնում են մօտ 8—10-ն վերստաչափ քառակուսի տեղ. իսկ գիւղատնտեսական պարագայքն ոչ պակաս հարևան վանքերից. բայց այդ բոլորը մի քանի օրում ոչնչացաւ 96 ի անցքերին։

Վերջապէս Վանայ կուսակալութեան մէջ Քաջբերունեաց գաւառը առաջինն էր իւր նիւթական հարստութեամբ։ Ցորենի շեղչակուտեալ ամբարներով, դուար ու ոչխարաց առատ խմբերով։

42. Սքանչելագործ վանք

(*Բզնունեաց գաւառում*)

Բզնունեաց-Վանայ ծովի արևմտեան ամբողջ եղերքովն ընկած են նոյն գաւառի մօտաւորապէս երեսունի չափ բազմահայ գիւղերը և, այդ ամենքի մէջ, Արծկէ հին քաղաքի այգեստանեայց վերև մի լեռնադաշտի վրայ՝ կառուցվել է Սքանչելին Սքանչելագործ վանք իւր ճոխ և հարուստ ագարակովն գիւղատնտեսական հարուստ պարագայիւքն։

Սքանչելագործ վանքը Բզնունեաց-Ատլջավաղ-գաւառի ամենանշանաւոր և կարելի է ասել և ներկայումս մէկ հատիկ վանքն է Բազունի հայոց նուիրական ու պաշտելի սուրբ վայրն և ուխտատեղին։

Դիրքն. օդն ու ջուր և ամեն ինչն սքանչելի, անուան համապատասխան։ Արևելեան կողմից իւր առաջև տարա-

ծվում են Արծկէ քաղաքի որթատունկ և մրգաւէտ այգիները դոցա կից և մարգագետինք մինչև ծովին եզերք, և ծովն իւր երկնագոյն մոյգ, կապուտ մակերևոյթովն ոչ պակաս հիացնում է այդ զրաւիչ տեսարանը։ Հարաւային կողմից Ներբովդ (Նէմրուտ) և Գրգուռ հրապիսային լեռները. հիւսիսից դէմ ու դէմն սպիտակափայլն Սիփան լեռ, գաւառի ամբողջութեան առատաբուղխ ջրամբարն, ամենք միասին առատ հանդ ու հանդաստանով, երեսնին դէմ տուած դէպ արևելք, դէպ Վարագայ լեռան. Վարագայ Սուրբ Նշանն՝ պտղաբերութիւն են խնդրում Բզնունեաց աշխարհի համար։

Սքանչելագործ վանքի արգաւանդ դաշտերն, հանդն ու հանդաստանն վարելահողերն, մշակական—գիւղատնտեսական ամենայն պարագայիւքն անուանի և եզական են մեր աշխարհի բոլոր Մինաստանաց մէջ. դորա համար էլ վարդապետներից աւելի ճարպիկները ամեն ջանք և աշխատութիւնը գործ էին դնում. դէթ երկու կամ երեք տարի՝ ձեռք բերել նորա վանահայրութեան և գաւառի առաջնորդութեան **) պաշտօնն։

Վանքը բացի իւր պատկանեալ ընդարձակ կալուածներից, Բզնունեաց գաւառի երեսունից աւելի հայաբնակ գիւղերը նորա թէմին են պատկանում. թող զայդ օգտվում է նաև իւր սահմանակից Խնուս—Բուլանոդ (հին

*) 1885 Ներբովտ լեռը երկրորդ անգամ բռնկելով, ներքևում գտնուած Թեղուտ հայաբնակ գիւղն մեծ մասամբ ոչնչացրեց, թշուառներին օգնութեան հասան թէ Վանայ ժողովուրդը թէ անգլիական գօնսիլ։

**) Տաճկա-հայաստանում ոչ միայն նահանգական առաջնորդները այլ և գաւառական վանահայր-առաջնորդներ ևս իրաւունք են ստացել յատուկ ֆերմաններով տեղոյն կառավարչական ատեաններում տեղը և ձայն ունենալ, բայց զանձառութիւնները չատ կան։

Խոռխոռունիք) գաւառի հայաբնակ գիւղերից, թէ ինչ լիառատ պտղատուութեամբ և արդիւնաւորութեամբ արդէն յայտնի է։ Այստեղ*) յիշելու արժանի է նորա նախորդ վանահայր-առաջնորդ և յայտնի քարոզիչ Սօլախեան հանգուցեալ Յովսէփ ծ. վարդապետը, որոյ երկարամեայ և օգտակար պաշտօնավարութեամբ վանքը խիստ բարւոք վիճակ ունեցաւ, ամեն առաւելութեանց հետ, ունեցաւ և դպրոց։ Սօլախեանը ինչպէս գործող մարդ՝ ընտրուեցաւ Բաղէշի առաջնորդ. բայց կարճատև եղաւ այդ պաշտօնը այնտեղ էլ կնքեց իւր բազմարդիւն կեանք։

Սքանչելագործի վերջի վանահայր, 1895-ին Բզնունեաց գաւառում տեղի ունեցած խառնակութեանց առթիւ տարագրուեցաւ Պոլիս, մինչև նորա կրկին վերադարձը՝ 1896-ին արդէն կողոպտուած էր վանք անշուք և անտէր մնացած։

Վանայ հարաւային կողմ

ՀԻՆ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ—ՀԱՅՈՑ-ՁՈՐ ԴԱՒԱՌԱԿՈՒՄ

ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

43. Վարդ-պատրիկի մատուռն

Ճուրջ գանք այժմ Կապուտակ ծովի հարաւային եզերքով, անցնելով գեղեցիկն Արտամետի, Ս. Վարդան

*) Տաճկահայաստանում ոչ միայն նահանգական առաջնորդները այլ և գաւառական վանահայր-առաջնորդ ևս իրաւունք են ստացել յատուկ ֆիրմաներով տեղոյն կառավարչական ատեաններում տեղը և ձայն ունենալ, բայց զանձառութիւնները չատ կան։

գիւղերի մրգառատ այգեստաններաց միջով՝ մտնենք նախ Հայոց-ձորի արևմտեան մասն, ձախ թևի վրայ թողլով լեռնաղաշտն Արտամիտու և աջ թևին՝ Ծովածաւալ ծովն Վանայ։

Դեռ չ'հասած Հիւր-գոմ հայաբնակ գիւղն. նորա սահմանին մէջ դէպ ծովն, դէպ կղզին Աղթամարայ երկարացած հրուանդանի մէջ տեղում, հեռուից բարձրաբերձս երևում է մատուռն կամ գերեզմանն Վարդ-Պատրիկ իշխանի։

Հայոց-ձորի հայ շինականների հայ իշխողի նուիրական վայրն՝ ափսոս և ափսոս որ Վասպուրականի 10 երը. դարու կիսումն այս նշանաւոր մարդու դամբարանհանգստավայրն չունի այն շուքն ու պատշաճութիւն՝ որոց արժանի իսկ էր. ժողովուրդն է միայն պահող նորա սուրբ յիշատակն, պատվում ու մեծարում է և խիստ ակնածութեամբ բոլորում է նորա գերեզմանի շուրջն և, տարին քանի մի անգամ այցելում է. պտուղ մի խունկ կամ ման մի ձէթ և քանի մի հատ մոմերով պատուելով հայ իշխանի յիշատակն՝ կատարում է իւր Ս. ուխտն։

Վարդ-պատրիկի գլխաւոր տօնակատարութիւնը լինում է աւելի Վարդավառի կիւրակէին. այդտեղն են խրոխտում ու հաւաքվում Հայոց ձորեցի աւելի երիտասարդ և երիտասարդուհի երկսեռ բազմութիւն, այն բոլորած պարերգներումն էլ կապում են իրանց սիրտն ու միտք միմեանց հետ...։

---

44. Անգղայ Ս. Աստուածածին վանք

Ստորին Հայոց-ձորի Անդղ գիւղի պարտէզների վերև, արևելեան կողմն, Համանուն գետի ձախ ափին կառուցվել է համանուն Անգղայ վանք, յանուն Ս. Աստուածածնի. փոքրիկ եկեղեցով մի և ամրաշէն տաճարով։

Հարաւային կողմից ահաւոր դղրտիւնով, որոտընդոստ սահում է *) Խոշապայ կամ Անգղայ գետ. իսկ երեք կողմից հարթ տարածութեան վրայ են վանքապատկան ագարակն ընդիր վարելահողերով, փոքրիկ պարտէզներով և մարգերով։

Անգղայ վանքը հնուց ժամանակաւ յանձնուած է նոյն գիւղացի Տէր Գէորգեան բարեպաշտ մի գերդաստանի վերահսկողութեան, որոց որդիքը յաջորդաբար կառավարում են մինչ ց'ներկայս և խիստ հաւատարմութեամբ։

Վանքի-տաճարի աջակողմեան անկիւնի քարի միջից։ անընդհատ ծնծնում է կաթիլ-կաթիլ ինչ որ մի ձիթանիւթ հեղուկ, որին ժողովուրդը կոչում է Ս, Աստուածածնի արտասուք, թէ որմաքարն և թէ ձիթանիւթը հրաշալեաց կարգն է անցել. ուխտաւորք այդ իւղը բամբակի վրայ առած ամենայն ջերմեռանդութեամբ քսում են աչքերնին. խրում են ականջներ և ոմանք՝ տուփերի մէջ դրած հետները տանում են և հարևաններին էլ տալով։ Անգղայ վանուց տօնակատարութիւնը լինում է վերափոխման տօնին. գաւառի ամբողջ գիւղերից լեցվում են այդ տեղ երկսեռ ստուար բազմութիւնը. հայ. թուրք, քուրդ տեղական ազգաբնակութիւն, որոնք մի ժամանակ ապ-

---

*) Խոշապայ (քաղցր ջուր) կամ Անգղայ գետը որ բղխում է Անձաւացեաց արևելեան լեռներից, Հայոց-ձորը բաժանում է հարաւային և հիւսիսային մասերի, արևելքից արևմուտք ուղղելով իւր գնացք՝ թափվում է Վանայ ծով։ Հայոց-ձոր գաւառի Բրժնկերտ գիւղի մօտակայ լեռան բազմաթիւ ակունքներից բղխում է Շամիրամայ պատմական առուն. որն անցնելով նոյն Անգղայ գետի վերևից, ջրելով ստորին հայոց բազմաթիւ հանդեր և այգիները թեքվում է դէպ հիւսիս Արտամետ, Ս. Վարդան և Ծվսան գիւղերի ամբողջ դաշտավայրը, այգեստանք ոռոգելով մէկտեղ, առատ ջուր է տալիս նաև Վանայ հարաւային կողմ գտնուած Շամիրամայ այգեստաններաց և ընդարձակ դաշտերին։

ըում էին միմեանց հետ սիրով և մասնակցում էին միմեանց ուրախութիւններին։

1890 թ. ի մեծ զարմանս և ի ցաւ ժողովրդեան, վանքում մուտ գործեց մի ոճրագործ քուրդ, Թէֆիւրի անունով, որպէս վանքին պահապան (նօրադար) պաշտպանելու պատահական աւազակներից. բայց առաջինը ինքը եղաւ որ մեծ չարիք հասցուց շրջակայ հայ գիւղացւոց. աղէկ որ Աղթամարուխաչատուր կաթողիկոսը շուտով ժաժ եկաւ և յաջողեց այդ զողն և գողաղարան մարդը դուրս խոկել վանքից։

Տասնութ տարուց առաջ 1882-ից այստեղ բացուել է «Միացեալ» ընկ. դպրոց. բայց թէ դպրոց և թէ այն փառաւոր եկեղեցին նոյն (96 թ.) դէպքում *միքանի ժամում հրոյ ճարակ* դարձրին։

45, Էրէմէրու Ս. Աստուածածին վանք

Վերին Հայոց-ձորի՝ համանուն Էրէմէրու գիւղի արևելեան կողմն է Էրէմէրու Ս. Աստուածածնի վանք, փառաւոր տեսարանով, ծառատունկերով, բերրի և արգաւանդ հողերով։ Նայելով գիւղին և վանքին, որոնք հազիւ թէ տասն վայրկենաչափ հեռաւորութիւն ունին միմեանցից. մարդս ինքն իւր հետաքրքրվում է այդ շինական դասակարգի բարեպաշտութեան և ջերմեռանդութեան ցոյց տուած բարի օրինակին. թէ որ աստիճանի ակնածութեամբ են վերաբերում դէպ իրանց յատուկ պատկանեալ սրբատեղին։ Ամեն որ գիւղացի՝ կին թէ մարդ, առաւօտեան՝ աղօթարանը բացուելուն պէս, նախ դիմում վանքի քարն ու խաչ համբուրում, ծնրադնում ապա դառնում դէպ գիւղական եկեղեցին։ Հօտաղն ու մշակն, հերկավարն ու սայլորդը անցնելով այդ սրբավայրի կողմից՝ անարգել խաչակնքում է, մի համբոյր պիտի դրոշմէ վանքի դռներին և մրմնջելով աղօթքն՝ շարունակէ իւր գործը։

Էրէմէրու վանքը արդէն 1895 ի աշնան վերջերումն էր կողոպտուել այդ յայտնի չարագործ Զաքրրից, որի Վանահայր Տէր Մարտիրոս երիտասարդ քահանանը այդ ոճարագործի սպառնալիքից խոյս տուած՝ գիշերով փախել էր Վան։ Մնաց այնտեղ մինչ 96 ի հանրային կոտորածն. և այդ չարաբաստիկ օրում, ի թիւս դժբաղդ Կլորդարցւոց նա ևս սպանուեցաւ Սէմէրջեանենց տան։

46. Խէքայ (Հայկայ) Ս. Աբրահամի վանք

Հայոց-ձորը ինչպէս հայոց բնագաւառ՝ լիքն է մեծ փոքր, նշանաւոր, աննշան վանք ու մատուռներով. շէն ու անշէն աւերակ, կիսաքանդ սրբատեղիքով, բայց ամենից նշանաւորներն են մեր տեղագրածները։

Խէքայ (Հայկայ) Ս. Աբրահամի վանքը գտնվում է հայոց-ձորի արևելեան կողմ, գետի աջ եզերքով ընկած կոնաձև բլրակի մի վրայ, ունի իւր մասնաւոր Վանական կառավարութիւն, ազարակ գիւղատնտեսական պարագայիւք։

Ըստ Եղիշէի պատմութեանն, այս Աբրահամն էր Ս. Ղևոնդեանց աշակերտներից, որ նոցա հետ Խուժաստան տարուած կապեալներից մին էր, որոյ ընկեր երանելին Խորէնը աքսորավայրի դժնդակ օդից ու տապից կնքեց իւր կեանքն և. Աբրահամը որպէս լրաբեր հրեշտակ՝ դառնալով հայոց աշխարհ, ոչ սակաւ մխիթարութիւն է պատճառում վաղանդի կապուածների ընտանեաց։ Աբրահամը արժանանալով հայրենիքին և նա բարի մահով կնքում է իւր բազմաչարչար կեանք, և թաղվում այդ սրբավայրում, որոյ վրայ է և վանքն Հայոց ձորի Հայոց միշտ խնկելի վայրն։

Ս. Աբրահամ վանքի հարաւ-արևելքումն է հին Զենիս կամ Զենակ գիւղ, որտեղից եղել է ինքն Խոստովանող վկայն Աբրահամ, Վանքից մէկ ժամ հեռաւորութեան վրայ։

Խէք (Հայկ) գիւղին հանդէպ է Հայկայ բերդ. պատմական այդ յուշարար Դղեակ, որոյ շուրջն վեր ու վարն դեռ մինչ ցներկայս չեն դատարում պեղումները գործելուց, դուրս բերելով հնութեան վերաբերեալ շատ թանգագին իրեղէնները նետեր նետասլաքներ, մեծ ու փոքր դրամագծով օղեր, Վահաններ և այլն, որոնցից շատերը Եւրոպացի ճանապարհորդաց ուշադրութիւնն դրաւելով գնել են և ուղարկել են ուր որ տեղնէ։

Վերին և ստորին Հայոց-ձորի գիւղերի անունները ընդհանրապէս հին ժամանակից դրուած պատմական անունները պահվում են տակաւին նոյն իսկ կառավարութեան շրջաններում օրինակ Աստուածաշէն, Խէք. Անդդ, Անգշտանց. Հարատենց. Բժնկերտ. Մաշտակ և այլն բոլորը հայ անուններով։

47. Ս. Աստվմեանց զօրավարաց վանք

Արտաս լեռան արևելեան ստորոտի բարձր սարահարթի վրայ կառուցվել է փոքրիկ Վանքն յանուն Աղովմեանց զօրավարաց, այն նահատակների՝ որոնք կռապաշտութեան երեսից խոյս տուած դէպ Հայաստան, հասնելով այդ վայր՝ այլ ևս չեն կարող ազատուել կրակապաշտ պարսիկների հալածանքից. 'Իսէր հայրենի կրօնին նահատակվում են առետեղն և որոց նշխարքն թաղուելով այդ տեղ՝ իվերջոյ հաստատվում է վանքն։

Երէմէրու Ս. Աստուածածին, Խէքայ և Ատովմեանց վանքերը միմեանց մօտիկ, հազիւ մէկ մէկ ժամ հեռաւորութեամբ, կազմում են եռանկիւնի մի շրջանագիծ պա-

տուար Հայոց-ձորի վերի մասումն, որպէս սահմանի պարիսպաները պաշտպան ու պահապան են հայ գիւղացիների։

Այդ երեք վանքերի ուխտագնացութեան օրը լինում է գլխաւորապէս Համբարձման տօնին, ուր խռնվում են թէ գաւառեցի հայեր և թէ Հոգւոց Վանից վերադարձող ուխտաւորք, իրանց վերջին հոգեկան մխիթարութիւնն այստեղ առնելով և մնացեալ խունկն ու մոմ, աջ համբոյրն սոցա Գանձանակում են ձգում կատարելով ուրախ և զուարդ պարերգները։

Որքան ինձ յայտնի է՝ Հայոց-ձոր գաւառակը իւր ամբողջութեամբն օդով, ջրով, բերրի և արդաւանդ հողերով, հանդ ու հանդաստանով, ծաղկաւէտ բլուր ու բլրակներով մի դրախտավայր է ներկայացնում. մանաւանդ Խօշապ գետն և Զամիրամ առունը, որոնք ոռոգելով երկիրն լիովի վարձադրում են քրտնաջան աշխատաւորն։ Բացի այս առաւելութիւնից՝ վերին մասումն են այն յայտնի և արագաշարժ քառասուն ջրաղացներ (չրլ աշ), որոնք ամեն մինը մի ժամում կարելի է ասել 50—80 փութ ցորեն են աղում իւրաքանչիւր ջաղացն և այնպէս մանր ու մաքուր, որոյ տեսակին Հայաստանում ոչ մի տեղ չեմ տեսել։ Բայց ափսոս՝ այդ բոլոր առաւելութեամբ յղփացած գաւառակը մի երկու օրում գիւղերովն, սրբավայրերովն և հարուստ ագարակներովը ոչընչացաւ այնյայտնի աւազակ Զաքրի և իւր արբանեակների աւարառութեամբ հրկիզութեամբ և սպանութեամբ։ *)

*) Երբ 96 ի յունիսի 3-ին Վանը վտանգի մէջ էր. Հայոց-ձորը աւելի սաստիկն էր տանջվում Շաքրի հրոսակ խմբի ձեռումն։ Այդ աւազակաց յառաջացումն արգելելու համար Վանեցի նշանաւոր պաշտօնական-թուրքերից մինը Համոի բէկը ուղարկուեցաւ նոցա առաջն առնելու, բայց Շաքրը պատահաւոր գտաւ իւր հին վրէժն լուծելու, հէնց առաջին բանակցութիւնն եղել էր մի կարմիր գնդակ, որով Համոի բէկը սպանուելով՝ իւրայինքն փախչում են դէպի Վան։

48. ՀՈԴԻՈՑ ՎԱՆՔ

Ցանուն սուրբ Աստուածածնի

(*Անձաւացեաց գաւառում*)

Անցնելով Հայոց-ձորից դէպ հարաւ, բարձրանալով Զըլ-ճապ (քառասուն պտոյտ՝ մանուածք) կոչւած Արտոսի շղթաներից միոյն վրայով մտնում ենք Անձաւացեաց գաւառի առաջին հանդիպած ընդարձակ հովիտն և անտի Կասրիկ գետի ընթացքին հետ դէպ արևմուտք դառնալով, ոլորապտոյտ ձորերով, նեղ, վեր ի վայր շաւիղներով, անտառի թարմ տեսարանով զրաղած՝ հասնում ենք Անձաւացեաց գաւառի միակ Մենաստանն, Հոդեաց վանք՝ յանուն սուրբ Աստուածածնի, ամուր, ամրակառոյց որմերով և լայնանիստ պարիսպներով։

Այդ անջրդի հովիտն որտեղից անցանք, լիքն է գերեզմանաքարերով, խաչ-արձաններով արջի և զանազան գաղանների նկարաքարերով, որոնց բոլորին մէկտեղ քրդերը *դաշտայ դէմ* են կոչում, անջրդի դաշտ և միւս գերեզմանամասին՝ *Գապրիստանը Գաֆրրան*-հեթանոսաց գերեզմաններ։

Թէ դաշտի և թէ այդ ընդարձակ գերեզմանատան վերաբերեալ պատմական մի ինչ գրուածք գէթ ինձ՝ չէ պատահել, բայց ժողովրդի աւանդութիւնը շատ հերոսական և ժամանակակից պատմութիւններ ունի *Դաշտայ դէմի* և Գապրեստանը Գաֆրրանի վրայ, որպէս թէ այդ տեղերում տեղի է ունեցել ահեղ ճակատամարտ հայերի և պարսիկների մէջ. թէ երբ և որ ժամանակ, դարձեալ մնում է խուլ և անյայտ։ Մենք կարող ենք եզրակացնել և հաւանականութեան բերել որ՝ հինգերը. դարու սկզբից կրակապաշտութեան և քրիստոնէութեան կրօնների կռիւ-

ները պակաս չեն եղել սահմանագլխի հայերի և պարսիկների մէջ և, Անձաւացեաց գաւառը որպէս սահմանագրուխ արևմտեան Պարսկաստանի և Մարաց՝ անտարակոյս պակաս չեն եղել և անընդհատ ընդհարումները և *դաշտայ դէմը* և թէ նորա շրջակայք անշուշտ այդ կռիւներից միոյն նշանաւոր տեղն է եղել։

Երեք բարձրակատար լեռներին հովանաւորուած, անդընդախոր ձորերի և շրջապատուած խիտ անտառների միջում, Տիգրիսի արևելեան գլխաւոր ճիւղի և Կասրիկ գետի եզերքովն փառահեղ և ամրակառոյց մնում է Սրբաւայրն, որոյ հիմնարկութիւնն դեռ տասն և ինն դար յառաջ արել են Հայաստանի առաջին Լուսաւորիչները նախ Թադէոս և ապա Բարդուղիմէոս առաքեալները, երբ Եդեսիայում կատարելով իրենց երկնային առաքելութիւնը, մեծաւ նահատակութեամբ մտնում են Մեծն Հայաստան և կստորելով հին աստուածների արձանները նախ այդտեղ տնկում են փրկչական Խաչն և ըստ պատմութեան՝ ամփոփում են այդ սրբավայրումն իրենց հետ բերած կենդանակերպ պատկերն սուրբ կուսին Մարիամու, և ապա անցնում են Արտազ՝ Սանատրուկի մօտ։ Այդ սրբավայրի շրջակայքից դեռ անյետացած չեն հին կռապաշտական ծիսարանները, զոհարանները, որոնք ժողովրդի բերանում տակաւին ունին իրանց որոշ անունները և դոցա մօտովն էլ քրիստոնեայ նահատակների հրնուց ունեցած ճգնարաններ, քարայր-խցիկներ և մատուռները։

Այդ երկու գետերը—Տիգրիս և Կասրիկ—վանքի առաջև միանալով այդտեղ թողնում են մի փոքրիկ *դէլթա*, կանաչազարդ և ծառատունկ մակերևոյթով, որոյ վերի մասումն անշուք և անզարդ կառուցուած է մատուռն կամ հանգստարանն հայոց անպարտելի քաջին Տրդատայ պարթևաղն հասակի սուրբ նշխարքն. հասակն սա մատուռն

անհաւասար չափով, միայն Կասրիկի և մունջ Տիգրիսի երբեմն ահեղազղորդ սահանքն են որ կենդանութիւն են տալիս մատուռի խուլ շրջակայքին։ Այս մատուռը անխրտրաբար ուխտատեղի է հային էլ, ասորիին և քրդին էլ, որոնք որոշեալ տօնին համախմբում են դորա շուրջն և կատարում են հանդիսաւոր թափօրն, այդտեղ բազմացընելով և ս. Գեղարդ մասունքն, զոհաբերելով, մատաղներ կտրելով բազմաթիւ գառներ և ոչխարներ։ Քրդերի կանայքը աւելի հաւատք ունին Տրդատայ շիրիմի վրայ. նոցանից չ'բերները, ամուլները եօթն անգամ պտոյտ են գալիս մատուռի շուրջն ապա խրում են պատերին մի ինչ մեխ և երկաթեայ շիշ, և այդ յոյսով յաջորդ տարին հասնում են իրանց *սրտի միւրազին*...։

Մի տասնեակ տարուց առաջ՝ Հոգւոց վանքը խիստ բարւոք տնտեսագիտութիւնը և հարստութիւն ունէր գիւղատնտեսական պարագայիւքն։ Նորա մասնաւոր ագարակում կթվում էին մօտ հինգ հարիւրի չափ ոչխարներ, քառասունի մօտ կովեր ու մատակներ, նորա հորերն ու ամբարները միշտ լիքն էին պահեստի ցորենով և այլն հացահատիկներով, նորա մառանը լիքն էր միշտ մի տասնեակ տկերով իւղ և աւելին պանիր ու տօմաստ (սերով պահած պանիր) և, որ մէկն թուեմ, ամենայն ինչ առատ էր վանքում։ Նորա երեսուն տարուայ աշխատաւոր վանահայրը ծերունազարդ Մատթէոս Ծ. վարդապետը հալածուեցաւ շատ անգամ Գյրաւցի քրտերից, նրա մահուն էլ քայքայեցաւ այդ հնաշէն վանքի տնտեսական ամեն մի դրութիւնն։

Ես յիշում եմ մի քանի անցեալ տխուր դէպքերը, որոց ենթարկվել է վանքը։ 1869—70 թուականներում նոյն Գյրաւցի քրդերից կողոպտուեցաւ չարաչար, 'իթիւս այլ սրբութիւնների և անօթների աւարի տարան Ս. Գեղարդ մասունք. յետ երկար խուզարկութիւններից՝ շնորհիւ հանգուցեալ Պօղոս եպիսկոպոսի Մէլիքեանց՝ շատ դժուարութեամբ ետ բերուեցաւ, գրէթէ հանգուցելոյն հեղինակաւոր ուժովն և խելամտութեամբն։ 1877-ի պատերազմի խառն ժամանակ, դարձեալ մեծ յարձակում կրեց վանքը, որոյ քշեցին ագարակի ամբողջ դուարն ու ոչխար և երկրագործական պարագաներն ամեն։ 1894-ին երբ սկսուել էր հայերի կրետիկական վիճակի և թշուառութեանց նախերգանքն, այդ մեծ ոճրագործ Ճէքքրի առաջնորդութեամբն աւելի անգութ կերպով կողոպտեցին, ի թիւս բազմաթիւ դուար ու ոչխարաց, տարան շատ սրբութիւններ, թանգագին զգեստներ, հարիւրից աւելի խաչերը, միայն Ս. Գեղարդ մասունքն էր որ ազատուելով. վանահայր Տիմէթէոս վարդապետը շլինքից կախ տուած փախցնելով Վան՝ տանից տուն էր փոխադրում։ 1896-ի գարնան սկզբներին վանքի պարսպաց ներքև չարաչար սատակեցան այդ աւազակներից ոմանք, որոնք եկել էին վանքը կրկին կողոպտելու և կամ ձեռքակալելու մի խումբ զբօսաշրջիկ հայ երիտասարդներին...։ Իսկ 1896 թ. Յունիսի 3—11-ի հանրային կոտորածին՝ թէ վանքի և թէ իւր շրջակայ սակաւաթիւ հայ և ասորի գիւղերը հասան իրանց թշուառութեան աստիճանին նոյն իրանց մօտիկ հարևան Գյրաւցի քրդերի ձեռքով։ Այդ հռչակաւոր վանքը ոչքան հարուստ էր նիւթապէս՝ այնքան աւելի անմխիթար էր բարոյապէս իւր թեմականների վիճակը։ Իրաւ էր, որ վանքը և թեմականք հարուստ էին գիւղատնտեսական միջոցներով. բայց խորին տգիտութեան մէջ։ Անձաւացեաց վիճակում, վանքին պատկանեալ քսանհինգի մօտ թեմական հայ գիւղերը զուրկ էին բարոյական մխիթարութիւնից, ոչ մի շէնքում չրկար մի տեղ մի տուն, ուր դեջուկ մանուկը սովոր էր. մայրենի *այբն* ու *բէնն*։

Անձաւացեաց գաւառի հայ գիւղերից նշանաւորները Կողան, Փիր-պէտէլան, Կանկուառ, Ճիվռաշ, Մաքօշկը այդ

աւազակների հարստահարութեաց երեսից դաղարկացան շէն շէն գերդաստաններից, փախստական գնացին օտար աշխարհ, մեծ մասը պարսկաստան և ներկայիս մէջ իսկ, չ'կայ այդ գաւառում մի ինչ մխիթարական երևոյթ որ ապահովէր հայերից աւելի թշուառ ասորիների վիճակը։

Ասորիներ ևս դաղապարտուած են հայերի կրած ամեն թշուառութեանց, քանի՛ քանի՛ ասորի աղջիկներ և մանկամարդ կանայք բռնաբարուել են, և առևանգուել, և տարուել * Օրամարայ կենտրոնավայրը բռնի կրոնափոխելու և չ'սիրածին վրայ ամուսնացնելու...։ Հոգւոց վանից տօնակատարութիւնը կատարվում է Համբարձման տօնին, ուր խռնվում է տասն հազարից աւելի ուխտաւորք, հայն քուրդն ու ասորին այդ օր ի միասին տօնում են և կատարում իրանց զոհաբերութիւնն։ Թէ լինի տնտեսական բարւոք մատակարարութիւն, և դորա հետ ապահովութիւն կայքի և կեանքի. միայն այդ գլխաւոր տօնի օրն եկած եկամուտով կարելի էր պահել կանոնաւոր մի նախակրթարան-դպրոց. բայց ցաւօք սրտի կա. սենք որ, երկուքն ևս միշտ պակաս են եղել մեր վանքերի շրջանից։

ՎԱՆԱՅ ՀԱՐԱՒ—ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄ ՌՉՏՈՒՆԵԱՅ -ԴԱՒԱՌ ԴԱՒԱՌՈՒՄ ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Ստորին Հայոց—ձորից անցնելով դէպ հարաւ—արևմուտք, կտրելով Վանայ ծովի հարաւային եղերադիծն մտնում ենք Ռշտունեաց—Գաւաշ գաւառի դուռն՝ Աթանանց գիւղ, Արտոս սարի բուն ստորոտում հովանաւորուած

*) Օրամարը Անձաւացեաց (Խօշապ) գաւառի կենտրոնական տեղն է ասորոց Գիւղաւանը՝ ուր նստում է գաւառապետը ստորադաս պաշտօնեաներով։

մի կողմ ծաղկաւէտ լեռան ստուերով և մրգառատ ծառատունկերով պատուած։ Անտի դեռ չ'մտած Ազատների մայրաքաղաքն—Ոստան և իւր մեծատարած այգեստանեայց մէջ, այդ ճանապարհի ձախ թևին վրայ դարձեալ Արտոսին կռթնած հովանաւորուել է մի փոքրիկ վանք, դա է Սիվտկու—Սպիտակ—վանք։

49. Սիվտկու Սպիտակ վանք

Սիվտկու—Սպիտակ վանքը Աթանացւոց մէկ հատիկ սրբատեղին է։

Հողն սպիտակ, քարն սպիտակ, գմբէթն ու կաթուղիկէնը սպիտակ, եկեղեցին և շուրջն դտնուած բոլոր շէնքերն էլ սպիտակ, սրբատաշ քարերից շինուած։ Թէև փոքրիկ և սահմանափակ է Սիվտկու վանք, բայց քաղցրիկ ու վայելչապէս շինուածքով լռիկ ու մշիկ կծկտել է մի կողմ, ճամբից ու բանաւոր անբան ճամբորդներից մեկուսի՝ փոքրիկ միաբանութիւնով ապրել է երկար տարիներով, շուրջն ամեն հաստարմատ ընկուզի ծառերով, որոնք բարձրաբերձ պարիսպների նման՝ իսկապէս ցանք և մեծ պատուար են ամբողջ վանքի շրջանակում։ Ինչ հանդ ու հանդաստան, վարելահող որ ունի վանքը բոլորը ընկած են Արտոսի հարաւային երկու լանջով և, մի փոքր մասը երկարացած դարձվում է դէպ Ոստանայ այգեստանք։ Սիվտկու վանքը գոյութիւն ունեցել է Արծրունի թագաւորաց և իշխանաց ժամանակից. այդ տեղ թաղուած են այն տոհմի նշանաւոր իշխաններից ոմանք, նոյնպէս և հոգևորականները։

---

50. Զաղար կամ Զարահան Ս. Նշանի վանք

Աթանանց գիւղի բարձրավանդակից սկսեալ՝ ուշի ուշով դիտելով Ոստանայ լայնատարած մրգաւէտ այգեստանեայց գեղեցիկ տեսարաններ, հազիւ մէկ ժամ ճանապարհորդելով՝ հասնում ենք այգիներից դուրս մի շարք հաստարմատ ընկուզենեաց։ Այդ ճանապարհի ոլորապտոյտ շաւիղների հետ, այգեստանք և բուրաստանքն երբեմն լայնանում և ահագին տարածութիւն են բռնում և, երբեմն նեղվում տարածվում են հսկայ լեռան—Արտօսի հարաւային լանջերով, խողոջացող ջրերի և ջրվէժների, հրիւրաւոր առուակների՝ ոռոգումներով.

Ահա այդպէս խիտ ծառոց ու բուրաստանեայց ներքև հովանաւորուած, երկար դարերի և տարիների ընթացքում անվթար կացել ու մնացել է Արծրունեաց աշխարհի, մայրաքաղաքին Ոստանաց Սրբավայրն, Զաղար կամ Զարահան Ս՝ Նշանի վանք, յորում, ըստ աւանդութեան, պահուած մնում է և, որպէս սրբազան Մասունք՝ Վարդանայ գպիր Մեղրածորան Եղիշէի կրծքից վեր առած այն լանջախաչն կամ մասն խաչափայտից. որին դիմում է հայ Ժողովուրդ համբոյրները դրոշմելով։ Մի միայն այդ չէ Զարահանի Սրբութիւնն ու մասունք, զորանից յետոյ մենք ունենք այդ Սրբավայրում և մի թանգագին աւանդ պահ տուած, դա նոյն ազգ ազգնեակի. Աւարայի սոխակի սրբազան նշխարքն են։ Մի՝ նայիք անշուք և անգարդ, պատատակովն ընկած դամբարանին, յարգելին և խնկելին նորանումն ամփոփած պատուական գլուխն ու ձեռներն են. որոնցով յղացաւ ու գրեց իւր ոսկեգրքոյկն—Եղիշէն, անմահացրեց իւր Վարդանն և իւրայինքն, անմահացրեց անմոռաց նահատակութիւնն հայոց աշխարհի, անմահացրեց հինգերը. դարու հայն ու Հայաստանը։

Անշուք է ասացինք՝ վանքն ու վանաստանը Զարահան սուրբ Նշանի, նոյնչափ և անշուք է տապանն ազգ ազգնեակ Եղիշէի, բայց շուրջն ու շրջապատն կարծես թէ դրախտի չորս գետամիջումն ես. Արտօսի բուն ստորոտում, որի բոլորդիքից անընդհատ կըլկլում. կչկչում. խողոջում են լեռան գառի վայրից բղխող վտակներ, աղբերք և աղբերաց ակունքը կազմելով արագավազ առու և առուակներ։

Արևմուտքից և հարաւից լեռան դուրս տուած սրբտին վրայ և ստորոտովն սարածվում են ճոխ մրգաստանք և ծիրանատունկ այգեստանք Ոստանայ, հիւսիսից՝ լայնածաւալ հարթ դաշտավայրը ու մարգագետինք և անտի մինչ Կապուտակ ծովի երկնագոյն մակերևոյթն մինչ հեռու հօրիզոնն, անարգել մինչ Քաջբերունեաց, Գնունեաց գաւառներ։

Գերեզմանն Եղիշէի, որն մինչ 1899 թուականներին, արտաքոյ գաւթին գտնվում էր եկեղեցւոյ որ մի տակ. Շնորհիւ ամենապատիւ Խաչատուր կաթուղեկոսի ներս առնուեցաւ եկեղեցւոյ մէջ, և հանգուցեալ Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանցի արած ու կտակած մի որոշ գումարով՝ կառուցուելու է ընտիր շիրիմ և դմբէթ մի մարմարեոնից, արժանաւոր և վայելուչ կացուցանելու անմահ հայ գպրի Ս. Շիրիմն։

Ոստանայ այգեստանեաց մէջ՝ զանազան թաղամասերում կան մի տասնից աւելի աւերակ սրբավայրերի և եկեղեցիների հետքերը և փլատակներ, երկու լայնանիստ հին ամրոցի և աշտարակների մնացորդներ, որոց քրտերն Խանէ միրան են կոչում—իշխանաց տուն-այդ բոլորը տեսնելու ինձ յաջողվել է 90—91 թ։ մի պաշտօնէի հետ։ Հին մայրաքաղաքի աւերակները, բերդն ու պարիսպներից մի մասը ծովի եզերքի կապաններով տակաւին մընում են անցեալ գործունէութեանց նմուշներ. երկարատև

դարերի անողոք և աւերիչ քայքայումն և թէ արտաքին թշնամեաց խորտակումն դեռ այնչափս չեն ազդել նոցա իսպառ ոչնչացնելու. իւրաքանչիւրն ունի տակաւին իւր նշանակութիւնն և շինութեանց աւերակ տեղերն, հին փշրանք Արծրունիների գործոց։

Ոչ թէ միայն հայ, այլ ամեն նոքա, զգայուն սիրտը. ինչ ազգից էլ որ լինին, տեսնելով ազատների-Մայր քաղաքի-այդ կիսակործան և կուտակուած աւերակները, փլլաքանդ շէնքերը, պարիսպներ և ի խոր կործանուած դարբասները որոնք մի ծանր և սրտաճմլիկ տեսք ու տրպաւորութիւն են թողնում, չէ կարող անտարբեր մնալ և չ'յիշել նորա անցեալն, անցեալը որը լի է պատմութիւնով... ու չ'թափել մի պուտ արտասունք։

Աւերակ բերդի ստորոտումն են և այլ մի մաս մըզաստանք դէպի ծովն տարածուած, որոց բոլորին մէկ տեղ քրտերը կոչում են Ռազ-Միրան այդիք իշխանաց և, արդարև իրանց դրից վայելչութեամբ և թարմութեան արժանի են այդ իշխանական անուան, ճիշտ դա է եղել պայազատների զբօսավայրն։

Զարահան Ս. Նշանի վանքը երկար ժամանակաւ կառավարվում էր մի աշխատասէր ոմն Տէր-Սարգիս քահանայի և որդւոց վերահսկողութեամբ, քահանան իւր որդիք թէ Վանահայր էին թէ պահապաններ և թէ լաւ հողագործներ։

Վերջին տարիներում Աղթամարու վարչութիւնը հետզհետէ վարդապետ-Վանահայր նշանակեց, բայց Վեղարաւոր հայրերը քահանայի չափ ազդեցութիւն չունէին շրջակայ քուրդ տարրի վրայ և ոչ էլ վանքը իւր առաջին շուքն ունէր։

1896-ի հանրային դէպքերին, վանքը չարաչար կողոպտուեցաւ ընիկ Ոստանայ քրդերից և վանահայր Մամբրէ վարդապետը ազատուած սպանութիւնից. օրերով ա-

նօթի ու ծարաւ ապաստանեցաւ Արտօսի ծակ ու ծմակներին, հազիւ ազատելով իւր կեանքը ծպտեալ և գիշերով փախաւ Վան և Զարահանի վանքը երկար ժամանակ ամայացաւ։

Այդ երբեմն շէն և ազատների վայրերը, այդ բնակութեան սուրբ տեղիք, ներկայումս ներկայացնում են փաթեան սուրբ տեղիք, նարնատիկ ֆախրդինների մի աշխարհ, լիքն են զանազան կարդի քուրդ շէյխերով, մօնլաներով, միւրիտներով և դէրվիշներով, ամբողջ Ոստանի շրջակայքում չկայ մի տուն հայ. եղածներն էլ դեռ քսան տարի առաջ դոցա անիրաւ

կերտուած մի այլ շէնք, որպէս վիթխարի դղեակ մի, բռնում է որոշ տեղ և տարածութիւն, բարձրաբերձ կամարներով և շուրջն ու խորանների մէջտեղերումն միքանի ոլորապտոյտ նրբանցքներով և թագստեան պահարաններով։ Բնականաբար և մարդս՝ գործակից լինելով բնութիւնից իրան պարգևած ձրից և շնորհաց, ստեղծում է հիանալի տիպ և կերպարանք, այդպէս և Իլու վանք, որն ի հնումն ունեցել է մեզ անյայտ և աննկարագրելի, հիանալի ճարտարապետ, ճարտարագործութիւն ու հին ձևի յատակագիծ։

Քառասուն խորանից այժմ դեռ կանգուն մնում են միքանիսը միայն, մեծ մասի ոմանց կամարներն են փուլ եկել. ոմանց որմերն և ոմանց բոլորովին շէնքն խոնարհել է և, այդ ամենը փոքր նրբանցքներով ուղիներ ունին միմեանց մէջ, սկսեալ մեծ դարպասից, որն տակաւին կանգուն մնում է, ուր շատ անգամ անպատկառ քրդերը ձմեռ եղանակում ոչխարաց մակաղատեղի են անում։

Բնիկ Իլու վանքեցի հայերը սրանից քսան-երեսուն տարի յառաջ հարստահարուած Ոստանայ քրդերից, թողած իրենց տուն ու տեղն, արտն ու այգին, ցրուեցան դէս ու դէն, ոմանք Վան և ոմանք մօտակայ հայ գիւղեր, իսկ Իլու վանքի պատկանեալ հողն ու հանդ նոյնպէս և նոցա բոլորը կայքն մնացին այդ քրդերի չարաչար կամայականութեան և այժմ էլ որպէս սեպհականատէր՝ շահագործում են։

Ընդենք ապա Ոստանայ սարն ի վեր և ի վայր. բարձրանանք նախ աջ կողմով, զգուշութեամբ անցնենք կապաններ նեղ ու ոլորապտոյտ քարքարոտ շաւիղներովը դառնանք դէպի ձախ Զօմարայ *) կապանն. անտի մրտ-

*) Զոմար՝ յայանի աւազակապետ և երբեմն տիրող Անձաւացեաց գաւառի՝ ազգաւ քուրդ, մօտ երկու դար յառաջ շատ չարիք է

նենք բուն Ռշտունիք կամ Գաւաշ գաւառ, յորում լիքն են սրբավայրերն և պատմական տեղիք և վերջին՝ այն տխուր անցքերը որոնք քիչ թէ շատ տեղեկութեամբ զբաղեցնելու են մեզ իրանց նշանակութեամբն։

Այդ նեղ ու ոլորապտոյտ կապանները իրանց հետ կապել են և շատ եղերական անցեալներ։ Շատերը այդտեղից գահավիժուել, վայր են ձգուել անդնդախոր ծովին տակ, կամ բռնաւորաց ձեռքով կամ խուսափելիս թշնամու ձեռքից։ Այդպէս եղաւ և անցեալ 1896-ի կոտորածի թունդ ժամանակին, երբ Ոստանայ անդութ քրդերը առանգելով Պատանկանց գիւղի յայտնի Սախոյի թոռն, զեղեցիկն Ռոնը, անցկացնելով կապաններից ուզում էին հասցնել իրանց որջ, թշուառ որսը իր ազատութիւնն գտնում է միայն ծովի յատակում...այդպէս և շատերն։

Ի վայր իջնելով կապաններից, բացվում է հիանալի տեսարանն Ռշտունեաց կամ Աղթամարու ծովակին. ջինջ երկնագոյն մակերևոյթն և առաջին նկատելի երևոյթները են ապարանաց աւերակք և դղեակն Ռշտունի նախարար Մանահիրի։ Փլատակաց կոյտերն, կիսաւեր պարիսպն դղեկին, որոնք մի մասը որպէս հրուանդան, և մի մասն որպէս կղզի, լուիկ ու մնջիկ վկաներ են արձանացել ու մնացել ձիզ դարերի ընթացքում։

Մանահիրը Ռշտունին ասորի եօթն սարկաւագները դերելովն և նոցա ի ծով խորատուգուելով, անիծուեցաւ, նզովեցաւ Մծբնայ հայրապետից և չար անուն ժառանգեց, դեռ մինչ ցնորկայս էլ Ռշտունի Հայոց աչքին չար է և չար է թվում, առանց մտաբերելու այդ քաջ զօրավարի անպարտելի արշաւանքները յասորիս։

հասցրել Վանայ գաւառներին և ապա անցել է Ռշտունիք, որն յիշեալ կապանից ձիովն քշելով ծովում, դիմացի Հիւր-Գոմ գիւղի մօտ անվնաս դուրս է պրծել եռեքին ընկնող թշնամիներից. այդպէս են պատմում։

Սորա հանդէպն է ճանապարհի ձախ թեւի լեռնադաշտի վրայ Քարադաշտ հայ գիւղն սքանչելի տեսարանով ու դիրքով։ Անտի անցելով ուղիղ պողոտայի վրայ, երբեմն ձախ դէպ Արտօսն, երբեմն յաջ դէպ Ծովն դարձընելով մեր հայեացքն, հասնում ենք Ախավանք՝ մեծ ագարակն կամ ջրհան-տուն Աղթամարու աթոռին։ Ախավանք թէ որպէս նաւահանգիստ կղզուն և թէ որպէս հիւրանոց վանքին, հիւրասիրել է և հիւրասիրում է շատ բազմաթիւ ուխտաւորք և այցելու ճանապարհորդք։ Ճշմարիտն ասած՝ արժէ մի երկու օր դիշերել այստեղ, վայելել հիւրասէր Աղթամարցւոց փափկանկատ քաղաքավարութիւնն, անուշ անել նոցա մաքրապէս պատրաստած սերն ու կարագ ծագուց մեղրով համեմած, և ապա մրտնել կղզին երկրպագել սուրբ նշանին։

52. Աղթամար կղզին Ս. խաչի վանք *)

Դեռ չ'մտած Աղթամար կղզին, կրկին մի հայացք ձգենք Ախավանս տան վրայ, որն թէ մեծ ագարակնէ կաթուղիկոսական տանն և թէ նորա ամենայն ինչ, շտեմարանը։ Ախավանս իւր շուրջն ունի մեծատարած սահմանները ընտիր վարելահողերով հանդ ու հովիտներով, պրակներով մրգաւէտ այգիներով և միշտ թարմ պարտէզներով։ Երկու մեծ առուները որոնք անընդատ սահում են և զոռզոռալով անցնում Արտօսի և Առնօսի լանջերից, հասնելով ագարակի վերևն՝ ոռոգում են այդ բոլոր հանդն ու այգեստանք, պտտացնում, բանեցնում են վանքապատկան այն երկու ջրաղացներն ևս։ Երեսուն տարուց սրանից յառաջ 'ի բացակայութեան Խաչատուր կաթուղիկոսի որ 'ի Կ. Պոլիս, հիզանցի բազմաշխատ Յակոբ եպիսկոպոսի ջանիւք և աշխատութեամբ՝ Ախավանս բարենորոգումների լաւ շրջան մի ունեցաւ, բացի գիւղատնտեսական բարւոք վիճակից, շինուեցան բաւականի յարմար շէնքեր, կաթուղիկոսարան, հիւրանոց սենեակներ, բոլորն էլ պէտքական և անհրաժիշտ, այնպէս որ՝ իհարկին պատուաւոր մի հիւր ընդունելու այլ ևս չէին ամաչում Աղթամարցիք։

Մտնենք ապա կղզին, եթէ օրը պարզ և ծովը հանդարտ է, մէկ և կէս ժամից, իսկ ընդ հակառակն եթէ փոթորիկ և ալեկոծեալ է՝ հազիւ երկու և կէս ժամում նաւով կտրելու ենք այդ ծովային ուղին։ Մտնենք և տեսնենք ինչ որ է։ Աղթամար կղզինը եռանկիւնաւոր և մեծ մասը լեռնային վայր է, որոյ մի մասի հարթ տարածութեան վրայ կառուցվել է Ս. խաչի վանք, հոգին ու մարմին, միտքն ու սիրտ իւր դաւառեցի հիզանցի, Մոկացի Զաաախեցի, Սպակերտցի բազմաթիւ հայոց։ Եւ ինչ կ'տեսնենք, ահա վիթխարի մեծագործութիւնն Արծրունի Դաւիթ թագաւորի, հիասքանչ ու հիանալի, հոյակապ տաճարն Ս. խաչի. սօսասարաս, մեծածաւալ կաթուղիկէն ու գմբէթն հայկական հին ճարտարապետութեան Սրբավայրին, որն յամառ դրութեամբ դիմացել է երկար դարերի անցքերին և յետս է ընկրկել իւր ոսոխն։ Դուրս գանք նաւից. մեր առաջին տեսանելի առարկաները են հին Աղթամարու խորտակուած աւերակները, տները որոնք սպաւորի պէս մի կողմ ընկած տարածված են կղզուն աջակողմեանեկերքովն։ Նայելով այդ մեծագործ աւերակների կոյտերին, ակամայից զգացվում է մարդս տխուր յիշողութեամբ, ինչպէս գրում է պատմութիւն, որ դա հին Աղթամար քաղաքն է, կուլ գնացած ծովի մակընթացութեանն։

Հոյակապ և վիթխարի եկեղեցին—տաճարն ու երկնաբերձ կաթուղիկէնը. որոնք բռնում են ընդարձակ բա-

*) Աղթամարու Ս. խաչ վանքը հիմնարկուել է 922 թ. կղզու հարաւային կողմ։

գի կենտրոնն, ունին իրանց հետաքրքիր և գրաւիչ տեսարանը։ Նախ գիտենք արտաքին որմերի վրայ նկարուած ու քանդակուած հին կտակարանի պատմութեան տիպերն ու ստուերագծերն, սկսեալ աշխարհի ստեղծագործութիւնից, Ադամ Եւայից, Մովսէսից և այլոց մարգարէից նահապետաց տիպերն, Աբրահամի զոհաբերութիւնն և այլն նկարուած են այդ տեղ և, ինչ տիրական մտքով ու նրբին քանդակագործութեամբ։ Մտնենք տաճարն Ս. խաչի, չորս կողմից կամարակապ շէնքերի և խորանների շրջանակաձև բոլորգիրքով բռնում են Նոր-կտակարանի գլխաւոր անցքերն, Քրիստոսի տնօրինական գործոց ամեն ինչ նկարները խիստ որոշ տիպերով, բոլորն օրինակելի և ուսանելի դասամենի համար։

Հարաւային պատի կամարապատ խորանի ամբողջութեան մէջ, որն մասնաւորապէս Գագիկ արքայի աղօթատեղին է եղել, նկարուած է մի ամփոփ պատկերն Ս. տաճարի՝ զորն մեղաւոր թագաւորը երկու ձեռքում բռնած նուիրում է Ամենակարող Աստուծոյ ի քաւութիւն մեղացն...։ Ո՛հ, դա շատ ու շատ քիչ է այն տիրանենգութեան փոխարէն, որ այդ ապերախտ Արծրունինը գործեց բուն հարազատ թագաւոր Սմբատ Բագրատունի զահակալին հակառակ... այդ թողնենք պատմութեան էջերին։

Դեռ մինչ 1880 թուականներին Կղզում, համապատասխան աթոռին չ'կար մի նշանաւոր յայտնի շէնք, բացի Ս. տաճարից. ոչ վեհարան, ոչ կահաւորուած սենեակներ և ոչ պատշաճի հիւրանոց, թողնենք դպրոցն ու թանգարան, սակայն այն թուականներից սկսեալ թէ միաբանութիւնը և թէ ինք հանգուցեալ Խաչատուր կաթուղիկոսը մեծ պէտք զգացին, սթափուելով իրանց տարտամ դրութիւնից, սկսեցին յարմարաւոր շէնքեր կառուցանել ի թիւս որոց և ժառանգաւորաց դիշերօթիկ դպրոցն (թէև կղզում լինելն շատ անհարմար է այդ դպրոցին), այնպէս որ ներկայումս կղզում տեսնում ենք Աթոռին քիչ թէ շատ համապատասխան վեհարան, հիւրանոց սենեակները և այլն։

Ոչ սակաւ զուարճալի են Աղթամար կղզու, այդ լեռնաղաշտի վրայ ընկած փոքրիկ պարտէզների տեսարանն, աւելի այն ժամանակ, գարուն և ամառ, երբ կապուտակ ծովի խաղաղ մակերևոյթներին հետ խաղաղ է և բնութիւն. մի կողմից վեհապանծ տաճարն, չորս կողմից մայդ կապուտակ ծովն, դորա եղերագծովն թարմ բուսականութիւն, կանաչազարդ մարգեր և դոցա մէջ խաղի փոքրիկ վազները և բարունակները պատկերանում պատկերանում է մարդս այդ բոլորին մէջ զբօսնելիս՝ նաւ-ներով կղզուն շուրջ և ոտքով պարտէզների խիտ ստուերում։ Փոքրատունդ նշենիների, որթատունկ բարունակների շուրջին տակ կ'տեսնենք շատերն խումբ բոլորած ուրախանում և զուարճանում են ուրախացնելով և կղզու բնիկներին« սեազգեստ մոնթերին, երիտասարդ արեղաներին, որոնք տարին հազիւ մի քանի անգամ բաղդ կունենան դուրս գալ խցիկներից և հիւրասիրուել ուխտաւորներից։ Ահա այս վայրերումն է, ուր ամեն զարդացած այցելուն, ուխտաւորին, իւր գեղուն և վառ երևակայութեան մէջ մտաբերում է անմահն Բաֆֆինը իւր այն շատ վաղուց երգած «Ձայն տուր ով ծովակ» մտայոյզ երգովն։

Աղթամարու Ս. խաչ վանքի, թէ Ախավանում և թէ այլ տեղերում ունեցած անշարժ և շարժական կալուածոց հետ մէկ տեղ, այնչափ աւելի և թանգագին են նորա սրբութիւններն, տաճարի և Ս. սեղանի զարդն ու զարդարանքն, սպասքն, ոսկեայ արծաթեայ անօթները պատուական խաչն ու խաչվառներ, գաւազանները և զգեստները բոլորը անգին և գեղեցիկ մեծ մասը ընտրովի հնութիւններ են։ Ախավանս որպէս յատուկ ագարակ իւր մէջ պա-

ընակում է, բազմաթիւ ոչխար ու դուար, լծկան գոմէշ-
ներ ու եղները գիւղատնտեսական—մշակական ամենայն
պարագայիւնք բազմաթիւ երկրագործ ծառաներով։ Մխի-
թարական այն եղաւ, որ 1896 ի հանրային կոտորա-
ծում և աւարառութեանց ժամանակ, կղզում, Ս. տաճա-
րում եղած այդ թանգագին սպասք և ամեն սրբութիւն-
ները ապահովուած էին և անձեռնմխելի։ Այդ հանրային
դէպքին մէջ, երբ ամբողջ Ռշտունիք, Մոգք, Զատաս, Հիզան,
Սպակերտ, Կարկառ, Հայոց-ձոր, Անձաւացեաց, ամբոխին
թեմական գաւառները կրակին և աւարառութեանց մէջ
ծփում ու տատանվում էին, կղզում մնացած փոքրաթիւ
միաբանութիւնն էլ ցրիւ ընկած այս այն կողմ և փոխա-
նորդ Արսէն վարդապետ Մարգարեանց, ծովի ճանապար-
հով Վան ապաստանեցաւ, և 'ի վերջոյ ի բացակայութեան
Դեր. Սահակ վարդապետի՝ առժամանակեայ փոխ-առաջ-
նորդ նշանակուեցաւ Վանայ վիճակին։ Իսկ թէ 1886—
87ին թ. ինչ կերպ և եղանակով զողցուած են, վանքի սրբու-
թիւններից մի մաս հնութեան վերաբերեալ իրեղէնները
և թանգագին սպասք՝ դա մեզ յայտնի չէ՝ միայն լսել ենք
որ, ոմանք նախօրօք որսալով տգէտ վաղապետներից եր-
կուքն կատարել են այդ սրբապղծութիւնն, ապա թէ զո-
ղեր և թէ զողակիցք դտել են իրանց օրինական պատիժն։

Ամենապատիւ Խաչատուր կաթուղիկոսը որքան փափ-
կանկատ էր իւր անցեալումն և պահպանողական, քաղա-
քական և ազգային խնդիրներում միշտ չեզոք դիրք պա-
հելով, այնքան աւելի խիստ եղաւ իւր կեանքի վերջին
երկու երեք տարուայ ընթացքում ընդ միշտ բողոքելով.
հեռագրելով թէ Բարձրագոյն դուռն թէ պալատ և թէ
ազգ. պատրիարքարան իւր հարստահարեալ հօդի վերա-
բերութեամբ, բայց ապարդիւն...։ Նորին ամենապատու-
ութիւնն վախճանուեց Վան բերդաքաղաքում Ղարասէֆէր-
եանց տան 1895 դեկտ. վերջերում. թողլով միայն իւր

սեպհական արկղում հազիւ՝ հազար հինգ հարիւր օսմ.
լիրայ՝ կտակած իւր թեմի դաստիարակութեան գործին.
բայց երբ իրագործելու է. յայտնի չէ...։ Այժմ և անցե-
լում, թող ներուի ինձ ասել, որ Աղթամարցիք բարոյա-
պէս մի զգալի օգուտ չեն տուել իրանց թեմականներին,
ոչ մի տեղ կանոնաւոր դպրոց կայ։

Ս. խաչ վանքի ուխտաղնացութիւնն և հանդիսաւոր
տօնակատարութիւնը լինում է Խաչ վերացի տօնին, ուր
հաւաքվում է խիտ բազմութիւն ամեն կողմերից։

---

53. Առտէր Կղզին

Հանդէպ Աղթամարու հիւսիս-արևմտեան կողմ, միմեան-
ցից հազիւ մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնվում է
Առտէր կղզին, բոլորովին լեռնաղաշտի հարթ տարածու-
թիւն և մէկ ու կէս անգամ մեծութեամբ Աղթամարից։
Ինչպէս յայտնի է՝ այժմ Առտէր կղզինը անբնակելի է,
նորա բնիկները են այն ազգի ազգի թռչուններ և վայ-
րենի հաւեր, բազերը ու սագերը, որոնք իրենց ձայնա-
ւոր ու անձայն կերպ կերպ ծլվլումներով, գեղգեղանքնե-
րով ու կարկաչիւններով կղզու մեռելային դրութեանն
ինչ որ կենդանութիւն են տալիս։ Ամեն մի քայլափոխում-
ներին պատահում են զոյգ անհաստատ, գետնի երեսով
խոտ ու թփերում շինած բուն ու բնակարաններին, այն
ես տեսնում որ անակնկալս առաջևիցդ, կողքերիցդ սու-
լելով ծղրկտելով, ծվալով, ճախրելով՝ հուշտ վեր թռան։
Դեքա, հաւն ու ճիւն այդ համարձակ ու ազատ վայրե-
րումն ուտում, խմում, ձու ածում, ձագուկներ հանում ու
թռցնում, ապահով զաղաններից և մարդկանց ճնշումնե-

ըից։ Առաջը կղզինը նշանաւոր է առաւելապէս այնու, որ այդ պատմական սրբավայրումն է պատահել Ս. Գրիգորի, Նարեկայ հռետորի, երկնային ու հրաշալի տեսիլն, Յիսուս Միածինն Մարիամ Մօր գրկումն տեսնել և ընդունել և «Այն զոր ետես աչօքն իւրովք և լսեց «Արի՛ մոտ Տէրն» փափագելի ձայնն։ Այստեղ կան երկու կիսաքանդ տաճարներ դեռ հաստատ սեղանի վէմքարերովն, որոց շուրջն ու մօտիկ սփռուած են մամռապատ գերեզմանաքարեր, մեծ մասը իւր հին միաբան վարդապետների. թէ ո՞ր թուականից սկսուել է կղզոյն աւերում և անբնակելութիւնն մեզ յայտնի չէ. միայն լսել ենք շատերից որ դեռ երկու դար յառաջ Տիգրանակերտ (հին Համիդ քաղաք) և Սղէրդ քաղաքները իրանց բոլոր վիճակովն Առաջը կղզու վանքի թեմականներ են եղել։

Գարնան և ամրան եղանակներում հիանալի տեսարան և զուարճութիւն է լինում այդ կղզումն ևս. մի կողմից թարմ բուսականութիւն, ծառ ու ծաղիկների անուշահոտ բուրումն, մի կողմից բազմերամ թռչնոց կուտակումն, միւս կողմից թարմ մարգագետնոց վրայ ոչխարների որոճող հօտն ու մայումն, որոնք առժամանակեայ փոխադրվում են այստեղ առատ ճարակելու. ամեն մի զրօսասէր այցելուին վրայ թողնում են սքանչելի տպաւորութիւն։

Առաջը կղզու յայտնի և առատ բերքն են *) սպիտակ բանջարը և բուտը, որոնք իրանց ժամանակին Աղ-

*) Սիվակու կամ սպիտակ բանջարը իրանում մածուցիկ նիւթ պարունակող մի բոյս է որպէս օղին, (չրեչ) որն կորկոտով եփելիս՝ կոչվում է մարիամայ ճաշ. դա եփում են աւելի ջրօրհնեաց դիշերը, իսկ բուդը ծառատունկի բոյս է՝ մանր հատիկներով, չօրեն դնում, ախորժելի է պատուց օրերին։

թամարցիներից ուղարկվում են Վան՝ իրանց ծանօթներին որպէս ընծայ և շատ յարգելի են։

54. Լուսապատուղ ս. Սահակայ վանք

Աւելի հեշտ է ուխտաւորին Առաջը կղզուց նաւը ուղղել դէպ արևմուտք, ծովին եզերքով, Կապուտ-կողի և Ընծաքասարի լեռների տեսարանները դիտելով՝ դուրս գալ ցամաք, ոլորապտոյտ ձորերով, լեռանց միջով հասնել Լուսապատուղ ս. Սահակայ վանք, որն այդ անտառապատ լեռների և Կարկառու-ձորի միակ սուրբն է, զարդն ու զարդարանքն է։ Ս. Սահակ պարթև հայրապետը ինչու զարդարանքն է։ Ս. Սահակ պարթև հայրապետը ինչպէս հինգերորդ դարու սկզբներից լուսատու ճրագ և բարոյական լոյս տուող է եղել հայաստանցիներին, այս երբոյական լոյս տուող է եղել հայաստանցիներին, այս երբոյական լոյս չէ խնայել իւր զօրութիւնն ու լոյսն տալ աչքբուման էլ չէ խնայել իւր զօրութիւնն ու լոյսն տալ աչքբացատոներին, որոնք հաւատով ու յուսով կանչելով «Ո՛վ լուսապատուղ ս. Սահակ»՝ դիմում են նորա դուռն և ըստ հաւատոյ՝ գտնում են լոյս և բժշկութիւն։ Անշուք և անզարդ են նորա բոլոր շինութիւններն, անշուք և խարխուլ իւր եկեղեցին զուրկ ամեն տեսակ անհրաժեշտութիւնից, սակայն զուարճալի են վայրերն։ Մօտիկ ընդարձակ անտառից մի մասն որն վանքի սեպհականութիւնն է՝ պակաս արդիւնաւոր չէ, նմանապէս իւր ընտիր սեհոդերն։

Վանքին թեմական հայ գիւղերը արդէն էլ ճնշուած էին հարևան քնդերի պարբերական հարստահարութեանց տակ, ներկայումս աւելի վատ դրութեան, պատճառները յայտնի են, սկսեալ 96-ի տխուր անցքերից նորա տառապում են ու աւելի է վատթարանում իրանց վիճակ. մեծ մասը ցրուած են իրանց բնավայրից։

55. Կապուտ կողայ Ս. Յակոբայ վանք

Համանուն լեռան անտառապատ գառիվայրի վրայ՝ բարձրահայեաց դիրքով ու տեսարանով կառուցվել է վանքը յանուն Մծբնայ մեծ Հայրապետին, աղքատ և անշուք վիճակով ինչպէս և իւր թեմական հայ գիւղացիքն. բայց ունի ընտիր վարելահողեր և անտառամասն որից օգտվում է վանք և շրջակայի գիւղացիք, մեծ մասը քրդերը. ի հարկէ այս վերջինս աւելի բռնութեամբ քան թէ իրաւունքով։ Այստեղ է այն պատմական բլուրն, ըստ աւանդութեան, որտեղից Սքանչելագործ հայրապետը անիծել է Մանաճիհը Ռշտունուն և իւր երկիրն անբերրիութեան դատապարտելով, Ռշտունեաց գաւառն. ի վրէժ ասորի եօթն սարկաւագաց որոց գերելով ծովասոյզ էր արել հայ նախարարն։ Աւաղ, միշտ անէծքն ու նզովն են եղել մեր հոգևորականների զէնքն՝ փոխանակ օրհնութեան, անիծելով և նզովելով են լուծել իրանց վրէժն ու սրտմտութեան ձայն...։

Ընծաքասարի և Կապուտ-կող լեռանց շղթաները ամբողջ պատում են Վանայ կամ Ռշտունեաց ծովի հարաւարևմտեան եզերքն. այդ լեռնաշղթաների՝ միջում ընկած այս և այն ձորում, կամ տափաստաններում կամ առապարներում կան բազմաթիւ աւերակներ անանուն և անյայտ սրբատեղեաց, մատուռների և տաճարների, որոց ոմանք կիսաքանդ, ոմանց գմբէթները փուլ եկած և ոմանք ծառայում են քրդերին որպէս գոմ. այդ ամենքի մէջ շէն ու բնակելին են Ս. Սահակայ և Ս. Յակոբայ վանքերը, որոց տօնակատարութիւն լինում է աւելի վարդավառին՝ ծովի ճանապարհով և անտի Նարեկայ վանք։

Այդ մասը կոչվում է նաև Փէտ-աշխարհ, փայտի աշխարհ, որտեղերից առատ փայտ է արտահանվում նա-

հանգի ամեն գաւառներ թէ շինութեան և թէ վառելու համար. նաւերը միշտ պակաս չեն այդ տեղերից։

56. ՆԱՐԵԿԱՅ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

Ելջվենք Ընծաքասար, Կապուտ-կող լեռանց գառիվայրի տափաստաններով և առապարներով, ձոր ու հովիտներով, անցնենք դէպ Հարաւ-Ռշտունեաց վերին մասն, դէպ Նարեկայ, Փշավանից հովիտն ուղղենք մեր ուղին և ահա երկնակատար կաթուղիկէն ու զանգակատան վեհակառոյց գմբէթն հեռուից հեռու մեզ առաջնորդում են դէպ յինքեանս, դէպ հռչակաւոր մենաստան Նարեկայ-Նարեկացու Վանուց, որն սխրալի տեսարանով- խիտ ծառատնկոց մէջ Համանուն գիւղին կենտրոնում բարձրանում է այդ Հոյակապ վանքը Հոյակապ գաւթովն, տաճարովն և զանգակատնով։

Այդ Վիթխարի զանգակատունը նմանների մէջ նշանաւոր է ճաշակաւոր յարմարութեամբ շինուած. 60 ական թուականներին, ճարտարապետութեամբ բաղիշեցի հանգուցեալ Տէր Մովսէս քահանայի Սահրադեանց։

Նարեկայ վանքի արտաքինը բոլորովին անջատ գիւղից՝ լայնանիստ բարձրաբերձ պարիսպներով և աշտարակներով շրջապատուած է։ Ներքնապարիսպի հարաւային կողմում շինուած են, բաւականին յարմարութեամբ, առաջնորդարանը, ուսումնարան և ուխտաւորաց սենեակները վերնայարկ և օդաւէտ. աշխատութեամբ նախկին Վանահայր հանգուցեալ Յովսէփ Ծ. վարդապետի, որն այնքան տանջուեցաւ ու հալածուեցաւ ապաշնորհ և հացամոռ Նարեկցիներից, այդ վանքային պնակալէզներից։

Սրբազան տաճարում բացի մեծ հռետորի՝ Գրիգորի Նարեկացւոյ խնկուած ու օրհնուած գերեզմանից, պահվում են նաև նշխարքն Անանիայի-մօրեղբօրն մեծիմաստ

վարդապետին. և եղբօրն Գրիգորի, Յովհաննու՝ Նարեկայ մեծափառ ուխտի Վանականին. խորանին յետ կոյս՝ նըշխարք Սանդխտոյ Ս. Կուսին, որոց բոլորին էլ ջերմեռանդ ուխտաւորն խնկածխում, Ծնրադնում և ջերմագինս համբոյրներ է դրօշմում այդ սառն տապանաքարերին։ Ահա այս Սրբավայրումն է ապրել, կենցաղավարել, գրել ու ճառել «Հրեշտակն խմարմնի» Սքանչելախօսն Նարեկացին, այն որ՝ իւր Աստուածախօսութեամբն հայ աշխարհն, հայ ազգն լցրեց երկնային, հոգևոր ու մտաւոր սնունդով։ Տաներկու երբ. դարու հայ ճշմարիտ կրօնաւոր. ճշմարիտ վարդապետ, հոգևոր վարդապետութեամբ քարոզիչ, խորախորհուրդ հռետոր, ներշնչեալ ամենայնիւ Աստուածապարգև ձրիւք և շնորհօք հովուելու Քրիստոսի հօտն։

Նարեկայ վանքը առաջին հարուստ վանքն է Ռշտունեաց գաւառում։ Աղթամարից յետոյ նա ունի միայն այնքան հարստութիւն ու կալուած որքան չունին մի տասնեակ վանքերը նոյն շրջանակում։ Նորա բազմագումար արդիւնքը փճացվել է այս և այն՝ այնպիսի անհաւատարիմ վանահայրերի, տնտեսների և մեծ մասը այդ ձրիակեր գիւղացիների ձեռքում, որոնք աւելի վատն են եղել քան մի աւազակ քուրդ։ Այնքան բերրի և արագաւանդ են իւր հողերն ընդհանրապէս, արտերն ու հանդերն, որոնք բացառութիւն են կազմում այլ գաւառի արդիւնաբերութեանց մէջ, մէկինը գրէթէ քսան և մէկ արտադրելով թէ հացաբոյսն թէ այլ և այլ հնդեղէնները։ Նոյն է և արտաքին եկամուտն. թէ Թիֆլիզում և թէ Վանայ հրապարակներում վանքն ունի լաւ արդիւնաբեր կրպակներ, միայն ցաւալին այն է որ տակաւին իւր միջում գոյութիւն չէ ունեցել մի ինչ որ կրթութեան վայր, դէթ Նարեկցի մանկանց համար՝ սովոր էին և ապագայում օգտակար լինէին թէ իրանց թէ այդ մեծ հաստատութեան։ Նոյն նախորդ վանահայր Յովսէփ վարդապետի օրով՝ էլի

լաւ էր, ունէին դպրոցի պէս մի բան-հազիւ *փոխ* ասածներ պատրաստելու, վերջին տարիներում այդ վարժատան *նամ՝ ու նմուշ* իսպառ վերջացաւ...։

Նարեկայ այդ հռչակաւոր մենաստանը երկար ժամանակաւ գտնվում էր Վանայ առաջնորդարանի իրաւասութեան տակ, բայց Աղթամարու Խաչատուր կաթուղիկոսը, յետ երկար ու բարակ ձգձգումից, մերժելով իսկ պատրիարքարանի հրամանները, վերջապէս միացրեց Աղթամարայ աթոռին հետ, բայց էլի բարոյական ոչ բարւոք տնտեսագիտութիւն։

Նարեկայ վանուց տօնախմբութիւնը կատարվում է տարին մի քանի անգամ, առաւելապէս վարդավառին և աշնան ժամանակ, ուր հաւաքվում է ուխտաւորաց ստուար բազմութիւն Հիզանից, Շատախից, Մոկսից և Վանից, ոմանք ծովի և ոմանք ցամաքային ճանապարհով։

57 Աղօթավայր Գրիգորի Նարեկացւոյ

Նարեկայ վանից դէպ հիւսիս—արևմուտք ուղղենք մեր ուղին, բաւական էր, որքան համբուրեցինք և ծնրադրեցինք որմն ու գերեզմանն մշտանու էր աղօթողին, գնանք այժմ նորա աղօթավայր—սրբատեղին, որտեղից այդ մաքրակենցաղ ճգնաւորը իւր բոլորանուէր աղօթքն ու պաղատանք, մաղթանքն ու օրհնութիւնն վեր է առաքել առ բարձրեալ Հայր ի հաշտութիւն։ Անցնենք ծառոց պրակներից, երանաւէտ վայրերից, կարկաչահոս աղբիւրների եզերքն իվեր բարձրանամք, անուշաբոյր ծաղիկների բուրմունքից զմայլած, և ահա տեսնում ենք Փայխներ—գոմեր գիւղի վերևն՝ ապառաժ լեռան լանջովն ընկած Սրբատեղոյն՝ հարիւրաւոր ուխտաւորք մագլցելով, սահելով երբեմն ի վայր գլորվելով և կրկնելով վերելքն, ջերմեռանդութեամբ ուխտի են գնում։ Դա ուխտեալ մի-

այնակեցւոյն, ի մարմնի Հրեշտակին՝ քարայը—աղօթատեղին է, վերնայարկ քարասենեակներ, թուով վեց, ուր կան նոյնպէս քարասեղաններ, և դոցա վրայ մէկ մէկ խաչ և մոմակալները, բոլոր զարդն են քարայրին։ Թէև խիստ դժուարին է վերելքն, սակայն ջերմեռանդ ցանկացողին համար դիւրանում է թէ տասն անգամ էլ նա վայր գլորվի, սահի ու գայթէ և ահա վերջին ճիգն թափում է հասնելու փափագին։

Դեռ չ'մտած քարայը—աղօթատունն՝ անուշահոտ բուրումն խնկոց առնում է մարդս, և ծուխն պատուհաններից սփռվում է շուրջն։ Այդ է բոլորը Նարեկայ սուրբ վարդապետի և իսկապէս սրբակրօն կրօնաւորի բազմամեայ կացարանն ու ճգնարանն, որտեղից հոգերուղխ երգարանն, տատրակն Ռշտունեաց թափել է իւր սրտի դեղուն ու թաթախուն հոգեկան բուռն զգացմունքները, ուր երգել ու մրմնջել է իւր «ձայն հառաջանաց», իւր «ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյն», իւր «բարեբանեալն» մշտամռունջ մաղթանքն ու աղերսանքն հայցել ի քաւութիւն մեզ ապագայ ապաշխարողաց։

Սրբոյն աղօթատեղոյն հանդէպ դէպ արևելք տարածվում է Ծովի թունդ երկնագոյն մակերևոյթն. դորա վրայ կղզիները Աղթամարն և նորա —մկրտեալն Առ տէր, դէմ ու դէմ։ Առ տէրն ու Աղօթամարն անարգել և ուղիղ մի ակնթարթով տեսնվում են քարայրի պատուհաններից։ Այդ կղզուն վրայ է լուսափայլել երկնային լոյսն, միջումն ամփոփուած Միածինն մօր գրկում, որն տեսնելով մարմնաւոր հրշետակին, աղօթավայրից, զմայլած ու արբած տենչալոյն սիրով, հոգեպարար խնդութեամբ, դիմում և Ծովագնաց դէպ կղզին, առնում և ընդունում է անմատչելին ի հրեղինաց և լսում «Գրիգորէ, արի՝ ա՛ռ զանձկալիդ Առ տէր «և յայնժամ երգում» և այն զոր տեսի իսկ աչօք ի-մովք». նոյն անձկարեօք սրտիւ հասնելով փափագին, դառնում է աղօթավայրն, անցնում կտրում է Ծովն՝ կրկին երգելով և այն մեղրածորան մեղեդինը «Աչքն ի Ծով... ի Ծով... Ծիծաղախիտ ծաւալանայը յառաւօտուն, երկու փայլակնաձև արեգական նման»։

Նարեկացւոյ ուրախութեանը չափ ու սահմանը չ'կար անշուշտ՝ այդ Աստուածահրաշ տեսլեան տպաւորութեան տակ։

Ուխտաւորք միքանի անգամ ևս նոյն ջերմեռանդութեամբ խնկով ու մոմով կրկնում են իրանց ուխտն, աղօթեամբ խնկով ու մոմով կրկնում են իրանց ուխտն, աղօթում և ծնրադնում են, կրկնակի համբոյրները դրոշմելով մաշուած ծնրատեղոյն և մատանց կոճղատեղոյն, դարձեալ անյապ և կարօտ վերադառնում վանքն և անտի Բիւրաքանչիւրն իւր տեղ, միշտ կրկնելով՝ ով դու ս. Նարեկացի և այլն... խնդրուածք։

58. Պախվանից ս. Յովհաննու վանք.

Նարեկայ վանից դէպ Մոգաց աշխարհ տանող ճանապարհի աջակողմն՝ բարձրաւանդակ, արձակ տափաստանի վրայ, համանուն գիւղին վերև գտնվում է Պախվանից ս. Յովհաննու վանք, չորս կողմն հաստաբսամատ ուռենիներով շրջապատված բարձրահայեաց տեսարանով։ Դա Ռշտունեաց գաւառի հարաւ-արևմտեան ծայրումն ընկած շէն ու հաստատ վանքն էր, տաւար ու ոչխարով գիւղատնտեսական ամեն պարագայիւք և փոքրաթիւ միաբանութեամբ։ Սակայն երբ սկսվեց 96-ի տխուր անցքերն, գիւղացւոց հետ մէկ տեղ վանքն ու վանականք ևս նոցա հետ կողոպտուեցան ու կոտորվեցան և ամեն ինչ մնաց իրանց հաւատարիան քրդերին, որոց գլխաւորն էր ու պարագլուխն՝ ոմն Կուլիխան-բէկ, որին հայերը մինչ տիտղոսով էին վերապատվում և գրեթէ նորա ամեն մի կամայականութիւնն շոյում...։

Պաղվանց գիւղից միքանի վայրկեան հեռաւորութեան վրայ է համանուն բերդն, ուր 1830—45 թուականներում ամրացել են եղել Օսմ. կառավարութեան դէմ ապստամբող քուրդ ցեղապետները յայտնի Խան-Մահմուտ, Խան-Ապտուլ իւրեանց եօթն եղբայրներով։ Այդ բերդի աւերակաց ներքև է ներկայումս յիշեալ Կուլիխան-բէկի բնակարանը։

59. Գանձակայ ս. Կարապետի վանք.

Գաւաշ գաւառի հիւսիս-արևմտեան վերջի ծայրումն, դէպ Բաղէշ տանող ճանապարհի աջ կողմին, ընդարձակ կառուցվել է Գանձակի վանքը յանուն ս. Կարապետի։ Դորան կարելի է անուանել մարդասիրական պանդոկ, ուր ապաստանում են սարսափելի բուք ու բորանից ազատուած ճամբորդք, դէպ Բաղէշ գնացող կարաւանները օրերով հիւրասիրվելով վանքից։

Բարձրացած՝ սպիտակաշէն գմբէթն որպէս ուղեցոյց, հեռուից մի ինչ որ նշանակէտ է նեղ ընկած ճանապարհորդին, որի ուղղութեամբ էլ ազատվում է վտանգից։ Գանձակի ս. Կարապետի վանքն ևս մինչ 96-ի հանրային անցքերին շէն էր իւր փոքրիկ շրջանի մէջ, ամուր ու հոյակապ շէնքերով, տաւար ու ոչխարով գիւղատնտեսական ամեն պարագայիւքն, սակայն նա ևս նոյն չար կրելութեանց ենթարկուեցաւ. կողոպտեցին վանքի թէ ներքին սրբութիւններն և թէ արտաքին ամեն ինչ, գրեթէ ամայի վիճակի թողուցին։ Նորա մօտիկ և թէմական հայ գիւղերը Նոր-գիւղն, Հաբբերտ, Բէլլու, (ճիշտ Բէլի անունով) Մոխրաբերդ գիւղերն ևս տուժեցին ու կրեցին ինչ որ տեսան իրանց գաւառացի հայերն։

Մոխրաբերդ գիւղի շրջակայքումն տակաւին գտնվում են ու երևում պարսից ատրուշանների աւերակաց

կոյտերը և ճիշտ մոխրից բարձրացած բերդն՝ որտեղերից Ռշտունի Սահակ եպիսկոպոսը ծովն է թափել կրակն ու մոխիր։

Վերին Ռշտունիք գաւառում ապրում են դարոյս սկզբներից Օսմ. կառավարութեան դէմ ապստամբող Խան-Մահմուդի, Խան-Ապտալի, Դէրվիշ-բէկի, եօթն եղբարց քուրդ ցեղապետների որդիք, թոռները և ծոռները, որոց մէջ նշանաւորն է մեր արդէն յիշած Կուլիխան-բէկ, սորա մասին խօսում են որ՝ մեծ դեր է ունեցել Աղթամարի *բիլբիլ* մականուանեալ Պետրոս կաթողիկոսի սպանութեան գործում։ Դեռ մօտիկ անցեալումն՝ սորա որդինը բոլոր հարսն... և անպատիժ մնաց. կասկած չկար որ 96-ի անցքերին աւելի դեր պիտի խաղային։

ՄՈԳԱՑ ԳԱՒԱՌՈՒՄ ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

60. Փուրկու-փորորկի ս. Գէորգայ վանք

Անցնելով վերին Ռշտունեաց Գաւաշ-գաւառի հարաւարևմտեան ճանապարհով, բարձրանալով Եղերով լեռան գագաթն ի վեր. որն Արտօռի գլխաւոր շղթան է, իջնում ենք Մոգաց աշխարհ, դրախտի աշխարհ, որն արդարև իւր թարմ և կանաչազարդ տարածութեամբն դեռ հեռուից գեղեցիկ տեսարան է ներկայացնում։ Այդ լեռան կենդրոնի երկու կողմից կան մէկ մէկ փոքրիկ իջևանների *անդուռ անելթիկ* կայարանները ցրտատար ճամբորդների համար. իսկ հարաւային զառիվայրի ճանապարհի կէս տեղումն՝ հոյակապ վանքն յանուն ս. Գէորգայ-փուրկու։ Եթէ չլինէին եկեղեցին, տաճարն ու փոքրիկ գմբէթը, դա ևս իսկապէս մարդասիրական մի հիւրանոց էր՝

իւր միջումն ունեցած կարգ ու սարքովն, ընդարձակ խոհանոցովն ու կերակրի մեծ մեծ կաթսաներովն, որոնք անցորդների բաժինն են պատրաստում։

Եւ արդարև. Եղերով լեռան բքաբեր սառնամանիքը այն յայտնի վնասաբերութեամբն, դէպ Մոգս և Վան երթևեկող ճամբորդներին շատ անգամ օրերով ու շաբաթներով կաշկանդում են անդ։ Վանքը անխտրաբար մեծ իջևան է հայի, թուրքի, քուրտի և ամեն ազգի համար. երեկոյ, առաւօտ և ճաշին անպակաս պատրաստ է նորա լիառատ սեղանը ու բաժինն. նոյնպէս և անասնոց համար առատ կեր։ Տարակուսած ճամբորդը յուսակտուր սպասում է, թէ երբ պիտի մեղմի օդը, պարզուի երկինք, դադարեն սառնամանիքը և Եղերովն իւր ձիւնաթափաթափ գլուխն ցոյց տայ պարզ եթերում։

Փութկու վանքը վարելահողեր չունի. չունի և գիւղատնտեսական-մշակական պարապմունք. նորա գլխաւոր եկամուտն կայանում է միայն այն շրջուն կապալառուների աշխատութիւնից գոյացած արդիւնքի վրայ, որոնք նախօրօք սակարկում են Աղթամարու վարչութեան հետ մի որոշ գումար տալով։

Այդ կապալառուները վերցնելով վանքից մի ինչ մասունք կամ խաչ, շրջագայում են երկրէ երկիր և հաւաքում են նպաստներ, ողորմութիւն ամեն տեսակ արմտիքից, գառ ու ոչխարից, և այլն. պատահում է որ քրդերն էլ շատ անգամ մասնակցում են՝ տալով իրանց աննշան *զաքաթն* (նուէր), որի փոխարէն նորա կրկնապատիկն անշուշտ վայելում են Փութկու հացն ու ջուր. ահա այդ կերպի նուիրատուութեամբ հոգացվում է վանքի ընդհանուր ծախսն։

Շատ անգամ պատահել է որ՝ Եղերովի վրայ ճամբորդները, փոթորկից, բուք ու սառնամանիքից շրջկրված և շնչասպառ մնացել են և շատերը չ'կարողանալով

այդ սարսափելի բուք ու բոբաններին դիմանալ՝ տեղն ու տեղ կենդանաւ են եղել և շատ անգամ էլ ազատված են եղել Փութկիից հասած անմիջական օգնութեան շնորհիւ։ Փութկու Ս. Գէորգայ վանքից դէպ Մոգս գնալու միակ բանուկ ճանապարհ դա է և, այդ էլ այսպէս շատ անգամ շաբաթներով ու ամսով փակված է լինում։ Գուցէ ընթերցողներին ոմանց պատահած լինի ինչ որ գրուած է Փութկու աքաղաղի մասին կամ նորա չար ու բարի գուշակութեանց. բայց դա սնոտիապաշտութիւն է. հաստատն այն է որ ճամբորդները սպասում են այդ վանքում մինչ երկնքի և երկրի հանդարտութեան. պարզ օրուայ և տաք արեգակի, որոց վստահելով հազիւ կարելի կ'լինի շարունակել ուղին, եթէ ոչ անկարելի է։

Վերջապէս Փոթորկի ս. Գէորգը Վասպուրականի ճամբորդների և գլխաւորապէս նաւավարների մեծ Պալլան է, նեղ ընկածները 'ի ծովու 'ի ցամաքի լինին, ապաւինում են, դիմում են նորա օգնութեան։

---

61. ՄՈԳԱՑ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Եղերով լեռան հարաւային զառիվայրից իջնելիս, տեսնում ենք աւելի հետաքրքիր տեսարանները, լեռնային, դաշտային ձորային և դոցա հետ անտառային՝ իրանց միջում արագահոս, արագահոս բազմաթիւ վտակներով ու առուակներով։ Մոգաց աշխարհ ընդհանրապէս լեռնադաշտ է, միշտ թարմ ու դրախտանման ծաղկաւէտ վայրերով, մրգաւէտ ու օրթատունկ այգիներով ընտիր սահողերով, հանդ ու հանդաստանով։ Մենք անցնելու ենք մի կարգ ոլորապտոյտ ձորերով, առատաբուղխ աղբիւրների, առուառուակների եզերքներով և դեռ այսաեղ առանց մի բան խօսելու Մոգաց քաղաքի վերաբերութեամբ, իւր միջից,

այդ զզզուն գետակի գնացքին հետ՝ դէպ հարաւ, յայնկոյս Արտօսի շղթայից միոյն վրայ դարձնենք մեր ուշադրութիւնն։

Ահա այդ շղթայից-լեռան լանջերից միոյն խիտ ծառատնկոց մէջ գտնվում է Ամենափրկիչ վանքն. Մոգաց աշխարհի հայոց պահապանն, յանուն Յիսուսին երկրպագող երեք Մոգերին. որն բովանդակ երկրի մէջ մէկ հատիկ սրբատեղին է. և ունի իւր յատուկ ազարակն բերրի և արգաւանդ դաշտերով, անտառ և այգի բոլորը իւր շուրջն ու մօտիկ, կառավարվում է հին տոհմական մի քահանայի և իւր անդամոց վերահակողութեամբ թէև խիստ անձուկ վիճակով։

Նայելով Ամենափրկիչ վանուց դրութեանն և շուրջն գտնուած այն բազմաթիւ աւերակ շէնքերին, հաստատապէս կարելի է ասել որ՝ դա նշանաւոր մի վանք է եղել Մոգաց աշխարհում և շատ հին հաստատութիւն։

Իսկ ներկայումս գրէթէ հասարակ և աղքատ վանքերի կարգումն է շնորհիւ զինք շրջապատող քուրդ տարրին։ Կարծես թէ մի մեծ դժբաղդութիւն է բոլոր հայ գաւառեցիների համար, որոց մէջ անտարակոյս ապրում են թէ ուժով և թէ խորագիտութեամբ քուրդ ցեղապետների սերունդները, որոնք ի հարկէ աւելի իշխող են քան տիրող կառավարութիւն և ճնշել են հայն և այլ քրիստոնեաների. այդպէս է և Մոգաց աշխարհում։

Մոգք քաղաք, որն ներկայիս գաւառին կենտրոնն է, անշքացած է, բոլորովին իւր քաղաքային նմանութիւններից, հնոյն հակապատկերն է. պատմական այդ քաղաքը բնաւ յարմարութիւն չունի այժմոյս՝ աւան անգամ կոչուելու։ Մի քաղցրահամ և խիստ սառնաջուր գետակը անցնելով քաղաքի մէջ տեղից, երկու է բաժանում։ Բազմա-

թիւ քարուկիրեայ աւերակ, կամարակապ կրպակներ, պանդոկները իւր հրապարակի անցեալ ճոխ դրութեան վկաներ են, թողունք գաղթող հայերից մնացած բազմաթիւ տների աւերակ շէնքերն։

Մոգաց քաղաքի այգեստանները բոլորն գտնվում են քրդերի ձեռքում. իսկ հայերը կուճ են եկել իրարու վրայ կենտրոնի այս և այն կողմերում անշուք բնակարանների։ Թաղերի մէջ անուանի է Աբրահամենց թաղ, որ-տեղից, դարոյս սկզբից շատ նշանաւոր Մոգացիք դաղթել են *) Ճատախ աւան։

Թէև կառավարութեան կողմից նստում է գաւառապետը իւր ստորադաս պաշտօնեաներով, բայց դարձեալ ազդեցիք տարը քուրդ բէկերն են։

Անուանի է Մոգաց քաղաքի՝ հինգշաբթի օրեայ բազարն, որտեղ կուտակվում ու շեղջվում են ամեն տեսակ վաճառելի ապրանք, մանաւանդ ամենայն առատութեամբ չոր թէ թաց պատուական մրգեղէնք։

1896-ի հանրային անցքերին, Մոգաց գաւառը համատարար միւս հարևան գաւառների, աւելին չ'տեսաւ այն դառն և անողոք բարբարոսութիւնները շնորհիւ Ապտալ բէկի որդի Մէյթուլլահ Բէկի։ Այս երիտասարդ քուրդ բէկը բնակուելով Հաղին բազմահայ գիւղն, իւր ընդարձակ բնակարանումն ընդունում է բազմաթիւ հայ ընտանիք և պաշտպանում վերահաս վտանգներից. նմանապէս և շատ գիւղերը նորա ձեռք առած միջոցներով քիչ են վնասվում։

Մէյթուլլահ Բէկը արտաքին տարազով, ձևերովն ու

---

*) Այդ գաղթականութեան չարժառիթ պատճառները և այդ հայ գերատասանների տոհմական անունները ընդարձակ տեղագրութեամբ՝ մենք գրել ենք մեր «Մուսացուած գաւառներ-Մոգք և Նաթախ» անունով մի այլ աշխատասիրութեան մէջ։

քաղաքրթութեամբ էլ տարբերվում է իւր ցեղակիցներից, երևակայեցէք մի բարեկիրթ անձնաւորութիւն, խօսում է բաւականին հայերէն և գրում է հայ լեզուով, հիւրասէր և, շատ անգամ էլ Աղթամարու կաթուղիկոսութեան ներկայացուցիչն է եղել և պաշտպանել հայերի դատն Մոգաց իշխանութեան առաջ։ Նորա տան ամբողջ ելքն ու մուտքն յանձնուած է Հաղենայ Մէլիքի որդուց տնտեսագիտութեան։

Մէյթուլլահ Բէկը կոտորածից վերջ, 'ի փոխարէն իւր արած բարեւաւութեանց, շնորհակալութեան գիր ստացաւ Վանայ առաջնորդարանից և միշտ էլ յարգելի եղել Վանայ բոլոր հայերի մէջ։

62 Ապարանից կամ Մամռտանից Ս. Խաչ

Մոգաց աշխարհի հարաւային կողմ՝ սահմանակից Բաղիշու նահանգին, իւր պատմական հնութեամբ յայտնի է Ապարանից Ս. Խաչ, որոյ գովասանական ներբողն արել է Ս. Գրիգոր Նարեկացին, գտնվում է Մամռտանց գաւառակի Ոզիմ հայաբնակ գիւղից 10—15 վերստ հեռաւորութեան վրայ մի բոլորաձև դաշտավայրի մէջ, մէն ու մենակ, անտէր ու սգաւոր այրիի պէս։

Աւագ. ամեն ոք հայ մարդ, անցնելով այդ դաշտավայրից, երբ պատահում է այդ հոյակապ Ս. հաստատութեանն, զննում է շուրջն ու շրջակայքն տեսնելու, չէ կարող չ'զգալ մի ինչ խուլ ու մունջ, լռիկ մատանջութիւն. չ'փղձկալ և խորոց սրտէ չ'ըյառաջել։ Տեսնելով այդպէս՝ դեռ կանգուն ու հաստատ մնացած տաճարն օտար տարբի սրբապղծութեանց ենթակայ, ուր անպատկառ քրդերը, ինչպէս շատ տեղ, նոյն և այստեղ անասնոց ընակավայր են դարձրել. անշուշտ պիտի զգայ և մի հոգեկան զայրոյթ....

Չորս կողմ քուրդ գիւղերով շրջապատուած է, ընավայրի ընիկ հայերը վաղուց արդէն գաղթել են, ցրիւ ընկած ամեն գաւառներում. վանքապատական ընդարձակ հողերն, հովիտն ու այգիք, ոմանք խոպանացած անմշակութեան երեսից՝ քրտերի ձեռքում, իսկ անուանին Ոզիմ գիւղաւան՝ թէև մինչ 1980—96 ի հանրային կոտորածին և այլ և այլ պատահական յարձակմունքներին դիմադրել էր ամեն կերպ չարքաշութիւնների, բայց նա էլ այլ ևս չ'կարողանալով անհաւասար ուժի դէմ մաքառել՝ քայքայվեց, հալածվեց, Հիզանի, Բօհտանի Փաքառել՝ քայքայվեց, հալածվեց, Հիզանի, Բօհտանի Նիտիկ քրդերը նոցա էլ ենթարկեցին խիստ ճնշումների և Ոզիմը ունայնացաւ իւր կարիճ հայերից։

Ապարանից Ս. խաչի բոլորդիքն ևս զուրկ չեն հնութիւններից և յիշատակարաններից, ամեն մի քայլափոխումդ պատահում ես աւերակ մատուռների, տաճարների, մանաւանդ անթիւ և անյիշատակ խաչ-արձանների-գերեզմանաքարերի, որոց երեսն պատել է դարաւոր մամուռն կորսնցնելով եղած տեղեկութիւնին։ Քրտերը շատ անդամ օգտվում են այդտեղեր պեղումներ գործելուց, դուրս բերելով զանազան նիւթեր, թէ եկեղեցական և թէ անական զգեստներ և անօթները։

Հին հիզան գաւառում եղած Սրբավայրեր

63. Հիզանու Ս. Խաչ վանք

Մոգաց հիւսիս-արևմտեան կողմից աւելի հեշտ կարելի է մտնել հին Հիզան պատմական գաւառն. բայց թէ ինչ

գեղեցիկ և զուարճալի վայրերից, պաղորակ ու սառնասոյր աղբիւրների եզերքից. ծառախիտ անտառ ու պրակների միջից անցնելով, տեսնելու ենք վայրի ընտիր վազները, նռենիք և այլ պտղատու և անպտղատու ծառատունկերը միայն ճարտարաբան գրողի գործ է նկարագրել։ Անցնում ենք ձորեր ու կիրճերը և ահա Հիզանի Ս. խաչ վանքն իւր խոնարհ գմբէթովն մեզ նշմարելի է դառնում հեռուից հեռուն բլրաղաշտի վրայ։

Դա Հիզան գաւառի բազմահայ գիւղերի մէջ միակ շէն վանքն էր, լի դուար ու ոչխարով բերքի և արգաւանդ հողերով, գիւղատնտեսական ամեն պարագայիւք և փոքրիկ միաբանութեամբ։ Վանքը բազմամեայ վանահայր տէր Սահակ վարդապետի համբերատար և տոկուն աշխատութեան շնորհիւ՝ բարւոք տնտեսագիտութիւն մի ունէր. 'ի հարկէ իւր շրջանակի մէջ, և որն միակ բարոյական մխիթարանք էր այդ մասում ընկած, անտէր և անպաշտպան հայերին։ Հիզան գաւառը դժբախտաբար ասեմ, ներկայումս գտնվում է Բաղէշի-Բիթլիզի-կուսակալութեան տակ. դեռ չսկսած 1895—96-ի հանրային խառնաշփոթութիւնք, մօտականցի, խօրօզցի անուանեալ *դայֆայ* քրտերը խմբակներով վխտում էին Հիզանի հայ գիւղերում և վանքի շուրջն։ Նոքա միացած Հիզանի քրտերի հետ, շատ անգամ համախմբվում էին Ձէյխ Ջէլալէդինի օջաղի շուրջն, միայն այն պատրուակաւ՝ որպէս թէ Ձէյխի որդուն *զիարէթ* են գնում (այցելութիւն), և դա լինում է փորձնական գործ իրանց կանխամտածութեանն...։ Զինուած քրտերի այդ վնասակար դրամադրութիւնն լաւ քննելով և հասկանալով վանահայր Սահակ վարդապետը յայտնեց Բաղիշի առաջնորդին, և, ազդ. պատրիարքարանի, բայց գործնական հետևանքը ոչինչ էին... Ձէյխի որդինը պատասխանեց, որ նոքա իմ վաղեմի *մուրիտներ*

(հետևորդներ) են և պարտաւոր են ինձ այցելելու ամեն անգամ և այլն...։

Ներկայումս, մեր առած վերջի տեղեկութեանց նայելով Հիզանու հայերը աւելի անմխիթար և ճնշեալ վիճակում են և կարօտ ամեն անհրաժեշտ պէտքերի և Ս. խաչի վանք գրէթէ անվանահայր և լքեալ վիճակի։

64. Հիզանու հինգ խորան վանք

Հիզան գաւառի հարաւ-արևելեան կողմ՝ բարձր լեռնաղաշտի սարահարթի վրայ կառուցվել է «Հինգ» խորան վանք, յանուն հինգ նաւակատեաց. և արդարև կենտրոնի խորանից 'իզատ, եկեղեցւոյ պատակից, աջ ու ձախ կողմից կան նաև չորս փոքրիկ խորանները սրբատաշ սպիտակ քարերից կերտուած։ Ըստ տեղական հայերի մէջ եղած աւանդութեանն, այդ խորաններում թաղուած են եղել ոմանք հայ անյայտ նահատակներից, որոց յիշատակին և նոյն նաւակատեաց օրերում լինում է Ս. պատարագ, կտրվում են մատաղացու բազմաթիւ գառներ, գաւառի ամեն կողմից կիտվում են այդտեղ բազմաթիւ ուխտաւորք, և դոցա հետ հարևան քրտերը օգտվելու հայերի արած զոհաբերութիւններից և շատ անգամ էլ յափշտակելու ձեռքն ընկածը...։

65. Հիզանու Հէգուայ կամ Հայկայ վանք

Հինգ վերստից ոչ հեռու Հիզանու Հինգ խորան վանքից դէպ արևմուտք՝ գտնվում է Հէգուայ կամ Հայկայ վանք, բայց անշուք և խարխուլ շէնքերով։ Մօտիկ հայաբնակ գիւղը շատ վաղուց արդէն ենթարկվելով քրդերի աւարառութեանց ցրվել և մնացողները վերջին չքաւորութեան մէջ և այդ պատճառով էլ վանքին ոչ ով կայ պահպանութիւն արողը։ Հէգուայ վանքը խիստ առատ է ըն-

տիր վարելահողերով, որից օգտվում են մեծ մասը հայերը և քրտերը։ Նորա վերահսկողութիւնը յանձնվում է փոփոխակի, այս և այն գիւղացի երեսփոխանների ձեռքում լոկ անունով միայն, որովհետև վանքը չունենալով զրամական ինչ կանխիկ եկամուտ և դորա համար էլ ընտրված երեսփոխները անփոյթ են դէպ վանքն։

66։ Բարակաձորոյ վանք

Հիզան հին քաղաքի աւերակներից մօտաւորապէս եօթ վերստ հեռաւորութեան վրայ, դէպ հարաւ-արևմուտք խիտ ծառատունկերով պատուած ոլորապտոյտ ձորին մէջ՝ փոքրիկ սարահարթի վրայ կառուցվել է Բարակաձորոյ վանք, խուլ և անընակելի մի վայրում և, գրէթէ ամայութեան դատապարտուած, միայն ձորակի միջից որոնդոստ սահող գետակն է նորա բոլոր լռութիւնն և ամայութիւնն զարթեցնողն։

Հիզանցի հայերը իրանց դաւառում եղած բոլոր վանքերից աւելի գերադասն են դասում Բարակաձորոյ վանք և խիստ ակնածութեամբ են վերաբերում դէպ նորա հողն ու քար, դէպ նորա սրբութիւններն։ Անուանի են այս շրջանում եղած որթատունկ այգիները իրանց էծա-պտուղ խաղողովն, որն արտահանվում է Վան և Բաղէշ քաղաքներ։

Հիզանու Բարակաձորոյ վանքի տօնակատարութիւնն կատարվում է Համբարձման-հինգշաբթի օր. դիմում են այդ տեղ հեզանցի բազմաթիւ հայ ուխտաւորը բերելով իրանց հետ բազմաթիւ գառներ, ոչխարներ մի մասը մատաղելու և մի մասը որպէս խոստիկ թողնելու վանքին. բայց ցաւալին այն է՝ որ քրտերը իրանց բաժինը վերցնում են այդ զոհաբերութիւնից որպէս պայմանաւորեալ մասընկեր. առարկելով թէ՝ վանքի պահպանութեան աւելի հոգս մենք ենք քաշում քան հայերը։

Թէ Հինդ խորան, թէ Հէգուայ և թէ Բարակաձորայ վանքերը չունենալով վարդապետ կամ հաստատ վանահայրերը. կառավարվում են ժողովրդից ընտրուած երեսփոխանների ձեռքով, բայց թէ ինչ սրտով և նպատակաւ... կարող ենք եզրակացնել որ այդպիսի կամայական կառավարութիւնը յամենայն դէպս վնասակար է վանքի շահերին։

Հիզան հին քաղաքի մօտ էր Բէյթ-ամ (հանրային տուն) անունով բազմահայ գիւղը լի ամենայն բարութեամբ, առատ հացով և ամեն բանով։ Դարոյս առաջին ընկզից Կոլաթ քրդաբնակ գիւղից մի հասարակ ֆախրի (քրտերի քարոզիչ, շրջուն պաշտօնեայ) Մօնլա Սարաթուլլահ անունով, երկու կանանի կաղ, գալիս է Բէյթամ գիւղ և հիւրասիրվում հայերից։ Մի փոքր ժամանակից յետոյ սուտ ուփուտ պատրուակներով գրաւում է միամիտ հայերին և բնակութիւն հաստատում նոցա մէջ։ Անցնում են տարիները կաղ կախարթը ֆախրինը իւր ոտը պնդացնում է, ոչ այնքան ինքը որքան նորա անդրանիկը տխրահուշակ Ջելալէդինը։ Հետզհետէ փորում են անտէր գիւղացոց հիմքը, թէ յայտնի թէ գաղտնի գործերով հարստացնելով, զզուացնելով յաջողում են ընիկներին տարագրել իրանց բուն բնավայրից և նոցա տեղ տեղաւորացնել միւրիտները...։

Ջելալէդինի և իւրայնոց արարքն և զզուելի տարաբնութիւնն աւելի զգալի դարձան Բէյթամի գիւղապետ տանուտէր Ծերունի Գրիգորի և նորա ճոխ գերդաստանի անդամոց վրայ, որոյ շէն ու յղփացած տունն ու տեղ, շէն օջախն, առատասեղան հիւրասիրութիւնն մի քանի տարուայ ընթացքում այդ ֆանատիկ հարստահարիչների հատուցած չարեաց շնորհիւ՝ տակն ու վրայ

ու քարուքանդ էր եղել. ցրուել էր այդ մեծ գերդաստանի բոլոր շուքն ու շքեղութիւնն, կողոպտուել էր հարստութիւնն, աւարել էին լծկան եզներն ու գոմէշները, դուարն ու ոչխարն, դոցա հետ և տնական կահ ու կարասիքն։

Զէյխ Ջէլալէդդինը ամենայնիւ տիրելով Բէյթամին, քանդել տուեց թէ Հիզանի և թէ նրա շրջակայքի բազմաթիւ հնութիւնները, եկեղեցիք, մատուռները, աւերակ տաճարները և այլն. չարաչար վարվեցաւ քրիստոնեայ սրբութիւնների հետ. պեղումներից դուրս բերեց շատ սպասք և այլ հնութիւնները որոց մէջ ամենից թանկագինն էր ընտիր մաղաղաթի վերայ գրուած աւետարանը։ Այդ բոլոր հարստութիւնից, որին տիրեց Զէյխը, ազատուեցաւ միայն յիշեալ աւետարանը, որն գնեցին Լի գիւղացիք առատ ընծաներով շահելով Զէյխի սիրտը...։

Այդ բոլոր անզգամութիւնները ծածկելու համար և կայր ամբոխի աչքին թոզ փչելու, Ջէլալէդդինը ընտրել էր իւր հեշտ միջոցն. զանազան արահետներում շինել տալով Թէքէ (որպէս մարդասիրական պանդոկ) երթևեկողներին երեկոյ առաւօտ մէկ մէկ ման բաժին կերակուր —չորբայ—տալով. և որ այդու իւր Միւրիտները աւելի հեշտ էին հարստահարում ժողովրդին յանուն այդ Թէքէի պտղի. զաքաթ-ողորմութիւն հաւաքելիս իրանք աւելին էին օգտվում։

Սրանից քսան տարի յառաջ Կ. Պոլիսում եղած «Հիզանի» ուսումնասիրաց» ընկերութիւնը մեծ փոյթ տարաւ այդ գաւառում կրթութիւն տարածելու, բաց անելով մի քանի նախակրթարաններ, սակայն վերջին տարիներում տիրող աննպաստ դէպքերի շնորհիւ, ուսուցիչները ցրուեցան և դպրոցները փակուեցան. և Հիզանցիք մնացին նոյն ամենաթշուառ վիճակում։

Ծերունի Գրիգորը զրկուած իւր բոլոր կայք ու կեան-

քից՝ միայն ցուպ ի ձեռին թափառեց գիւղից գիւղ. նորա որդիք-Կարապետն ու Գասպարը տարագրվեցին Կ. Պոլիս, յետ երկար տատանմունքից և նոքա թաղուեցան այնտեղ...։

Այստեղ այլ ևս գրիչը տատանվում է, լեզունը կարկամում, նոյնպէս և ամեն զգացմունքները չ'կարողանալով տեսածն ու լսածն ըստ կարելոյն գրել ու պատմել, ինչ որ բարբարոս ձեռքը արել ու աղարտել է Հիզանի բոլոր սրբութիւններն...

---

*) Շատախ գաւառում եղած Սրբավայրեր

67. Շատախու Ս. Ստեփանոս

Թողնենք Հիզանը և Սրբավայրերն իրանց անմխիթար դրութեանն. Մոգաց գաւառի արևելեան սահմանից. Առինջայ ոլորապտոյտ ձորերից. Ծրծանս գիւղի ճանապարհով. Առնօսի հարաւային լանջերի առապարներով մտնենք Շատախ գաւառ. ընակավայրն մի բուռն հայ կտրիճ-լաճերի։

Ահա Եղեմական գետն-Տիգրիս իւր օձապտոյտ շրջանը մեզ ցոյց է տալիս երբեմն լայնացած թևերով, երբեմն կուճ եկած երկու ձորակի միջում և, երբեմն փոքր ու մեծ ջրվէժներից գոռգոռալով, ֆըշալով վայր թափուելով, Սահում է. յառաջ է գնում դէպ ուղիղ հարաւ, դէպ Պասրատն ու Պաղտատ-Բաբելաստան։

Տիգրիսի հոսանքն ի վեր. եզերքներով և անտառախիտ

---

*) Շատախ անունով մի գաւառ ևս՝ Լկայ Սատոյ վիճակում Բաղէշի Վիլայէթին մէջ։

տափաստաններով է և մեր ճանապարհ, ուշ թէ շուտ հասնում ու մտնում ենք գաւառի կենտրոնն Զատախ աւանը։

Հին Զատախ աւանի և բերդի ստորոտումն Տիզբիսի ձախ ափին, դաշտավայրի կենտրոնում կառուցվել է հոյակապ գաւիթն ու տաճարն յանուն Ս. Ստեփաննոսի, որոյ գոյութեան, հիմնարկութեան մասին ստոյգն է որ՝ սկսուել է երրորդ դարու վերջերից։ Տաճարի կամարակապ առաստաղը պարունակում է իւր մէջ մի քանի նըբբանցքներ, պահարանները, թագստեան տեղերը որոց մէջ ընկնող անփորձն հեշտիւ չէ կարող դուրս գալ առանց կրկին առաջնորդի և խիստ դժուարութիւնների։

Ս. Ստեփաննոսը Զատախ գաւառի հայ քրիստոնեաների և ասորիների ամենանուիրական սրբավայրն է, նոցա նշանաւոր երդումն Ս. Ստեփաննոսի անունովն է, նոցա *խնդրակատարն* և *բարեխօսն* Ս. Ստեփաննոսն է։

Բարձրակատար տաճարի աջ ու ձախ կողմերով փըռուած են բազմաթիւ գերեզմաններ. ոմանք քարեայ կափարիչներով և մեծ մասը հողակոյտերով ծածկուած, այդ փռուած գերեզմանների համար տեղական ժողովրդի աւանդութիւնն հետևեալ պատմութիւնն ունի։ «Հար Յուլիանոսի պարսից վրայ արած արշաւանքի ժամանակը նորա բանակից մի զօրաբաժին-լեգէոնը մտնում է Զատախ գաւառ, և այդ տեղ ուր պատահում են քրիստոնեաների դիմադրութեանն։ Այդ ընդհարումն երկու կողմից էլ ունենում է իւր բազմաթիւ կոտորածն, որոնցից քրիստոնեայ նահատակները թաղվել են տաճարի աջ կողմով, իսկ հեթանոսները-կռապաշները, ձախ կողմով, դորա նշանն այն է որ քրիստոնէից գերեզմանների վրայ քարեր ձգուած են, որոց շուրջն էլ բուսնում է սպանդ-բոյս. իսկ հեթանոսաց՝ գերեզմանները ծածկվում են հողով։ որոց վրայ բուսնում է չար-փուշ». և ճշմարիտն էլ այդպէս է

մի կողմ ամբողջ դատասկ չար-փշերով է ծածկուած, իսկ միւս կողմ՝ *սպանդ* անունով հոտաւէտ բոյսով։

Ս. Ստեփաննոսի տօնն, բացի իւր յատուկ տօնակատարութիւնից, Զատախեցիք տօնում են նաև Կանանչ կիւրակէին, ուր համախմբում է գաւառի և աւանի ժողովուրդը երդելով ու պարելով տաճարի շուրջն ամբողջ երկու օր։

68. Սօզվանից Ս. խաչ վանք

Զատախ թաղի արևմտեան բարձրակատար լեռան փոքրիկ սարահարթի վրայ կառուցվել է սրբատաշ քարերից երկու փոքրիկ խորաններից և մի տաճարից բաղկացած Սօզվանից Ս. խաչ վանք. մօտիկ համանուն Սոզվան գիւղի, որոյ հին հայ բնակիչք գաղթելով հեռու օտարութեան մէջ, այժմ Գյրաւցի քրտերն են յաջորդել դոցա, տիրելով ըստ ամենայնի և վանքապատկան ամբողջ հողերին։ Թէ տաճարի և թէ խորանների մէջ թաղուած են մի քանի անյայտ կրօնաւորներից, միայն անգիր տապանաքարերով, նմանապէս վանքի շուրջն բազմաթիւ են գերեզմանները։ Այդ բոլոր աւերմունքների մէջ, զարմանալին այն է որ՝ թէ ինչպէս տակաւին կանգուն է մնացել սրբավայրն և դեռ ևս Զատախեցի հայք, տարին երկու անգամ, Կանանչ կիւրակէին և Հոգեգալստեան՝ կատարում են նորա տօնակատարութիւն, բոլոր ժողովրդով դիմում են այդ տեղ և կարում են մատաղները։

69. Ծաղկավանք

Զատախ-աւանի Սօզվան գիւղից դէպ հիւսիս-արևմտեան կողմ, ծաղկաւէտ լերանց երկու լանջաց վրայ գըտ-

նըվում է Ծաղկավանք սրբավայրն. սակայն բոլորովին աւերակ և անբնակելի,. մի միայն հաստահիմն որմերն և ներքնագաւթի մի մաս պատերն են մնացել բոլոր շէնքերից։ Ծաղկավանքը համանման անուանն իւր չորս բոլորն ունի ծաղկաւէտ թփեր, լեռներ ու բլուրներ ախորժելի բուրումներով. ամեն մի քայլափոխում անցնում են գոյնզգոյն ծաղիկների, մանուշակների, գներբուկների, շուշանների անթառամ ծաղիկների բազմերանգ բոյսերի միջով, ուր մարդս ափսոսում է ոտնատակ տալ այդ գալարագեղ բոյսերն, ճմլել բնութեան այդ գեղեցիկ զարդերն.

Ծաղկավանքը չունի իւր որոշեալ օրն ու տօնն տօնելու։ Գարնան եղանակից սկսեալ մինչ գրեթէ վերջին աշունք թարմեն նորա շուրջն. նորա ամենից շատ ուխտաւորքն են շատախեցի երիտասարդք և կուսանք՝ որոնք ամեն կիւրակէ և շաբաթուայ յարմար օրերում, զինուած ու զարդարուած թէ ուխտի և թէ զբօսանքի են գալիս Ծաղկավանքին, մինչև արևի մայր մտնելն, դառնում են տուն, երգելով ու պարելով։

Ծաղկավանք շատ առաջ կորսնցնելով իւր նշանակութիւնն, նորա բաւականաչափ վարելահողերն, անտառն ու հանդը ներկայումս գտնվում են ընիկ շատախեցի Տէր-Մարգարեանների հսկողութեան տակ։

70. Քրմենից ս. Խաչ վանք

Շատախ հին աւանի արևելեան կողմ, Տիգրիսի աջ եզերքին՝ խիտ ծառատնկոց և այգեստանեաց մէջ գտնվում է Քրմենից ս. Խաչ վանք, Քաքանայ ձորի արևմտեան ծայր, ութ ժամ հեռու Հոգւոց վանքից։

Ըստ տեղական-պապենական աւանդութեանց, Վասպուրականում առաջին անգամ առաքելաշէն վանքն է եղել Քրմենից ս. Խաչ վանք, սկսեալ այն օրուանից, երբ առաջին Լուսաւորիչները—Թադէոս և Բարդուղիմէոս՝ Միջագետքից անցնելով դէպ Մեծն-Հայաստան, անցնելով Քաքանայ ձորովն, որոյ ճանապարհով պիտի անցնէին դէպ Անձաւացիք, դէպ Հոգւոց վանք, պատահում են այստեղ Քրմատան և Բաղինների. յաջողվում է նոցա խորտակել կռապաշտութեան արձանները և տեղը կանգնեցնել ս. Խաչն Փրկչական։ Եւ ահա այն օրուանից այդ Բանել գինեաց վայրը կոչվել է Քրմենից վանք. որոյ տօնակատարութիւնն լինում է իսկապէս Խաչ-վերացի տօնին. շատախու գաւառում գտնուած բազմաթիւ հայ ուխտաւորաց ներկայութեամբ։

Նոր Շատախ աւանը, ինչպէս իրանք ասում են—թաղ, վերջին ժամանակներին է շինուել և բնակութիւն հաստատել Սև տիկնայ (սուրբ տիկնայ) գետի երկու եզերքով, ուր տեղաւորուել են երկու հարիւր տանից աւելի հայերը։ Երկու ծառազարդ լեռանց առապար լանջերում աստիճանաբար շինուած են գոցա բնակարանները մեծ մասը երկյարկանի և ճաշակաւոր յատակագծով։ Գետի եզերքին աւելի մօտիկ է և գոցա կրպակներ, գործարանները և այլն։ իսկ հին Շատախը գտնվում է Տիգրիսի աջ ափին, որ տեղ է և բերդ, որոյ աւերակների վրայ քառասուն տարուց աւելի է որ շինուել է զօրանոց, իւր միջում ընտ միշտ պահելով երկու վաշտից ոչ պակաս կանոնաւոր զօրք։ Այդ բերդը որն բաւականի ամրակառոյց պարիսպներ, աշտարակներ և անառիկ դիրք է ունեցել, ունեցել է և անցելում հետաքրքիր կողմեր։ Բերդումը բացի աւերակներից, ներքնայարկ զընդաններից կայ և մի ամենահին եկեղեցւոյ աւերակներ, որոյ մասին դեռ պատմողներ կան, եկեղեցում և բերդում, նեղ ընկած միջոցին, շատախեցիք ամրացել և երկար ժամանակ կռուել

են իրանց վաղեմի ոխերիմ գլյուրացի քրդերի դէմ...։

1850—55 թուականներին՝ քրտաստան նուաճող հռչակաւոր Օսման փաշանը խպառ խորտակելով գլյուրացիների զօրութիւնն, խորտակել և քարուքանդ է արել նաև այդ բերդը, այդ թուականից և Շատախ գաւառն էլ հաստատապէս մտել է օսմ-իշխանութեան տակ։

Շատախ աւանը բացի իւր միջումն ունեցած մրգաւէտ այգիներից, շրջակայ արուարձանները շրջապատուած են աւելի ճոխ այգիներով, խիտ պրակներով, ճոխ ագարակներով, որոնք ընդհանրապէս *Մազրայ* կ'կոչվեն։ Այդ *Մազրաները* (ցանելու վայր-) դեռ հոգարացոց տիրապետութեան ժամանակից, որպէս նուէր—փէշքաշ—շնորհուել են շատախեցի այն հին դերդաստաններից ոմանց՝ որոնք գաղթել են Մոգաց Աբրահամենց թաղից իրանց անուններով յայտնի հին տոհմականներին։ Արուարձանների մէջ նշանաւոր են Ծառնոց, Թլորան, Դեսթովանք մազրաները և յայտնի իրանց արտադրած *մէրնեկ*, *ապասի* և այլ տեսակ տանձ ու խնձորներով և այլ մրգերով։

Դեռ օսմ. իշխանութիւնը չ'հաստատուած հարաւային Հայաստանում, հոգարացիների ժամանակ. Արասեան տոհմի, այդ գաւառը, Շատախը, աւելի բարւոք վիճակ է ունեցել ինչպէս պատմում են ծերունիները։ Բնիկ շատախեցի հայեր և կանայք իրանց ուշիմ և նրբին արուեստագիտութեան հետ ունին շատ խելացի կողմեր, որով նոքա կարողացել են շրջապատ տարբում պահել իրանց գոյութիւնն երբեմն դիմառնութեամբ, երբեմն խելքով։ Նոցա չարքաշ կեանքը, տոկուն և յամառ դիմադրութիւնը մեզ ներկայացնում են մի երկրորդ Սասուն, որք ամեն վշտակցութեանց դիմանալով, չ'թողին ընավայրն, չ'թողին իրանց պաշտելին Ս. Ստեփաննոս ու Ս. Կարապետն։

Այստեղ էլ երկրի բնական դիրքը, սրածայր, ատամնաւոր անմատչելի լեռները անդնդախոր ձորեր, անդունդ-

ները, ծմակները, խիտ անտառները նպաստել են ժողովրդին իրանց պապերի քաջազնական ոգինը պահպանելու։ Լեռնային բնութիւնը ներշնչել է դոցա մէջ, արիութիւն, քաջութիւն, անձնապաշտպանութիւնը, պատուի—նամուսի—ընտանեկան օջախի մաքուր և անեղծ պահպանութեան համար։

Պատահել է որ նոքա շատ անգամ որպէս *Մաավին* (օգնականներ) մասնակցել են քուրդ ցեղապետների արշաւանքներին և այդպիսի երևույթ մենք շատ անգամ տեսել ենք միրանցի, զուտէրցի, առնոսցի քրդերի մէջ և զտնուած հայերը իրանց կողմնապահ քրդերին օգնելիս և կռուելիս։

Դեռ մանուկ հասակումս ես տեսնում էի շատախեցի հայ *կօջաբաշիները* (մարդպետները) որոնք Վան գալիս, ինչ դիրք և վեհանձնութիւն ունէին կուսակալների և մի կարգ թուրք բէկերի ներկայնութեան, իրանք միշտ զինուած և զինուած մարդերով—քուրդ սպասաւորներով շրջում էին։

Ո՞վ չէ տեսել շատախեցի հայ կանանց առտնին աշխատութիւնն, նուրբ մանուածքն. բրդից և թիֆթիկից գործած նրբին կտորները, որոնք հակերով արտահանվում են ոչ միայն Վան և շրջակայքն, այլ մինչ Կ. Պոլիս և այլ հեռաւոր քաղաքները յատկապէս վերարկուի և շրջազգեստի համար։

1896-ի հանրային դէպքերին՝ երբ Վանայ այգեստանայք վտանգի մէջ էին, շատախեցի հայերն էլ մի փոքրախումբ պաշտպաններով, երիտասարդների օգնութեամբ ամրացած Տիգրիսի ափին Գյլկանց տներում, քաջութեամբ դիմադրում և յետս էին ընկրկում այն մեծ ոճրագործը Շէքքրն իւր ասպատակիչ խմբովն։ Շէքքը վիրաւորուեցաւ... և խուժանը ցրուեց, բայց կրկին արշաւեց դէպ Շատախ, նա անցնելով կանոնաւոր զօրաց առաջնից, զո-

բանոցից ոչ հեռու, խորտակեց կոտորեց ու կրակեց տներ ու կրպակները բայց դարձեալ չ'կարողացաւ պաշտպան երիտասարդների յամառ դիմադրութեանն դիմանալ։ Դորա համար էր որ՝ ստիպուած Վանից ուղարկուեցան մի վաշտ զօրք երկու հրօտանիներով պատժելու պաշտպան երիտասարդներին. բայց շատախեցիք աւելի խելօք կանխեցին, ընդառաջեցին զօրաց, յայտնելով իրանց հաւատարմութիւնն, խնդրելով պաշտպանութիւն աւազակ քրդերի դէմ... բայց ընդ հակառակն՝ նշանաւորներից ոմանք ձեռբակալուեցան, բանդարկուեցան Վանում և վերջը ազգեցիկ միջոցաւ կըրկին ազատուեցան անպարտ։ Շատախ թաղի հիւսիսակողմն է ծառաստաններով զարդարուած այն ընդարձակ գերեզմանատունը, երևկայեցէք մի ճոխ բուրաստան, ծաղկաստան մանուշակների բուրումներով, ոչ թէ մեռելոց աշխարհ։ Այդ գերեզմանատան կենտրոնումն. շատ հին ժամանակից կառուցվել են երկու եկեղեցիներ հոյակապ հաստատութեամբ բարձր, կամարակապ առաստաղներով, Ս. Աստուածածին և Երբորդութիւն անունով։ Ամեն հինգ նաւակատեաց միռելոցքի երկուշաբթին, ան պայման կատարուելու է այդ տեղ սրբազան պատարագ. ինքերկայութեան բազմաթիւ ժողովրդոց, կատարվում է մատաղ և վերջ հոգիհանգիստ։

Նոր—Շատախ աւանի կենտրոնումն է Ս. Կարապետ եկեղեցին, որոյ կենտրոնի քառանկիւն սիւնների որմոց վրայ արձանագրուածեն եկեղեցւոյ շինութեան մասնակցող բոլորի անունները և մի յիշատակարան Շատախի վերջին ամիրայ Աբասեան Ապտուլլահի անուանն, որոյ հրամանաւ և օգնութեամբ շինուել է եկեղեցին բաւականին յարմարութեամբ։ Եկեղեցին ու դպրոցը վերանորոգուել են 1880—82 թուականներին հրամանաւ Տէր-Խաչատուր կաթուղիկոսին Աղթամարու։

Ներկայումս, ինչպէս լսում ենք, Շատախ աւանը

սկսել է փոքը ինչ իւր առաջին դրութեան հասնել և տարագրուածները հետզհետէ դառնում են դէպ իրանց բնակավայրն, առանց մոռանալու այն տխուր անցեալն։

ՍՊԱԿԵՐՏ ԳԱՒԱՌԱԿՈՒՄ ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Մոգս և Շատախ գաւառների սահմանակից կայ մի փոքրիկ գաւառակ, որն մինչ յ'ներկայս էլ կրում է իւր հին պատմական անունը—Սպակերտ—Սպանների շէնք կամ շէնը, տասն կամ աւելի հայաբնակ գիւղերով՝ ընկած դաշտավայրի մէջ։ Այդ դաշտավայրի շուրջ պատող փոքրիկ լեռնաշղթաների մէջ և բլուրների վրայ պատմական ժամանակից սկսեալ կառուցվել են բազմաթիւ վանքեր, եկեղեցիք, և մատուռները որոնցից յայտնիներըն ներկայումս հետեւեալներն են։

71. Սպակերտու Ամենասուրբ Երրորդութեան վանք

Սպակերտ գաւառակի, կենտրոնում, ժայռանք գիւղի մօտիկ, լայնանիստ պարիսպներով և հաստատուն որմերով կառուցուած է կամարակապ առաստաղով։ Նշանաւոր ուխտատեղի է գաւառի հայ ազգաբնակութեան համար։

Վանքի արևմտեան որմերի տակովն բղխում է մի առատահոս զուարթաբար աղբիւր, որն հաւատացողների համար բժշկութեան ջուր է, յորում լողանում են բազմատեսակ հիւանդութիւն ունեցողները և բժշկվում։

Ամենասուրբ Երրորդութեան վանքը, ըստ տեղացւոց պատմութեանն. մի դար սրանից առաջ ունեցել է ճոխ տնտեսականութիւն և փոքրիկ միաբանութիւն, նորա պատկանեալ հանդն ու հանդաստանը ներկայումս մնում

են մեծ մասը անմշակ և մնացեալը բաժանուած է մօտիկ գիւղացւոց մէջ։ Վանքի գլխաւոր տօնակատարութիւնն լինում է Հոգեգալստեան կիւրակէն, տարուայ ընթացքում հազիւ թէ մի անգամ ժամերգութիւն լինում է այդ Սբբ-բավայրում և այն էլ այդ նշանաւոր օրն։

Ծաժվանցի հայերը վերջի տարիներին աւելի խիստ ճնշուեցան շրջակայքի քուրդ տարրից և. նոցանից բազմաթիւ երիտասարդները գաղթեցին Կովկաս և. ոմանք Կուբանեան նահանգի գիւղ ու քաղաքներում սկսեցին գործ ունենալ. ոմանք շրջուն առուտուրով և ոմանք հայագործութեամբ. այնպէս որ՝ այդ նշանաւոր գիւղում. բացի անտէր և այրի կնանիքից, և ծերերից երիտասարդ-մարդ սակաւ է գտնվում։

Սպակերտ գաւառակը գտնվում է Բաղէշի կուսակալութեան տակ. բայց գիւղացւոց առտնին յարաբերութիւնը միշտ Վանայ հետ է։

72. ԿԵՂՍՈՒ Ս, ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ

73. ԲԱԶՆԻՑ-ԲԱԶԷԻՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

74. ՍՈՐԲԱՅ ՎԱՆՔ

Այս երեք վանքերն ևս մի կողմի ճանապարհի ուղղութեան, իւրաքանչիւրն միմիանցից հազիւ 5—6 վերստ հեռաւորութեան վրայ գտնվում են. բայց անտէր և անբնակելի, միշտ դռները փակ։

Գեղեցիկ վայրեր. սքանչելի հանդ ու հանդաստաններ բերրի և արգաւանդ հողերով, որոց մեծ մասից օգտվում են աւելի քրտերը քան թէ հայեր։ Մինչ հայ ժողովուրդը, Սպակերտցիք. սպասում էին գէթ փոքր ժամանակը մի ևս համբերելով ազատուել տիրող բարբարոսութիւններից՝ ընդ հակառակն վրայ հասաւ 1896 ի ահռելի անցքեր.

աւելի վատթարացան. և այդ վանքերը նմանապէս ներկայումս գտնվում են բոլորովին անտէր և անխնամ վիճակի։

75. Շիրնից Սկաւառակ վանք

Սպակերտի հարաւ-արևմտեան կողմ, բարձր լեռնադաշտի վրայ, բաւական արձակ տարածութեամբ կառուցվել է Սկաւառակ վանք՝ մօտիկ Շիրնից հայաբնակ գիւղի։ Վանքը մինչ անցեալ 1896 ին բաւականի տընտեսական վիճակ մի ունէր, գիւղատնտեսական սակաւ պարագայիւք. ունէր փոքրիկ անտառ. որոյ առորևնէր և վանքապատկան բոլոր վարելահողերն. սակայն այն տխուր օրից երբ կողոպտվեց Շիրնից գիւղ, նոյն թշուառութեանց ենթարկվեց և վանք։

Ըստ հաւատի պատմութեան և տեղացւոց աւանդութեանն Շիրնից վանքում թաղուած է մի անյայտ նահատակի գլուխն-սկաւառակն, որից մի կտոր մասունքը ամփոփուած արձաթեայ տուփի մէջ՝ պահվում մինչև ցայսօր. շատ անգամ հիւանդների վրայ բազմեցնում են։

Սկաւառակ վանքի վերահսկողութիւնը յանձնուած է մի հաւատարիմ քահանայական տան. որոնք երկար ժամանակաւ ընտանիքով ապրում են վանքում և օգտվում են վանքից։

Շիրնից Սկաւառակ վանքն ևս ունի իւր ընտիր վարելահողեր, հանդ ու հանդաստանը, բայց առի չ'գոյէ ապահովութեան, հազիւ թէ կարօղանան մշակել մի ամենափոքր մասն։ Նորա տօնակատարութիւնը լինում է աւելի Կանանչ կիւրակէին, ուր հաւաքվում է Սպակերտու գիւղացւոց ստուար բազմութիւնն.

Վասպուրականի բոլոր հարաւային գաւառները, որպիսիքն են Հայոց-Ձոր, Վերին և Ստորին Ռշտունիք, Մոգք, Ճատախ, Հիզան, Կարճկան, Սպակերտ, Կարկառ, իրանց միջում եղած բոլոր շէն ու անշէն վանքերը և եկեղեցիքն գտնելով Աղթամարու կաթողիկոսութեան տակ, ստոյգն ասելով, բարոյապէս ամենայնիւ բարձի թոդի եղած են՝ ոչ միայն անցեալումն, այլ և ներկայ ժամանակներում։ Ոչ մի վանքում այցելունը չէ տեսնում ոչ օրինաւոր մատակարարութիւն, ոչ տնտեսական կառավարութիւն և ոչ ելից ու մտից հաշւապահութիւնը. չ'նայելով որ այդ սրբավայրերը բոլորն էլ, քիչ թէ շատ ունեցել են և ունեն իրանց նիւթական ապահովութիւնն հարուստ կայքերով, արգաւանդ ու բերրի վարելահողերով, հանդ ու հանդաստանով և անտառներով, թողունք պարբերական եկամուտները։

Աղթամարու վարչութիւնը բաւականանում է միայն այնու՝ որ տարուց տարի իւր որոշեալ գումարն անպայման գանձում է վանահայրերից, ուրիշ ոչինչ... այնուհետև վանքի ամենայն ինչ մատակարարութիւնն մնում է նոցա՝ վանահայրերի, տնտեսների հաճոյականութեան և, դա ի հարկէ ցաւալի անտարբերութիւն է և վնասակար՝ աթոռին։

ՀԻՆ ԱՂԲԱԿ ԳԱՒԱՌՈՒՄ ԵՂԱԾ ՍՐԲԱՎԱՅՐՆ

76. Բարդուղիմէոս առաքելոյ վանք

Հին-Աղբակ գաւառ գնալու ամենահեշտ ճանապարհ և բանուկ պօղոտան է անցնել Անձաւացեաց գաւառն, որն Վանից ութ ժամի հեռաւորութեան վրայ է, և անտի

Բաշգալէ աւանն, որն և ներկայիս Աղբակու կենտրոնատեղին է Թուրք-պարսկական արևելեան սահմանում։

Բաշգալէ աւանից ութն ժամ հեռու, դէպ հիւսիս-արևելք պարսկաց սահմանին խիստ մօտիկ Գիւզելդէրէյի (գեղեցիկ ձոր) ստորին կողմ, դաշտավայրի կենտրոնում. ահա շքեղապէս և սօսասարաս փառահեղութեամբ կառուցվել է այդ հինաւուրց Սրբավայրն՝ յանուն առաջին Լուսաւորչին Հայոց Բարդուղիմէոսի առաքելոյ ուր և նահատակվել է սուրբն, և ուր հանդչել են նորա սրբաւնեալ ոսկերքն։

Այդ նշանաւոր Սրբավայրը մեծ հռչակ ունի յամենայն տեղիս, առաւելապէս Պարսկաստանում։ Նորա սիրովն ու կարօտիւ հալ ու մաշ են լինում Ատրպատականի հայերը, սկսեալ Խոյից, Սալմաստի բոլոր գիւղերից մինչ Դաւրէժն ու Թէհրան ուխտաւորը պակաս չեն լինում նորա դռնից, բերելով լիաբուռն աղ ու խաչ համբոյրն և զանազան նուէրները։ Թէ ինչ հիասքանչ շէնք, հոյակապ հաստատութիւն է այդ՝ լեռն ու գրիչը անկարող կ'լինեն պատշաճապէսն նկարագրելու։ Բարձրակատար կաթողիկէն, գմբէթն իրանց վիթխարի մեծագործութեամբն ընդհանուր հիացում են ազդում և, զարմանալի չէ որ այդ առաջին աթոռն, առաջին սրբավայրն՝ տակաւին իւր ամրապինդ հաստատութեամբն անսկուն և անսասան մնացել է մինչև ցարդ՝ այդ շրջապատի օտարաբնակ ցեղերն տարրի մէջ։ Սկսեալ իւր գոյութեան օրից, մօտիկ տասն և ինն դարու ժամանակամիջոցում, միշտ յամառ, միշտ անվեհեր, դիմառնութեամբ դիմհար տալով, կուռելով դարերի, տարիների անընդհատ կործանիչ աւերմունքներին և այժմ բարձրիգլուխ տակաւին կանգուն է մնացել։

Բարդուղիմէոսի վանքը նախանձելի վիճակ մի ունէր նիւթական ամեն կերպի պարագայիւքն. լայնատարած

սահմաններում ընտիր վարելահողերը որքան ասես, արօտատեղիք, մակաղատեղիք խաշանց, ուր ազատ արածում էր ոչ միայն վանքի այլ և վրանաբնակ քրդերի անհաշիւ ոչխարաց հօտն. հանդ ու հանդաստանն և շէն ագարակն, ուր բնակւում էին 50—60 տուն հայեր և կիսով չափ քրդեր օգտւելով վանքի գիւղատնտեսական ամեն կողմերից։ Թողունք նորա լաւ ու վատ անցեալն, յիշենք միայն մօտիկ անցելումն պատահած անցքերն. 1870—75 թ. խաղաղ ժամանակներում նախորդ վանահայը հանդուցեալ տէր Եղիազար ծ. վարդապետի վանահայր-առաջնորդութեան ժամանակ խիստ բարւոք վիճակ ունեցաւ. հին շէնքերը բոլորովին նորոգեցան, դուռ ու ոչխարն, լծկան եզներն ու գոմէշները կրկնապատկուեցան. և որը աւելի օգտակարն էր բացուեց այդտեղ ժառանգաւորաց դպրոց, այդ խաւար գաւառի մանկտւոց դաստիարակութեան համար. այնպէս որ՝ Բարդուղեմէոս վանքի հռչակն տարածուեց ամեն տեղ և շատերը մեր փառաւէր կղերից, ցանկանում էին նորա Վանահայրութիւնն ձեռք բերել թէ Վանայ և թէ Կ. Պոլսոյ ազգ. կենտ. վարչութեանց շնորհիւ, որովհետև այդ սրբավայրի յորդառատ եկամուտն, լայնածաւալ գաւառին Վանահայր առաջնորդ դառնալը շատերին էր գրաւում։

1877—78-ի պատերազմի թունդ ժամանակը Բարդուղիմէոսի վանքը որպէս արահետ երթևեկութեան, ի թիւս իւր գաւառեցի հայոց, ենթարկուեց տխուր հանգամանքների, Ճըկակցի, հարթոշցի քրդերը մէկ կողմից, Պարսկաստանի հելուզակ քրդերը միւս կողմից, ամեն անդուսպ չարիք գործեցին վանքի և վանքեցւոց հետ։ Այդ ամառուայ ամբողջ ընթացքում վանքը դարձեալ էր խուժդուժ ազգաց հանգստավայր, պատերազմի դաշտ երթևեկող ամեն մի քուրդ խմբակը, ամեն մի հասարակ շէյխը, ֆախզինը պատահելով սրբավայրն իւր մաս կողուպուտն

վերցնելու էր շտապում, թողունք այն ամեն կեր ու խուամն որն տրվում էր նոցա անյագ որովայնին։ Քրդերը չ'բաւականանալով այդ յափշտակութեամբ, թէ քշած անասուններով, թանգագին սպասներով և զգեստներով, վանքի գաւթի և տաճարի յատակն ու որմերի տակերն, սալայատակները բոլոր տակն ու վրայ, քար ու քանդ արին վանքի երևակայեալ թագցրած գանձերնդտնելու յուսով։ Այդ աւերիչ պեղումների կարգինը, քար ու քանդ էին արել և սեղանի յատակի քարերն և վէմքարն, դոցա հետ մէկ տեղ և սրբոց գերեզմանները բայց իզուր, միայն աւերմանց ու մնասի հետքերն թողնելով։

Այդ խառն դրութիւնից ձանձրացած ու զզուած և կասկածելով իսկ իւր սպանումից (կարող էր պատահել) մազապուրծ անցաւ պարսկասան ծերունի վանահայրն Եղիազար վարդապետը և չ'կարողանալով այլ ևս վերադառնալ, երկար ժամանակ թափառելուց վերջ՝ այնտեղ էլ կնքեց իւր բազմաշխատ կեանքն, կարօտ մնալով իւր սիրեցեալ վանքին, յորում երկար էր տքնել։ Պատերազմից, խաղաղութիւնից վերջ Վանայ ազգ. վարչութիւնը ուղարկեց այդ Վանք որպէս փորձառու կղզեր, Բազունի Օհաննէս վարդապետ թէ որպէս վանահայր և թէ առաջնորդ Ազգ. բակու վիճակին։ Վատ չեր Բազունի վարդապետը իւր պաշտօնի սկիզբն տարիներին, նա իւր ճարտար լեզուովն և բաւականին հմուտ կառավարութեամբն՝ ազդեցիք եղաւ նաև նահանգական կառավարութեան ամեն շրջաններում, բայց երկու վնասաբեր երևոյթները նորան ևս ձգեցին իւր ունեցած հեղինակութիւնից. դա Բաշկալեցւոց-հայերի անընպատակ կուսակցութիւններ և վերջին տարիներում ընդհանրական եկած թուրք կառավարութեան զանազան կասկածները էին, որով ստիպեալ հրաժարուեց պաշտօնից. որոյ հետևեալ յաջորդեցին կեսարեցի Օհաննէս։ Մոկացեան Մեսրովը, Դի-

օեան Բարդուղիմէոս վարդապետները բայց սոքա ևս չ'կարողացան մեծանուն վանքի քայքայեալ դրութիւնն բարւոքել այն յայտնի պատճառներով։

Բաշգալէ աւանը 1881—1890 թուականին դարձաւ նահանգական քաղաք. քաղաքական ինչ ինչ հանգամանքների առթիւ, այդ տեղ լեցուեցան թէ զինուորական և թէ քաղաքական ամեն դասակարգի պաշտօնեայք, բայց երկաթը չ'տեսեց այդ, կրկին ջնջուեցաւ, և որպէս գաւառը մաւ Վանայ կուսակալութեան տակ։ Աղբակու կամ Բաշգալէ գաւառի ընդարձակ տարածութեան մէջ, ամենաշատ մասը անմարդաբնակ, ամայի վայրեր են, բազմաթիւ աւերակ գիւղերով և գիւղաստանով լիքն, այդ տեղ ազգաբնակութիւն փոքր թիւ է կազմում քան այլ գաւառս, եղածն էլ մեծ մասը քրդերն են թէ վրանաբնակ թէ նստական, հայ տարը և ասորիները այս գաւառում կազմում են ազգաբնակութեան երկրորդ մաս. թէև այս վերջինները մի դար առաջ աւելի խիտ են եղել, բայց բոլորն էլ տարբեր հանգամանքների տակ ճնշուած, մեծ մասը թողած հայրենի տուն ու տեղ զաղթելի են պարսկաստան և մեծ մասամբ Կովկասի զանազան քաղաքներ։ Բազմաթիւ են աւերակ հայ գիւղեր, նոյնպէս վանքեր եկեղեցիք, մատուռները, որոնց շատեր աւերակ վիճակի, ոմանց գրաբեթները և կաթուղիկէները կիսաքանդ և խորանները դեռ կանգուն, և շատ սրբավայրեր տակաւին պահելով իրանց նշանակութիւնն, շատ անգամ ունենում են այցելուները որոնք որոշեալ օրերինը համախմբելով վանքերի շուրջն կատարում են իրենց ուխտագրութիւնն։

1882—83-ին Կ. Պոլսոյ «Հայոց Միացեալ» ընկերութիւնը առաջին փորձը փորձեց Բարդուղիմէոսի վանքում բանալ բարձրագոյն նախակրթարան դպրոց, ծախսելով բաւականին կլորիկ մի գումար պ. Ս. Տէր-Սարգիսեանի վերահսկողութեան տակ։ Ջէնքը շինուեցաւ, պարագանե-

ը պատրաստուեցան. բայց ի զուր... ափսոս դեղին ոսկիներին և Աղբակեցիք մնացին դարձեալ նոյն խաւար մթնոլորդումն։

Ներկայումս Բարդուղիմէոսի վանքը նոյն չէ ներկայացնում անշուշտ ինչ որ էր անցեալում. ոչ բազմառատ հօտք խաշանց, ոչ նախիրն ու երամն հաւուց և ոչ երկրագործական այն ճոխ պարագայքն, այլ անձուկ և անմխիթար դրութեան։ Մխիթարական է միայն որ այդտեղ ևս ձեռնտու բարերարաց շնորհիւ և Կ. Պոլսոյ պատրիարքարանից ուղարկուած նպաստով բացուել է «Որբանոց» դպրոց և գաղթական վանքեցիք, Աղբակեցիք հեազհետէ վերադառնում են իրանց աւերակների վրայ թէև աննախանձելի վիճակով։

Բարդուղիմէոս վանքի հարաւ-արևմտեան կողմն է պատմական Էրէսան գիւղ, որը նահատակել է սուրբ առաքեալն և որտեղ թաղուած են Արծրունի իշխաններից և ազատներից ոմանք։ Իսկ Թադէոս առաքելոյ վանքը գտնվում է պարսկահայոց Մակու քաղաքի Արտազու դաշտումն, նոյն հրաշակերտ հոյակապ հաստատութեամբ։

Վերջաբան

Վերջացնելով Վասպուրական-Վանայ նահանգի գլխաւոր «Սրբավայրերի» համառօտ տեղագրութիւնն, ներողութիւն եմ խնդրում այն ամեն թերութիւնների համար զորը ունեցել եմ իմ այս դուշնաքեայ աշխատութեանս մէջ, խոստովանելով որ ունի իւր պակաս կողմերն, և ես այնքան կարողացայ անել՝ որքան իմ անձուկ միջոցս ներեց։

1893—92 թուականներին և թէ առաջ իսկ՝ պաշտօնապէս շրջագայելով նահանգի ամբողջ գաւառները, գիւղերն ու աւանները, դոցա միջում գտնուած սրբավայրերն, վանքերն ու եկեղեցիք, որոց՝ այն թուականներում

ես տեսայ շէն ու յղփացած ամեն բարիքներով, անշուշտ չի պիտի անմոռաց մնային իմ յիշողութիւնից, ինչպէս և նոցա աւերումն ու խորդակումն անցեալ 1995—96-ի հանրային անցքերին ժամանակ, պիտի զարթեցնէին ինձանում շատ տխուր և ուրախ անցեալ յիշողութիւնները և ես ստիպուած կատարէի իմ պարտքն...։ Դեռ այն թուականից սկսեալ (1891—92), ես տեղազրել էի ոչ միայն այդ սրբատեղեաց տեղագրութիւնն, այլ և իւրաքանչիւր վանքի գոյութեան—հիմնարկութեանց թուականները իրանց յիշատակագրելովն, արձանագրութիւններով, բայց աւաղ, վերջի տխուր անցքերն, ինչպէս ջարդ ու փշուր արին մեր բնավայրի ամեն ինչ, նոյնպէս և իմ այդ թղթի կտորները—սեպագրութիւնն—կուլ գնացին վերահաս հրձիգութեանց. և, ինձանում մնացին լոկ յիշողութիւնները և տպաւորութիւնք։

Տխուր և քատմելի պարագաների տակ և ստիպուած տարագրուելով մեր բնավայրից, անշուշտ մեր մտքից ու յիշողութիւնից չի պիտի անցնէին մեր հայրենի աշխարհի սրբավայրերն և այս վերջին տարիներում նոցա կրած կրելութիւնքն, որոնք վեր ի վայր վրդովեցին մեր աշխարհի ամեն խաղաղքն ու հանգստութիւնն, և դժբախտ ժողովուրդը վտարանդեցին երկրէ երկիր, մերկ ու բոկոտն. ձեռը ձոց, անոք և անտէր թափառական։

Վկայ են երկինք ու երկիր. Ստուած, հրեշտակ և համայն մարդիկ որ՝ այդ սրբավայրերը հազար ու բիւր մարդոց. լինէին դրա հայ, թուրք, քուրդ, ասորի եւրոպացի, հանապազօրեայ մշտառատ հաց ու ջուր սերով ու կարազովն մէկ տեղ անխտրաբար տուել ու հիւրասիրել էին օրերով ու շաբաթներով։ Իսկ այժմ, նոյնպէս վկայ են՝ որ շատերն այդ սրբավայրերից զրկուած ու կողոպտուած ամեն կայք ու կեանքից և շատերն խորդակուած իրանց հաստատահիմն շէնքերից աւերակաց կարգն են

դասուել, Վանահայրն ու վանքականք. միաբանութիւնն ցրիւ ընկած և կամ ո՞վ գիտէ, ինչ եղանակաւ կենաղրաւ են եղել անյայտ և անլուր։

Չ'յիշելով այլ ևս շատ տխուր պարագաները բաւականանում ենք միայն այնու, որ իցիւ թէ գայ ժամանակ, երբ այցելութիւն լինի, ամեն Վտարանդի գաղթականին, դառնալ իւր բնակավայրն, կարկատել ու նորոգել աւերակները, ապրել ու մեռնել պապենական յարկի տակ, տանն, հանդ ու հանդաստանի միջում, կրկին պաշտել ու յարգել իւր Սրբավայրերն, *ժամին* ու ժամատունն որով այնու մխիթարւած կլինի իւր կրած ու ենթարկւած ամեն կերպի թշուառութիւններից և այն՝ անպայման վշտակրութիւններից որով տառապեցան խիստ։

Վ Ե Ր Ջ

ՅԱՆԿ

Բովանդակութեան

Թիւ Վանօրէից — *Երես*

Ցիշելիք իմ սիրելի հայրենակիցներին և ազգայնոց . . 3
Զօն յիշատակաց՝ Վանայ «Ս. Սանդխտեան» օր. ուսումնարանի և օր. Աննա Գասպարեան Մունեատիկեանցի. . 4

Վանայ ըերդաքաղաքում եղած եկեղեցիք եւ ուսումնարանք

1. Ս. Սիօն եկեղեցի. 17
2. Ս. Պօղոս և Պետրոս } եկեղեցիք 19
3. Ս. Առաքեալ }
4. Ս. Էջմիածին կամ Ս. Նշան 20
5. Ս. Սահակ պարթեւ 21
6. Ս. Ստեփաննոս . . . . . »
7. Ս. Ծիրանաւոր Աստուածածին 22
8. Ս. Տիրամայր 23
9. Ս. Վարդան զօրավար . . . . . .

Վանայ ըերդաքաղաքից դուրս եղած եկեղեցիք

10. Հայկավանից Ս. Աստուածածին եկեղեցի . . 29
11. Արարուց կամ Այր-յարոյց Ս. Աստուածածին . . 31
12. Նորաշէնու կամ Տիրակաւոյց 36
13. Յայնկոյսների Ս. Աստուածածին . . . 37
14. Ս. Յակոբայ եկեղեցին. 41

Վան քաղաքի շրջակայ արուարձաններում եղած Սրբավայրեր

15. Կռունկ Վանից Ս. Աստուածածին վանք . . 45
16. Ս. Խաչի վանք . . . . . .
17. Շուշանից Ս. Գէորգ 47
18. Կենդանանից Քօշահան Ս. Աստուածածին . . 48
19. Կարմրվորայ Ս. Աստուածածին վանք . . . 49
20. Ս. Գրիգորի վանք կամ Սաղնաձորի անապատ . . 52
21. Վերին Վարագ . . . . . , 54
22. Ստորին Վարագ կամ մենաստան Ս. Խաչի . . 59
23. Շահբաղու կարմիր աւետարան : . . , 66
24. Ակռբու Ս. Աստուածածին . . . .
25. Լեզք կամ Լեսկայ Ս. Ամենափրկիչ . . . 68

Թիւ Վանօրէից — *Երես*

26. Աւանուց Ս. Օհաննէս Մկրտիչ 69

Վանայ հիւսիսակողմն Գնունեաց կամ Թիմար գաւառում եղած սրբավայրեր

27. Կտուց անապատ—Ս. Կարապետի վանք . . 71
28. Ալիւր գիւղի Ս. Աստուածածին վանք . . . 73
29. Ս. Էջմիածին վանք 74
30. Էրերնայ Ս. Սահակ 75
31 Լիմ անապատ—Ս. Գէորգայ վանք . . . 76
32. Ջանկայ Ս. Աստուածածին—Միրաք . . . 78
33. Տէր Յուսկան որդւոյ վանք 81
34. Արջակու Ս. Աստուածածին վանք . . . 83
35. Պախեզկայ Թուխ-մանուկ 85
36. Աւերակայ ծաղիկ աւետարան . . . . »

Վասպուրականի Քաջբերունեաց—Արճէշ—գաւառում եղած սրբավայրեր

37. Ականից Ս. Գէորգ 86
38. Արծուեաբեր վանք 89
39. Մեծոփայ վանք 91
40. Գանձակայ Կենարեր վանք. 93
41. Առջենից-Առաջուց վանք 94
42. Աքանչելագործ վանք (Բզնունեաց գաւառում) . . 95

Վան քաղաքի հարաւակողմն—Հին Երուանդ—«ունիք» կամ Հայոց-Զոր գաւառում եղած սրբավայրեր

43. Վարդ-Պատրիկի մատուռն. 97
44. Անգղայ Ս. Աստուածածին վանք. . . . 98
45. Էրէմերու Ս. Աստուածածին վանք . . . 100
46. Խէքայ—Հայկայ վանք 101
47. Աստվմեանց Զօրավարաց վանք 102
48. Հոգւոց վանք (Անձաւացեաց գաւառում) . . 104

Վանայ հարաւ-արեւմտեան կողմ Ռշտունեաց (Գաւառ) գաւառումն եղած սրբավայրեր

49. Սիվոկու կամ սպիտակ վանք 109
50. Զաղար կամ Զարահան Ս. Նշանի վանք . . 110
51. Իլու քառասուն խորան 113
52. Աղթամարու կղզին Ս. Խաչի 116

Թիւ վանքերէն *Երես*

53. Առ-Տէր 121
54. Լուսաստուղ Ս. Սահակայ վանք 123
55. Կապուտ—Կողայ Ս. Յակոբայ 124
56 Նարեկայ Ս. Գրիգորի վանք 125
57. Աղօթավայր Գրիգորի Նարեկացւոյ . . . 127
58. Պաղվանից· վանք 129
59. Գանձակայ Ս. Կարապետի վանք 130

Վասպուրականի հարաւակողմ Մոզաց գաւառումն եղած Սրբավայրեր

60. Փութիկու կամ Փոթորիկ Ս. Գէորգայ վանք . . 131
61. Մոզաց Ամենափրկիչ վանք 133
62. Ապարանից կամ Մամուտանից Ս. Խաչ . . . 139

Հին-Հիզան գաւառում եղած Սրբավայրեր

63. Հիզանու Ս. Խաչ վանք 137
64. Հինգ խորան 139
65. Հէգուայ—Հայկայ—վանք . . . . . »
66. Բարակաձորոյ 140

Վանայ հարաւակողմն Շատախ գաւառում եղած Սրբավայրեր·

67. Ստեփաննոս եկեղեցի 143
68. Սօգվանից Ս. Խաչ վանք 145
69. Ծաղկավանք . . . . . »
70. Քրմանից Ս. Խաչ վանք 146

Վասպուրականի հարաւ-արեւմուտք Սպակերտ գաւառում եղած Սրբավայրեր

71. Ամենասուրբ Երրորդութեան վանք . . . 151
72. Կեղտու Ս. Կիրակոսի 152
73. Բազնից—Բազէից Ս. Աստուածածին . . . »
74. Սրբոյ վանք . . . . . »
75. Շիրնից Սկաւառակ վանք 153
76. Բարդուղիմէոս Առաքելոյ վանք—Աղրակ գաւառում . 154
76. Վերջաբան 159

Իմ աշխատասիրած ԳՐՔԵՐԻՑ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	ԳԻՆՆ Ր. Կ.
1) «ՎԱՆԱՅ ՍԱՋ» Առաջին մաս. Հաւաքածոյ Վասպուրականի ժողովրդական երգերի, հէքիաթների, առածների հանելուկների, ջան-զիւլումների եւ այլն	75
2) «ՎԱՆԱՅ ՍԱՋ» երկրորդ մաս՝ նոյն բովանդակութեամբ	»
3) «ՍՐՏԻ ԹԱՐԳՄԱՆ» բանաստեղծութիւններ. սպառուած	50
4) «ՍՐԲԱՎԱՅՐԵՐ» տեղագրութիւն Վասպուրականի Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, Վանօրէից եւ ուսումնարանաց.	40

ՏՊԱԳՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏ Է

«ՄՈՒՍՅԻԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ», Մոկք եւ Շատախ, տեղագրական-ազգագրական նիւթեր:

Յանկացողներից խնդրեմ դիմել Թիֆլիզ Կուկի—Թանդոյեան Եկեղեցին հեռեւեալ հասցէով Г. Шереицу.

ՀՀ Ազգային գրադարան
NL0160161

2958